

ՈՍԿԵ ԴԻՎԱՆ

ՀԵՔԻԱԹԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ՊՐԱԿ 3 • 2011



Պիլպուլ Հազարի, կանաչ զրնտարի,
զաստըված օր կսիրես՝ էլի ու արի:
Պիլպուլ Հազարու Հեքիաթ, Տարոն

Իմ ականջս է Հասեր, ով բարեբանյալ և
բարեկրթյալ թագավոր (պատմում է
Հաշրազադա թագուհին իր ամուսին
Հաշրիար թագավորին), որ Հին
Ժամանակներում, վաղուց անցած
օրերում Պարսկաստանում կենում էր
մի թագավոր՝ անունը Խոսրով-շահ:

որին Մեծ պարգևատուն պարգևել էր Հզորություն, ջաշեղություն ու
գեղեցկություն և որի սրտումը դրել էր
արդարասիրտության այնպիսի զորեղ
զգացումն, որ նրա թագավորության
Ժամանակ ունեւ լազրը միմյանց Հետ
Հաշտ էին ապրում և կողք-կողքի էին
խմում միևնույն վտակից:

Հազարոս Աղայան

Էս աշխարհքում թե մի ճար կա, մի
Հնար կա քո ցավին,
Էն Հազարան ազնիվ Հավքն է, որ դու
շունես ստեղծվին,



Որ երգում է Հազար ձենով, Հազար
ձենով կանչելով,
Հետն է բուրջան, մշտադալար վարդ է
թափում փնջերով:

Հովհ. Թումանյան

Մեխակի բույրով Հովն էր շնջում՝
Հեքիաթներն Հազար ու մի գիշերվա,
Արմավն ու նոճին անուշ քնի մեջ՝
օրորվում էին ճամփեքի վրա:

Ավետիք Իսահակյան

Հովհաննես Թումանյանի թանգարան
Hovhannes Toumanian Museum

ՈՍԿԵ ԴԻՎԱՆ

Հերթաթագիտական հանդես



VOSKÉ DIVAN

Journal of fairy-tale studies

1359

ՀԱՎ ՔՈՒՍՄԱՆՅԱՆԻ ՏԻՆԹԱՆԳԱՐԱՆ
Дом-Музей Ов.неса Туманяна

Պրակ 3 • 2011 • Volume 3

Հանդեսը հրատարակում է Հովհ. Թումանյանի թանգարանի հեքիաթագիտության բաժինը և *Fabula armeniaca* ծրագիրը՝ համագործակցությամբ Երևանի պետական համալսարանի:

Նյութերը տպագրվում են Հովհ. Թումանյանի թանգարանի և ԵՊՀ ռումանագերմանական բանասիրության ֆակուլտետի խորհուրդների երաշխավորությամբ:

Նախագծի հեղինակ և գլխավոր խմբագիր՝ Ալվարդ Զիվանյան

խմբագրական խորհուրդ՝

Նարինե Թուխիկյան

Գոհար Մելիքյան

Կարին Բեկ

Ելենա Կարաբեգովա

Նինա Հայրապետյան

Սոնա Սեֆերյան

Անահիտ Վարդանյան

Նվարդ Վարդանյան

Գիտական խորհրդատու՝
Շապիկի ձևավորումը՝

Սարգիս Հարությունյան
Հակոբ Զիվանյանի
Լուսինե Եղիազարյանի

Editor:

Alvard Jivanyan

Editorial board:

Narine Toukhikian

Gohar Melikian

Karine Bec

Elena Karabegova

Nina Hayrapetian

Sona Seferian

Anahit Vardanian

Nvard Vardanian

Research consultant:

Sargis Harutyunian

Cover design:

Hakob Jivanyan

Lusine Yeghiazaryan

ISSN 1829-1988

Ոսկե դիվանը միջազգային հեքիաթագիտական պարբերական է՝ հրատարակվում է տարեկան մեկ անգամ: Հանդեսն ունի գիտական հոդվածների, ամենամյա գիտա-
ժողովի նյութերի, նոր հրատարակությունների, ցուցահանդեսների, հաղորդումնե-
րի, իրադարձությունների և մատենագիտության բաժիններ: Ուշադրության կենտ-
րոնում հայկական բանահյուսական ու գրական հեքիաթն է, սակայն տպագրվում
են նաև այլ մշակույթներին առնչվող նյութեր: Նյութեր կարելի է ներկայացնել հայե-
րեն, ռուսերեն, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով:

Voské Divan is an international journal of folk and fairy tale studies. It contains the following
divisions: Articles, Annual Conference Proceedings (Toumanian Museum), Minor
Contributions, News, Events (seminars, new publications, fairy tale exhibitions etc), and
Bibliographies. Interest focuses on Armenian narratives; however, materials related to other
cultures are welcome too. Language: Armenian, Russian, English and French.

1359

Հովհ. Թումանյանի և Կ. Պարոնյանի
Ծրագիրը - ԵՊՀ ԲՈՒՄԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ CONTENTS

ԽՄԲԱԴՐԱԿԱՆ	8
EDITORIAL	8

ՀԵՔԻԱԹԱԳԻՏԱԿԱՆ ԵՐՐՈՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԵՔԻԱԹ, ԱՐԵՎԵԼՔԸ ՀԵՔԻԱԹՈՒՄ THE PROCEEDINGS OF THE 3rd FAIRY TALE STUDIES CONFERENCE LE CONTE ORIENTAL: L'ORIENT DANS LES CONTES DE FEES

<i>Թամար Հայրապետյան</i> ԱՐԵՎԵԼՔԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ	10
<i>Tamar Hayrapetyan</i> THE ORIENT IN ARMENIAN FOLKTALES	10
<i>Էսթեր Խեմչյան</i> ԱՐԵՎԵԼՔԻ ՊԱՏՄԱԼԻՊԱԿԱՆ ԿԵՐՊԱՐՆԵՐԸ ՏԱԿՈՒՇԻ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ	25
<i>Esther Khemchyan</i> ORIENTAL HISTORICAL PERSONAGES IN THE FOLKLORE OF TAVUSH	25
<i>Нелли Хачатурян</i> ВОСТОК И ЗАПАД В РУССКОМ СКАЗОЧНОМ ФАНТЕЗИИ	36
<i>Nelli Khachaturyan</i> EAST AND WEST IN RUSSIAN FAIRY TALE FANTASY	36
<i>Արմանուշ Կոզմոյան</i> ԹՈՒԹԻ ՆԱՄԵՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՈՐՈՆՈՒՄՆԵՐՈՒՄ	48
<i>Armanush Kozmoyan</i> "TUTI-NAMA" IN SEARCH OF TRUTH	48
<i>Елена Карабегова</i> «ВОСТОЧНЫЕ ЦИКЛЫ» В СКАЗОЧНОМ ТВОРЧЕСТВЕ В. ГАУФА	52
<i>Elena Karabegova</i> ORIENTAL CYCLES OF WILHELM HAUFF	52
<i>Нина Айрапетян</i> ТЕМА ПРАВИТЕЛЯ И ВЛАСТИ В АРАБСКОЙ СКАЗКЕ У. БЕКФОРДА «ВАТЕК»	59
<i>Nina Hayrapetyan</i> THE THEME OF THE RULER AND POWER IN BECKFORD'S ARABIAN TALE "VATHEK"	59
<i>Եվա Ջազարյան</i> ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՔԻԱԹԻ ԴԵՐՎԻՇԸ	64
<i>Eva Zaqaryan</i> THE DERVISH IN ARMENIAN FOLK TALES	64
<i>Սվետլանա Վարդանյան</i> ԽՈՍԹԻ ԱՐՏԱՀԱՅՏՉԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՔԻԱԹԻ ԺԱՆՐՈՒՄ	71
<i>Svetlana Vardanian</i> THE EXPRESSIVENESS OF SPEECH IN THE FAIRY TALE GENRE	71

<i>Արմեն Սարգսյան</i> ԱՐԵՎԵԼԻՔԻ ԶՎԱՐՃԱԽՈՍ ԽՈՋԱ ՆԱՍՐԵԴԴԻՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԴԱՌՈՒՄՆԵՐՈՒՄ	78
<i>Armen Sargsyan</i> THE SATIRICAL FIGURE HODJA NASREDDIN IN ARMENIAN RECORDS	78

<i>Նվարդ Վարդանյան</i> ՉԻՆԱՍՏԱՆԸ ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ	84
<i>Nvard Vardanyan</i> CHINA AS A FABULOUS LAND IN ARMENIAN FAIRY TALES	84

<i>Наталья Арутюнян</i> О ПРЕЛОМЛЕНИИ ОБРАЗОВ ВОСТОЧНЫХ СКАЗОК И ЛЕГЕНД В ЕВРОПЕЙСКОМ И АРМЯНСКОМ МУЗЫКАЛЬНОМ ТЕАТРЕ	91
<i>Natalie Harutyunyan</i> INTERPRETING IMAGES OF ANCIENT ORIENTAL TALES AND LEGENDS IN EUROPEAN AND ARMENIAN MUSIC THEATRE	91

<i>Դիանա Բուժոյան</i> СИНТЕЗ МОТИВОВ ВОСТОЧНОЙ И ЗАПАДНОЙ МИФОЛОГИИ В ОБРАЗЕ МАУГЛИ В «КНИГАХ ДЖУНГЛЕЙ» Р. КИПЛИНГА	114
<i>Diana Budoyan</i> SYNTHESIS OF EASTERN AND WESTERN MYTHOLOGY MOTIFS IN KIPLING'S "JUNGLE BOOKS"	114

<i>Տաթևիկ Հովհաննիսյան</i> ՇԵՔՍՊԻՐԻ «ՕԹԵԼԼՈՅԻ» ԵՎ «ԿԱՊՈՒՅՏ ՄՈՐՈՒՔԸ» ՇԱՐՔԻ ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ՄԻՋՏԵՔՍՏԱՅԻՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ	121
<i>Tatevik Hovhannisyanyan</i> SHAKESPEARE'S "OTHELLO" AND TALES OF THE BLUEBEARD CYCLE: ASPECTS OF INTERTEXTUALITY	121

<i>Հասմիկ Մկրտչյան</i> «ԴՆՆՁԵ ՔԱՂԱՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ	132
<i>Hasmik Mkertchyan</i> ARABIAN AND ARMENIAN VERSIONS OF "THE TALE OF THE CITY OF BRASS"	132

<i>Հասմիկ Միմոնյան</i> «ԴՆՆՁԵ ՔԱՂԱՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ԿԱՅԱՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ	142
<i>Hasmik Simonyan</i> ON THE VERSES OF "THE TALE OF THE CITY OF BRASS"	142

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴԿԱԾՆԵՐ RESEARCH ARTICLES

<i>Jack Haney</i> ON SOME VERY LONG RUSSIAN FOLKTALES	155
<i>Ջեյկ Հեյնի</i> ՌՈՒՍԱԿԱՆ «ԵՐԿԱՐ» ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ՇՈՒՐՋ	155
<i>Maxim Fomin</i> THE LAND ACQUISITION MOTIF IN THE IRISH AND RUSSIAN FOLKLORE TRADITIONS	162

<i>Մարգիմ Զոսիկին</i> ՀՈՂԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ԴԻՊԵՇԱՐԸ ԻՌԼԱՆԴԱԿԱՆ ԵՎ ՌՈՒՍԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	162
--	-----

<i>Լուսինե Հայրիյան</i> ԱՆԴԵՐՍԵՆԻ ՀԵՔԻԱԹՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆԻ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ԴԻՏԱԿԵՏՈՒՄ	192
---	-----

<i>Lusine Hayriyan</i> ANDERSEN'S TALES AND THEIR ARMENIAN RENDERINGS AS SEEN BY GHAZAROS AGHAYAN	192
--	-----

ՄԱՏԵՆԱԴԻՏԱԿԱՆ	199
BIBLIOGRAPHIES	199

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ	208
LIST OF ABBREVIATIONS	208

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ	210
CONTENTS OF THE PREVIOUS ISSUES	210

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Արևելյան հեքիաթն ընդգրկում, նաև վիճելի եզր է: Սակայն ինչպիսի իմաստ էլ վերագրվի վերջինիս, հայկական համատեքստում այն կարևորվում է մի քանի նկատառումներով:

Հայկական հեքիաթն ունի նաև արևելյան կիսադեմ. մեր դիվանխանայում դարերով հանգրվանել է մի հրաշալի Արևելք՝ տարաշխարհիկ Չինոմաչին ու Հնդույամանը, մեր զրույցներում հպարտ ճեմում է տարագիր Սինամահավը: Երկնքից վայր ընկնող երեք խնձորները ևս արևելյան բույր ունեն, սակայն, ազգային հեքիաթների ավարտին գրեթե անխափան հայտնվելով և բյուրավոր գեղեցիկ տարբերակներ ճյուղարձակելով, օծվել են իբրև տոհմիկ հայկական ֆաբուլայի եռապտուղ խորհուրդ:

Հայկական հեքիաթը հաճախ ներկայանում է եվրոպացի ընթերցողին որպես արևելյան զրույց: Այսպես, Էնդրյու Լենգի՝ հեքիաթների հայտնի ժողովածուի մեջ հայկական հեքիաթները զետեղված են «Չիթագույն հատորյակում», որտեղ նրանց վերագրվում է արևելյան փիլիսոփայություն, իսկ հեքիաթները զարդարող գողտրիկ պատկերներում հայ թագաժառանգների գլուխները պսակված են կարմիր-կոկիկ չալմաներով: Ֆրանսիացի ընթերցողին հայկական հրաշավեպը ներկայացված է *Արևելքի մարգարիտներ (Les Joyaux de L'Orient)* մատենաշարում:

Առանձնահատուկ է հայ մտավորականի դերը արևելյան հեքիաթի բացահայտման մեջ: Հայազգի ժողովի Շարլ Մարդրյուսը «Հազար ու մեկ գիշեր» ժողովածուն թարգմանում է արաբերենից ֆրանսերեն՝ ազատելով տեքստը նախորդ թարգմանությունների պայմանականություններից և համեմելով այն թունդ էրոտիզմով: Մարդրյուսի թարգմանությամբ հիացել են Բորիսեն ու Վարգաս Լյուսան: Բլասկո Իրանյեսը Մարդրյուսի տեքստը թարգմանել է իսպաներեն, Փոյս Մեդերզը՝ անգլերեն:

Մարդրյուսի թարգմանությունից ոգեշնչված՝ նորաձևության արքա Պոլ Պուարեն ստեղծում է արևելյան-հեքիաթային անգուգական հավաքածու, որից և սկիզբ է առնում արևելապաշտության հաղթական երթը բարձր նորաձևություն...

Արևելքը արևմտյան հեքիաթում գրական հրապուրանք է, գեղագիտական պատրանք: Հայկական հեքիաթի համար արևելքը տևական մշակութային առնչություն է՝ կրքոտ, հաճախ վտանգավոր գրկախառնություն, որի թովքից հայկական հեքիաթի պահնորդ ոգին միշտ ազատվել ու իր սուրբ աշխարհն է դարձել հրեղեն ականջն ու հինավուրց միտքը՝ լի հրաշալուր զրույցների չքնաղ պատառիկներով: Վերադարձել է՝ գերեվարելով անտես, անմարմին հուրի-փարիներ, դե ու դերվիշ, պահպանելով ազգային հեքիաթի զորավոր լեզուն, զուսպ ու վայելուչ ոճը՝ երբևէ չուրանալով մեր մամիկների անգիր մատյանի խնկարույր տիտղոսը՝ Պառավաշունչը:

Ալվարո Զիվանյան

ՀԵՔԻԱԹԱԳԻՏԱԿԱՆ ԵՐՐՈՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԸ
ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԵՔԻԱԹ. ԱՐԵՎԵԼՔԸ ՀԵՔԻԱԹՈՒՄ
Հովհ. Թումանյանի թանգարան, 30-31 մարտի, 2011 թ.

THE PROCEEDINGS OF THE 3rd FAIRY TALE STUDIES CONFERENCE
LE CONTE ORIENTAL: L'ORIENT DANS LES CONTES DE FEES
Hovhannes Toumanian Museum, Yerevan, 30-31 March 2011

Թամար Հայրապետյան

ԱՐԵՎԵԼՔԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ
(առևտրատնտեսական և պատմամշակութային
փոխառնչությունների շուրջ)

Արևելյան մարդը, անկախ հասարակության մեջ գրաված դիրքից, առավելագույնս պարտավորված է պահպանելու նախնիների ավանդույթները, ծեսերը, սովորույթներն ու հավատալիքները, որոնց շուրջն էլ հյուսվում են հեքիաթները:

Գտնվելով Պատմական Հայաստանի աշխարհագրական դիրքով պայմանավորված միջազգային տարանցիկ առևտրի կենտրոնում՝ հայերը ծանոթացել են Արևելքին և սկսել իրենց համար քաջահայտել այդ հեքիաթային աշխարհի գաղտնիքները, նրա մշակույթն ու կենսակերպը:

Հայկական հեքիաթներում և միջնադարյան մատենագրության մեջ կենցաղավարում են Արևելյան երկրների հետ փոխառնչությունների բազում մանրամասներ՝ ծովային և քարավանային առևտուր, ապրանքափոխանակություն, կնիք, դրամական շրջանառություն և այլն: Հազարան բլբուլ, Սինամահավթ (չինական թռչուն), անմահական ջուր ու խնձոր և չնաշխարհիկ (Չինաց աշխարհից) գեղեցկուհիներ որոնող մեր հեքիաթների հերոսները հաճախ հայտնվում են օտար, այնպիսի միջավայրում, որտեղ աշխարհներում Չինամաչինում (Չինումաչինում), Հնդու երկրում, Արաբստանում և անգամ խորհրդանշական Պղնձե քաղաքում ու Քաջանց երկրում: Դրան համարժեք է չնաշխարհիկ բառի՝ Չին աշխարհից, այսինքն՝ հեռավոր, արտասովոր աշխարհից մեկնությունը:

Արևելյան պատկերացումների հիմքով ստեղծված հայկական հեքիաթներում առանցքային դեր է կատարում Հայաստանից արտահանվող և դրսից ներմուծվող ապրանքների տեսականին: Չինաստանից բերվող մետաքսի ու խեցեղենի փոխարեն Հայաստանից արտահանվում էր արհեստագործական արտադրանք՝ մետաղե գործիքներ, ոսկյա և արծաթյա իրեր, պղնձյա ամանեղեն, զենքեր ու զրահներ, բրդե գործվածքներ, որոնք արտադրվում էին Հայաստանի քաղաքների «գործոց տներում» (Ստեփանոս Սյունեցի 1861, 180, ՀԺՊ 1971, 810-813):

Տուրուքերան-Մուշից գրառված «Մարգիս», «Ձկան փորո թաս», «Ակոր» և Կարճկան-Գոմսից գրառված «Դերվիշներն ու տղան» հեքիաթներում (ՀԺՀ XII 1984, 47-53, 449-454, ՀԺՀ XIII 1985, 276-281, ԲԱ ԲԱ IV, 2467-2516) չնաշխարհիկ թասերն այնքան անձեռակերտ են, որ նրանց գեղեցկությունից հերոսներն ուշաթափվում են կամ գինովանում, իսկ Շիրակից գրառված «Հաբրմանի» (ՀԺՀ IV 1963, 15-26) հեքիաթում այնպիսի միջավայրում աշխարհում հայտնված հերոսի՝ սիրուց վառվող մարմինը փորձում են հանգստացնել հմայական գաղտնիքալի պարունակող ճենապակե ծիսական գյուղում (սկահակ) մեջ լցված ջրով:

Գործնական շփումներին, առևտրական և մշակութային կապերի հաստատմանը մասնակցում էին «Մետաքսի ճանապարհի»՝ մերձավորությամբ ապրող

1 «Մետաքսի ճանապարհը» սկսել է գործել մ.թ.ա. 2-րդ դարի կեսերին, երբ սկսվեցին

ժողովուրդները և այդ ճանապարհի երկայնքով տեղաբաշխված հայկական քաղաքները՝ Արտաշատը¹, Դվինը, Անին, Արծնը, Կարսը և այլն: Հայաստանը «Մետաքսի ճանապարհով» կապվում էր Սև և Միջերկրական ծովերի ավազանների նավահանգիստների հետ, դրանց վրայով առևտրական գործարքներ էր կատարում Իրանում, Միջագետքում, Եգիպտոսում, Հնդկաստանում և Չինաստանում: Առևտրական քարավանները Հայաստան էին բերում չինական ու միջինասիական մետաքսե գործվածքներ, հնդկական անուշահոտ յուղեր, համեմունքներ ու թանկագին քարեր: Հռոմա-պարթևական առևտրական կապերն ըստ Մտրաբոնի վերելք են ապրում Հայաստանի շուրջիվ, ինչպես նաև Պոնտական Կոմանա քաղաքի քարգավաճումը կապված էր Հայաստանից բերվող ապրանքների առևտրի հետ (Տրաբոն 1964: 5-8, 3-36):

Հայտնի է, որ մոնղոլական հրոսակների կողմից Չինաստանի հյուսիսային շրջաններ թշված հազարավոր տարագիրները, որոնք գուցե Չարմաղանի կամ Բաթուի տարած հայազգի զինվորներից էին, նույնպես զբաղվում էին առևտրով (Աբրահամյան 1967, 327):

Հայկական «Քյոսի, Թոփալի ու Քոռի նաղլը» (ՀԺՀ I 1959, 507-511), «Մեղի հրեշտակը» (ՀԺՀ II 1959, 243-253), «Ավճի Շաբուի տղեն» (ՀԺՀ IV 1963, 27-45), «Միմոն կուպեցին հեքիաթը» (Նույն տեղում, 319-329), «Մաջրում խոջի հեքիաթը» (Նույն տեղում, 105-117), «Ժմաստուն քուռագի հեքիաթը» (Նույն տեղում, 139-148), «Երեք դարդատեր» (ՀԺՀ VIII 1977, 532-547), «Առջի տղա» (Նույն տեղում, 790-794) և այլ հեքիաթներում հերոսներն առևտուր են անում, բախտ կամ ճշմարտություն որոնում Սպահանում, Հալեպում, Թեհրանում, Հնդու երկրում, Չին-Մաչինում, Բաղդատում, Սինամ (Չինաց) թագավորի երկրում և այլուր: «Մեղի հրեշտակը» (ՀԺՀ II 1959, 243-253) հեքիաթում թագավորն իր որդիներից յուրաքանչյուրին «իրեք հարիր մանեթ» է տալիս ու պատվիրում, որ առևտուր անեն, «բալի խելոքանում, մարդ են դառնում» (Նույն տեղում, 243): Մեծ ու միջնեկ տղաները փողերը «բազարում», քամուն են տալիս, «իրիկունը լափ դատարկ» գալիս տուն: Իսկ թագավորի պուճուր տղան «իրեք հարիր մանեթով» փակում է ծեծվող մեռելի պարտքերը, տերտեր է կանչում և իր ծախսով թաղում նրան: Երեկոյան նա դատարկ վերադառնում է տուն ու հորը պատմում իր արարքի մասին: Թագավորն ուրախանում է, հրամայում, որ իր գանձարանից մի գոգ ոսկի բերեն տղայի համար: «-Որդի,- ասում ա,- գնա ուրիշ երկիր ապրանք առ բե՛ ըստե՛ ծախա, աղպորտանց միջին բալի էլի դու իմ էրեսը պարզ անես» (Նույն տեղում, 246): Եվ այսպես հայկական հեքիաթների հերոսները օրերով, շաբաթներով, ամսով ճանապարհ են գնում, օտար քաղաքների «քարվանսարում վե գալի, օթախ քրեհում, կենում, իրանց առուտուրի հեննա ըլնում» (Նույն տեղում, 249): «Հարամբաշու հեքիաթում» (ՀԺՀ II 1959, 368-376), «Միմոն կուպեցին հեքիաթում» (ՀԺՀ IV 1963, 319-329) վաճառականները, հասնելով օտար երկրի, գնում են թագավորին տեսության և թույլությունն են խնդրում նրա երկրում առևտուր անելու համար: «Թագավորն ապրած կենա, մենք այսինչ բազրկյաններն ենք,

առևտրատնտեսական և մշակութային հարաբերություններ հաստատվել այս ժամանակի երկու խոշոր քաղաքակրթությունների՝ Հռոմեական և Հանի (Չինական) կայսրությունների միջև: Հենց այս ժամանակաշրջանում սկսեցին կապեր հաստատվել նաև Առաջավոր Ասիայի երկրների և Կենտրոնական Ասիայի ու Չինաստանի միջև (Մարտիրոս 1998 : 3):

1 Հայաստանի անդրանիկ մայրաքաղաք Արտաշատը, Պուտաբոսի վկայությամբ, մ.թ.ա. I դարում ունեցել է առևտրատնտեսական լայն շառավիղ և կարևոր նշանակություն (Մանուսի 1954 : 53-54):

բերել ենք մեր ապրանքը էս քաղաքը սաղացնենք, թե իրավունք կա՝ ծախենք, թե իրավունք չկա՝ էթանք ուրիշ քաղաք:

Ասեց. – Որքի, իրավունք ունեք, բազրկյանների ապրանքը քաղաքներումը կառաջանա:

Բերեց թագավորը իրա նորարը դրեց դրանց հետ, որ օրտի» (ՀժՀ I 1959, 372):

«Մեռլի հրեշտակը» (ՀժՀ II 1959, 243–253) հեքիաթում թագավորի որդին մեծարժեք նվերներով գնում է օտար երկրի թագավորի մոտ, գլուխ տալիս ու ներկայանում. «–Ֆլան երկրիցը, ֆլան թագավորի տղեն եմ, – ասում ա, – էկել եմ ապրանքի: – Ասում ա ու բերած փեշքաշները հանում, դնում թագավորի աղաքը» (Նույն տեղում, 249): Իսկ վերադառնալիս նույնպես «գալիս են, գալի, շատն ու քիչն աստոծ գիտա, մի օր, էրկու օր, իրեք օր, մի շաբաթ, էրկու շաբաթ, իրեք շաբաթ, մախլասի՝ մի ամիս...» (Նույն տեղում, 251):

Մետաքսը Չինաստանից Հայաստան և Արևմուտք տեղափոխելը ապահովում էր մեծ կարողություն: «Տակավին մ.թ.ա. 124թ. փաստեր են արձանագրված Հայաստան ներմուծված չինական մետաքսի վերաբերյալ» (Ժամկոչյան 1981, 97): Այս կապերը շարունակվեցին նաև միջնադարում, ընդհուպ մինչև XVII–XVIII դարերը (Креветова 1940: 346–350): Քարավանները ճանապարհվում և մետաքսի բեռով ետ էին վերադառնում երկու տարվա ընթացքում. «Քարավանապետերը միշտ հայեր էին լինում: Արևելքն ու Արևմուտքը հեղեղող բեռնափոխադրումը կենտրոնացված էր Ջուղայի վաճառականների ձեռքում» (Бродель 1988:146): Օտար երկրներ առևտրի գնալիս հայկական հեքիաթի հերոսները «աստու անումը տալիս են, ընկնում ճամփա» (ՀժՀ I 1959, 507, ՀժՀ II 1959, 247): Երկարատև այդ ճամփորդությունը թեև ապահովագրված չէր կյանքի համար վտանգավոր փորձություններից, սակայն գայթակղիչ էր եկամտաբերության առումով: «Միսալ կլինեք կարծել, որ Հայաստանը միայն միջազգային տարանցիկ առևտրի կամրջի դեր էր կատարում» (ՀժԳ 1971, 81): Նա արտաքին այդ առևտրին մասնակցում էր նաև սեփական արտադրանքով: Հայաստանում դեռ հնագույն ժամանակներից արհեստները լայն տարածում էին գտել: Երկրի ներքին առևտրին համընթաց աշխուժանում էր հատկապես արտաքին առևտուրը: Ընդարձակ առևտրի պահանջներից ելնելով՝ Տիգրան Մեծի և Արտավազդ 2-րդի օրոք դրամ է կտրվում: Հայաստանից արտահանվում էր հացահատիկ, ձիեր, ջորիներ, աղ, գինի, երկաթ, կապար, պղինձ, անագ, ներկեր (որդան կարմիր), կաշի, բուրդ, Վանա լճի աղ դրած տառեխ ձուկը, գորգեր, անտառանյութ (փայտ), կաշվեղեն (ՀժԳ 1971, 810–811, Արքահամյան 1946, 75): Հիշատակվում է նաև Հայաստանի գինին, որը արտահանվում էր գլխավորապես Միջագետքի քաղաքները: Ըստ հայտնի հույն պատմիչ Հերոդոտոսի՝ հայկական գինին Եփրատի հոսանքով հասցնում էին մինչև Բաբելոն (Հերոդոտոս 1986, 80–81):

«Ավճի Շաբուի տղեն» (ՀժՀ IV 1963, 27–45), «Որսորդ Հայրապետ» (ՀժՀ XVI 2009, 397–408) հեքիաթներում թագավորը պահանջում է, որ որսորդ Շաբուի որդին իր համար բերի այնքան փղի ոսկոր (տարբերակ՝ առամ), (ՀժՀ XVI 2009, 398), որ դրանցով պալատ կառուցվի: Որսորդի տղան հորեղբոր խորհրդով թագավորից պահանջում է քառասուն ուղտ, քառասուն մեծ ջվալ բամբակ, քառասուն տիկ գինի, քառասուն մսագործ՝ համապատասխան գործիքներով. «Էս քյարվանն ընկավ ճամբա գնաց, շատ գնաց, քիչ գնաց, շատն ու քիչն աստված գիտե, գոր գնաց, գիշեր գնաց, տեյմորի հասավ Հնդու երկիրը» (ՀժՀ IV 1963, 31):

Որսորդի տղան Հնդկաստանում քառասուն ջրավազանի ջրերը միանգամից թափել է տալիս, բամբակով լողավազանի անցքերը փակում և Հայաստանից

բերված քառասուն տիկ գինով հարբեցնում «Հնդու երկրի» քառասուն փղերին. «Էհ, գինի ու անսովոր անասուն, քիրադի էն սիաթին հարբան ու խաշըլ խոտի պես վար թափան» (Նույն տեղում, 32), իսկ «ղասպները էս քառասուն ֆլին էլ մորթեցին, բերթեցին, ոսկորները բիրադի մսեն բաժնեցին, լցրին բեռներու մեջը, բարձան ու էլի ետ դարձան գնացին: Գնացին հասան իրանց երկիրը: Տղեն տարավ բեռները թասլիմ էրավ թագավորին» (Նույն տեղում):

«Սումբաթի հեքիաթում» (ՀժՀ II 1959, 525–533) հարուստ վաճառական Սումբաթի հոր քառասուն չրաղները (ապրանքն անվտանգ երկրներ կիր տեղափոխող ծառայողները) Սումբաթից պահանջում են, որ իր հանգուցյալ հոր պես իրենց աշխատանքով ապահովի: Սումբաթը չի ուզում «դուքանի» դուռը փակել, գեղեցկուհի կնոջը տանը թողնել և «չրաղների» հետ աշխարհեաշխարհի ման գալով՝ առևտուր անել: Նա աշխատանքի դիմաց «չրաղներին» ապրուստի փող է առաջարկում՝ յուրաքանչյուրին հինգ հարյուր, իսկ հետո՝ հազար մանեք: «Չրաղները» չեն համաձայնվում պատճառաբանելով.

«–Ախար չէ՛ նաղդ փող ա, կտանենք, կփչացնենք, կմանք քո մոտին ամբողջ» (Նույն տեղում, 526): Հեքիաթի շարունակության մեջ տեսնում ենք, որ առևտրական հարաբերությունների ծավալման շնորհիվ պարզ ապրանքափոխանակությանը զուգահեռ նկատելի է դառնում նաև դրամական շրջանառությունը: Առևտրատնտեսական կյանքում մեծանում է փողի դերը: Վերոհիշյալ հեքիաթում վաճառականի կինը հավատացած է, որ «Փողը փող կաշխատի»¹ (Ղանալանյան 1960, 248) և ամուսնուն խորհուրդ է տալիս փողի փոխարեն «չրաղներին» գործ տալ, որպեսզի փողը գործի մեջ դրվի և եկամուտ բերի. «Կնիկն ասում ա. – Դրուստ են ասում, նաղդ փողը կտանեն, կփչացնեն, գործ տու՛, գործ» (ՀժՀ II 1959, 526): Կնոջ խորհրդով՝ Սումբաթը «չրաղներին» պատվիրում է քառասուն եզ առնեն, ապրանք առնեն, «էթան խրիդ անելու» (առևտուր անելու): Սակայն հեքիաթները ուշագրավ տեղեկություններ են պարունակում նաև «խրիդ անելու» բարդ օրենքների, հարստություն կուտակելու մոլուցքով իրար դավելու, չարանենգորեն ուրիշի ունեցվածքին տիրելու «բազրկյանների» խարդախությունների մասին: Նման պարագայում հեքիաթներում, տվյալ դեպքում վերոհիշյալ «Սումբաթի հեքիաթում» կամ «Միմոն կուպեցին հեքիաթում» (ՀժՀ IV 1963, 319–329) սովորաբար թիրախ է դառնում փորձի պակաս ունեցող վաճառականի միայնակ մնացած կինը, ով հանիրավի զրպարտվում է նենգ վաճառականի կողմից: Բազմափորձ մի «բազրկյան» իր վրանն է խփում Սումբաթի վրանի հարևանությանը և «չրաղների» միջոցով նրան կանչում է իր մոտ. «Էս բազրկյանը խամ ա, օրենքով մեզ պտի կանչեր դոնաղ, ինքը մեզանից առաց էր էկե. հմի բան չի ասե, գնացեք իրան կանչեք՝ գա, մի քիչ խոսանք» (Նույն տեղում): Եվ քանի որ «Առուտուր ընելիս ըպրանքին նիետ հոգի էլ ա ծախվում» (ԱԳԸ 2006, 43), վաճառականը զրպարտում է Սումբաթի կնոջը: Սումբաթը համոզված լինելով կնոջ հավատարմության մեջ գրագ (մարջ) է գալիս՝ պահանջելով ապացույցներ: Գրագը արխայիկ հասարակություններին բնորոշ ծիսական մրցության ձև է, որի միջոցով հեքիաթի հերոս Սումբաթը ինքնահաստատման փորձություններ է հաղթահարում թե՛ իրական–կենցաղային և թե՛ ծիսական մակարդակում:

Վաճառականը Սումբաթին առաջարկում է նարդի խաղալ իրար դեմ. «Քառասուն բեռն իմն ա, քառասուն բեռը քունն ա, քառասուն չրաղ իմն ա, քառասուն՝ քունն ա. թե ես գնացի քու կնկա պատկերը բերեցի, քու քառասուն բեռը, քառասուն չրաղը

1 Մ.Մաշտոցի անվան Մատենադարանի № 102 ձեռագրի հիշատակարանում գրված է Ավետարանի՝ ոսկով, արծաթով, փղոսկրով պատված կազմի մասին:

ինձ, դու էլ ինձ նորար, թե չըրի, իմ ունեցածը քեզ, ես քեզ նորար» (ՀժՀ II 1959, 527): Ինչպես կյանքում, հեքիաթում նույնպես զառ գցելը, խաբելն ու խորամանկելը իրենց հերթին դառնում են մրցության թեմա և խաղային ձև: «Խարդախը ձևացնում է, թե հետևում է խաղի կանոններին և մասնակցում է խաղին մինչև բռնվելը» (Հայգինգս 2007, 79): Հետաքրքիր է նկատել, որ «դեռևս XVII դարում ժամկետային առևտրային գործարքները հայտնի էին «գրագներ» անունով» (Նույն տեղում, 78–81): Վաճառականը կեղծ փաստերով Սումբաթին թյուրիմացության մեջ է գցում, գրագը շահում և ունեզրկում:

Սումբաթի կինը հարցուփորձ անելով հասնում է Թեհրան, իր խելքով ու հնարամտությամբ պատժում խարդախ վաճառականին, բացահայտում ճշմարտությունը, փրկում ամուսնուն և վերջինիս ունեցվածքը. «Մի էրկու օրից եղբ Սումբաթը թագա ապրանքը առած էկավ իրա դուքանի առաջին վեր ածեց, ասեց. – Էթամ, տուն դիպչեմ, գամ, դուք տեղավորեք» (ՀժՀ II 1959, 532): Քարավանները Հնդկաստանից Հայաստան էին բերում բրինձ (որից), բամբակ, բամբակի գործվածքներ, հնդկական համեմունքներ՝ պղպեղ, դարչին, թանկագին քարեր և գոհարեղեն՝ մարգարիտ, խնկեղեն, փղոսկր, սև փայտ, ներկող նյութեր (ՀժԳ 1971, 810): Դրսում մեծ պահանջարկ էր վայելում ընկուզենու փայտը: «Քյոսի, Թոփալի և Քոռի նաղլը» (ՀժՀ I 1959, 507–511) հեքիաթը ցուցանշական է հեքիաթի հերոսի ու նրա առևտրական գործերի հետ կապված մանրամասներով: Հեքիաթի հերոսը վաճառականի տղա է, ով հոր մահից հետո հարցուփորձ է անում պարզելու, թե Հալեպում որ ապրանքը բարձր պահանջարկ ունի, իմանում է, որ «շիմշատ փետը շատ թանգ ա ծախվըմ Հալեպումը» (Նույն տեղում, 507): Եվ թեև հայրը պատվիրել էր Հալեպ չգնալ, «տղեն առավ քառասուն դաթրի բեռ շիմշատի փետ, բարցեց, ասառ անըմը տվեց, ընկավ ճամփա» (Նույն տեղում): Աստծո անունով ճամփա ելած մարթը Հալեպ հասնելուն պես հայտնվում է փորձանքի մեջ: Առաջին իսկ իջևանատիրոջ «նոքարները» բեռնաթափում են բազրկյանի որդու քառասուն ջորիներին՝ պատճառաբանելով, թե առավոտյան ճանապարհ ընկնելն ավելի ապահով կլինի: Բեռնաթափման ժամանակ Թոփալը մի բեռ շիմշատ փայտ է գողանում, «կեսը լցնում է օջաղը, կեսն էլ դնում թախտի տակը» (Նույն տեղում): Հետո Քյոսեն, Թոփալն ու Քոռը բազրկյանի տղային հրավիրում են մի կտոր հաց ուտելու և խաբում են, թե. «Մեր քաղաքըմը էտ փետը մուֆթա ա, վառըմ են, ու տարավ շանց տվեց, որ օջաղը լիքն էր, թախտի տակը լիքն էր» (Նույն տեղում, 508): Իսկ հետո իբր ասխատում են, որ էդ խեղճ մարթը անտեղի «ահագին ծախս ա քաշել, ահագին քրեհ ա տվել», ոնց որ «աղը բարցել ա՝ տանըմ ա Կողբըմն ա ծախըմ» (Նույն տեղում, 508): Բազրկյանի որդին Հալեպի խանութներից մեկում ծանոթանում է մի «դուքանչի հալիվորի» հետ և իմանում, որ Հալեպում Հայաստանից բերված շիմշատ փայտը շատ թանկ արժե, «մախալը կաժենա հինգ մանեթ», իսկ ինքը Քյոսայի, Թոփալի և Քոռի՝ երեք թալանչի ընկերների հերթական գոհն է: Պարտված Քոռ թալանչին տանուտերին բողոքում է, իր մի աչքն է ուզում, որը իբր ժամանակին տվել է բազրկյանի տղային: Բազրկյանի տղան էլ ասում է. «– Շատ լավ. իմ մի հ'աշկն էլ հանեք, Քոռի էն մի հ'աշկն էլ հանեք, դրեք կշեռքը կշեռեք, թե որ բարեբար ըլի, տվեք նրան» (Նույն տեղում, 511): Կունֆիլկտը հանգուցալուծվում է արդարությունն ու առևտուրը մատնանշող կշեռքի՝ թե իրական-նյութական, թե խորհրդանշական գործառնությամբ:

«Որստորդ Հայրապետ» հեքիաթում որպեսզի անգամակ թագավորը որդի ունենա պետք է ամուսնանա Հնդկաստանու թագավորի մարգարտե ատամներով աղջկա հետ, իսկ հրաշքներով լի Հնդկաստանու նրկրից հարսնացուին բերելու համար

հեքիաթի հերոսը նվիրագործվում է՝ անցնելով համապատասխան բոլոր փորձություններով:

Հնուց անտի հայ ծովայինները մեծ համբավ ունեին Հնդկաստանի նավահանգիստներում: «Սուրայի սովդաքյարի որթու հեքիաթում» (ՀժՀ I 1959, 196–208), երբ հերոսները ոչ միայն իրենց երկրի ապրանքները ջորիներին բարձած (դաթըր) տանում են հեռու երկրներ վաճառելու, այլև օտար երկրներից նավով ապրանք են բերում (մի գյամի ապրանքը թափել էր, պըտի ետ դառնար) թագավորի աղջիկը նավավարին խնդրում է, որ իրեն էլ այդ նավով տանի հեռու երկիր. «Ախչիկը նի էլավ գյամին, գնացին: Համա ինչ թավուր ա քշըմ գյամին, դու պըծար» (Նույն տեղում): Նույն «Որստորդ Հայրապետ» հեքիաթում «տղան փրցոց կեմին. տվեց անկինը. տաավերկու ամիս թարմ ծովի վրա մնըց. նե սե, նե քար, նե լեռա կերևա. էրկինը ու ծով կար» (ՀժՀ XVI 2009, 402):

«Ավճի Շաբուի տղեն» (ՀժՀ IV 1963, 27–45) հեքիաթում որդին զարմանում է, թե իր հայրն ինչ մասնագիտություն ուներ, որ այդքան զենք ու զրահ կա տան մի անկյունում. «Էս իմ հերս ինչ զանիաթի էր, որ, – ըսավ մորը, – էսքան սիլլահ կը պահեր»:

– Ավճություն կ'ենեք, – ըսավ մերը:

– Ես էլ, – ըսավ, – ավճություն կ'ենեմ հորս պես» (Նույն տեղում, 28):

Հայաստանի հնագույն զենքերից են եղել նետն ու աղեղը (հեքիաթներում՝ նետ ու անեղ, նետվանեղ), ինչպես նաև պեղածո հարվածող մարտական զենքերը՝ քար նետող պարսատիկները (փիլիկան) (Լաստիվերցի 1971, 61–62), գուրգը (մական) նիզակը (մզրախ), որի փոխարեն հայ պատմիչները հաճախ գործածել են աշտեն կամ գեղարդ բառերը, իսկ Չարսանճագի բարբառով գրառված հեքիաթներում նետի փոխարեն գործածվում է խըշտ բառը: «Գորստ» (ՀժՀ XVI, 2009, 334–352) հեքիաթում «մենձ տղան նետեց. խըշտը գնըց ընկավ լալային դուռը» (Նույն տեղում, 334): «Անմահական խնձոր» (Այրարատ) հեքիաթում թագավորի փոքր տղան «նետուանեղը վե կունի, կէթա խնձորի ծառի տակին դարավու կըաշի» (ՀժՀ II 1959, 24): «Աղբեր տղա և Քառասուն-ծամ Փարի» (ՀժՀ I 1959, 537–551) հեքիաթում թագավորի որդին մորից պահանջում է յոթերորդ՝ փակ օթախի բանալին, բացում է այն և տեսնելով Քառասուն-ծամ Փարու պատկերը՝ ուշաթափվում է: Նա հոր ձիանոցից երկու ընտիր նժույգ է հանում, երկու «նետ ու անեղ» է առնում, ճամփա ընկնում՝ գտնելու նկարում տեսած գեղեցկուհուն: Վերոհիշյալ հեքիաթում Աղբեր տղան դնի հետ մականով կոխվ է անում, գետինը ճղում և անցնում հրաշապատում հեքիաթին բնորոշ բոլոր փորձություններով:

Հայ մատենագրության մեջ (Խորենացի 1981, 194) հիշատակություններ են պահպանվել արիեստի տարբեր ճյուղերով (մանածագործություն, ներկա-րարություն, ոսկերչություն, բրուտագործություն, զինագործություն, դարբնություն) զբաղվող մարդկանց մասին, իսկ ժողովրդական հեքիաթներում տեղեկություններ կան նրանց արտադրանքի վերաբերյալ, որոնց մի մասը առևտրի և փոխանակության միջոցով արտահանվում էր հարևան և հեռավոր երկրներ: Բնորոշ է, որ մ. թ. I–II դարերում հայոց լեզուն հարստանում է «շուկա», «խանութ» և առևտուր բնորոշող այլ ասորական բառերով (ՀժԳ 1971, 813), ինչպես նաև հեքիաթներում հանդիպող «պագար» (բազար), «դուքան» (կուղպակ-կրպակ-կուրբա) բառերով (Նույն տեղում, 508, 525), որոնք վկայում են, որ ինչպես Արևելքում, մեզանում նույնպես քաղաքի հիմնական հատկանիշը շուկան է՝ իր խանութներով:

1 Տե՛ս նաև Թ. Հայրապետյանի անհատական գործուղման նյութեր, (այստե՛տ՝ ԱԳՆ) Արցախ, տետր N 1, 2006, «Փողը փող կը պիրի, թե վեր դադրը գիդես» (ԱԳՆ 2006, 42):

Յուզանշական է, որ արաբ հեղինակների վկայությունները հայերի բարեկեցիկ կյանքի մասին համախոս են հայկական աղբյուրների հետ: «Հայաստանում պատրաստվող բրդե, բամբակե ու մետաքսե զանազան գործվածքների ու կտորների մասին կարևոր տեղեկություններ են հաղորդում արաբական մատենագիրները՝ Իստախրին, Իբն Հաուքալը, Յակուբին, Մասուդին և ուրիշները» (Մանանդյան 1940, 29): Իբն-ի Բատուտան Երզնկայի մասին հայտնում է, որ «այնտեղ կան լավ կարգավորված շուկաներ, այստեղ շինում են գեղեցիկ կերպասներ, որ իր անունով են կոչվում: Նրա մեջ կան պղնձի հանքեր, որով շինում են ամաններ և «բայսուսներ» (աշտանակներ)» (Իբն-ի Բատուտա 1940, 29):

Խոսելով Սմբատ Ա-ի և նրա հոր՝ Աշոտի թագավորության առաջին շրջանի մասին՝ Ստ. Տարննեցին հայտնում է, որ մինչև իսկ իովիվներն ու նախրապանները հազնում էին մետաքսե պատմունքաներ (Մտեփանոս Ասողիկ 1885, 161): «Արտուճ և խաղաղ թագավոր» (ՀժՀ XVI 2009, 372-379) հեքիաթում թագուհին հանդիմանում է անտառում ծխական փորձությունների հաղթահարման փուլում գտնվող, «քարը բարձր դարձրած» իր որդուն և վերջինիս հիշեցնում է իր «դումաշե ընկողինը» (Նույն տեղում, 374):

Գործվածքներն էլ և մասնավորապես մետաքսի արտադրության զարգացածությունը միջնադարյան Հայաստանի քաղաքներում հաստատվում է ինչպես ձեռագիր աղբյուրներով՝ ու մատենագրական վկայություններով (Փարպեցի 1982, 23, Գանձակեցի 1982, 135, Կաղանկատուացի 1983, 61-62), այնպես էլ գործվածքների պեղածո նմուշներով² և բանահյուսական միջավայրում կենցաղավարող հեքիաթներով: Կ. Գանձակեցին գրում է, որ հայ կանայք նուրբ ձեռագործերով զարդարել են իշխանական հագուստները, սուրբ խորանի ծածկոցները, եկեղեցական վարագույրները, որ «ներկված էր պեւ-պեւ ու գույնզգույն, գործված էր քանդակաձև ու նկարված էր պատկերներով» (Գանձակեցի 1982, 157): Միջնադարյան քնարերգության մեջ հաճախ է հիշատակվում «էպրըշում խալու, ոսկիթել տօշակի» և սիրած էակի պարանոցը գրկող նրբահյուս մետաքսի մասին (Մայաթ-Նովա 144-147): «Հելուզակ թագուհին» (ՀժՀ III 1962, 262-273) հեքիաթում աղջիկն իր գլխաշորը տալիս է աղքատ հայիվորին, պատվիրում այն «պագարում» վաճառել՝ ապրանքի գինը սահմանելով «չորս հարիր մանեթ»: Այդ գումարով գնում են տեղաշոր, ուտելիք, հագուստ, մետաքս ու մետաքսե կտոր: «-Էս հարիր մանեթը կտաս յորդան դռչկի. հարիր մանեթն էլ կտաս ապրըշմի (մետաքս), դնայուզի (մետաքսե կտոր)» (Նույն տեղում, 270): Մետաքսե կտորից աղջիկը գլխաշորեր է պատրաստում, իսկ հայիվորը դրանք վաճառում է շուկայում. «Աղջիկը օրական շիքեց լյայլուխ, հայիվորը ծախեց. հա՛ ծախեցին, հարստացան: Բաղաքին մեջ էլ մե մեծ վաճառական էդ խալիվոր դարձավ» (Նույն տեղում): «Քույրը ջիզարով կըլի» (Նույն տեղում, 448-451) հեքիաթում հարուստ

1 Մանանդյանի վկայությունները փաստում են պահպանվել ձեռագրերի կազմերի ներսի կողմից ծածկված մետաքսյա և կտավե աստառներում (Մ. Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետ՝ ՄՄ), ձեռագիր № № 5554, 5555, 5559, 5563, 5591, 5569, 6263 և այլն, որոնք պատկանում են 12-13-րդ դարերին): Անիի երազահանում կողք կողքի հիշատակված են բամբակե, իլիկե, «ձափրան» (ճախարակը), «ապրեշումը» (մետաքս), բուրդը, մազը և կաճը (ՄՄ, ձեռ. № 695, ք. 205բ):

2 1908թ. Տիգրան Հոնենցի տոհմային դամբարանից հանվել է վերջինիս ազգականներից մեկի՝ փոքրիկ իշխանադաստեր հագուստը՝ «մետաքսեայ ամբողջ հագուստ ոսկե բանուածքներով ու մետաքսով, և ոսկով նուրբ հիւսած քոյ, մետաքսեայ ժապավենից գօտի» (Օրբելի 1911, 46):

վաճառականը գնում է ուրիշ քաղաք «խրիդ անելու»: Թագավորը, նրա հարստության մասին լսելով, կանչում է իր մոտ հարցուփորձ անելու. «Ճաշի ժամանակ նա այնպիսի թաշկինակ հանեց, բերանը սրբեց, որ իսկի թագավորը չէր ունենա» (Նույն տեղում, 448):

Հայ ժողովրդական հեքիաթներում պերճանքի ոսկե զարդերը՝ թանկագին քարերով ընդելուզված մատանիները, մանյակները, գինդերը, կախիկները, ապարանջանները իրենց մեջ կրում են ծիսապաշտամունքային հավատալիքների հետքեր: Հաղկահայ արհեստավորության մեջ, մասնավորապես Կալկաթայի հայ համայնքում մեծ թիվ էին կազմում ոսկերիչները, որոնք «այնպիսի համարում ունեին, որ նրանց շատ հաճախ պատվերներ էին տալիս ոչ միայն Հաղկաստանից, այլ նաև Եվրոպայի և Ասիայի զանազան երկրներից» (Աբրահամյան 1967, 260): Հայկական հեքիաթներում թագավորին դիմավորում են ոսկյա սպասքով (ՀժՀ VIII 1977, 66), հերոսները «խառ շորեր» են հագնում, «օսկի մատնիկ», «գինդ», «ապրըջան» կրում կամ «քյամար» կապում (ՀժՀ IX 1968, 261-262): Վերոհիշյալ հեքիաթներում ամենաթանկարժեք զարդերն ու ակնեղենը հաճախ գնահատում են հրեա (ջիուդ) ոսկերիչները, որոնք շատ խորամանկ են և հմուտ առևտրի մեջ (ՀժՀ II 1959, 163): Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ հեքիաթներում առկա հիշողությունները համախոս են պատմական տվյալների հետ (Ծրույն 1988: 146):

«Հարամբաշու հեքիաթում» (ՀժՀ I 1959, 368-376) թագավորի որդին սիրահարվում է վաճառականի քրոջը: Թագավորը պահանջում է, որ աղջկա պատկերը քաշեն ու ուղարկեն իրեն. «Ես թաքավոր եմ, հո չեմ էրթա էս ախլականը տենալու. ես պրտի էն ախլկա պատկերը տենամ իմ տղի լայադին ա, թե չէ» (Նույն տեղում, 374): Վաճառականն անհանգստանում է, թե ինչպես պիտի մի գիշերվա մեջ աղջկա պատկերը հանեն: «Քիրն ասեց. - Ախպեր ջան, դու արխեին կաց, իմ ձեռին դժար չի: Դու գնա դուրանը հինգ ռանգ արքունի թել բեր, կես զագ ել դնավուզ (մետաքսե կտոր), բեր, որ վրին գործեմ» (Նույն տեղում): Քույրը մետաքսե կտորի վրա ոսկե թելերով այնպիսի վարպետությամբ էր ինքն իրեն պատկերել, որ «ինքն էլ մայիլ մնաց իրա ձեռի գործի վրա: Բացի դրանից քիթը շինել ա մի ոսկե խոնչա, մի ոսկե կաքավ, ոսկե ճուտերը հետը ֆռռում են» (Նույն տեղում, 375):

Հանիրավի պատուհասված իրենց նշանածներին գտնելու նպատակով հայկական հեքիաթների հերոսուհիները թագավորից պահանջում են ոսկուց պատրաստված զարմանահրաշ առարկաներ, «ոսկե սինի», որի մեջ «ոսկե թագի, ոսկե աղվես (տարբերակներում՝ կատու և մուկ, (ՀժՀ V 1966, 25) աքլոր և կաքավ, (ՀժՀ IV 1963, 251) «օսկի հավ՝ օսկի կուտ հ'առեց» (ՀժՀ IX 1968, 27) և այլն), որ թագին աղվեսի եննուցը վազելիս ըլնի» (ՀժՀ II 1959, 35): Տուրուբերան-Մուշից գրառված «Քաջուկն» (ՀժՀ XII 1984, 582-591) հեքիաթի ոսկերչից թագավորը պահանջում է այնպիսի թուր պատրաստել, որ արևի պես շողողա. «Հըմալ թուր մը կուզին հ'իսնե, օր արևու պես փեղ իտա» (Նույն տեղում, 586):

Մ. Խորենացին Արտաշես արքայի իտղարկավորության մասին հայտնում է. «...Նրա դազաղը, ասում է, ոսկեղեն էր, գաիր և անկողինը բեհեզից և մարմինը պատող պատմունքանը ոսկեթել, գլուխը թագ դրած, ոսկյա զենքն առջևը» (Խորենացի 1981, 229): «Արտաշատում և Դվինում առևտրի և փոխանակման կարևորագույն ապրանքը շարունակում էր մնալ մետաքսը և մետաքսից պատրաստված հագուստները: Իր հատկությունների համար՝ թեթևություն, ամրություն, փափկություն, գեղեցիկ փայլ, Զինաստանից բերվող մետաքսը լավ համբավ էր վայելում ամենուրեք» (Մարտիրոսյան 1998 : 46) և պատահական չէ, որ մետաքս

բարձրը թանկարժեք քարերով զարդարված գահերի հետ միասին արքայական իշխանության անբաժան ատրիբուտն էին կազմում (Նույն տեղում, 32):

«Հելուզակ թագուհին» (ՀժՀ III 1962, 262–273) հեքիաթում առևտրական գործը մեծապես տուժում էր ոչ միայն տարբեր ելուզակների ու ծովահենների խարդախությունների, այլև մթնոլորտային տարբեր երևույթների պատճառով: Աստվածասեր արքայորդու խորհրդով վաճառականները ապավինում են իրենց աստծուն. «Աստված էլ քաղցրացավ, քամիքը փչեց. կյամիք տարան Ստամպոլու քաղաքից դուս բերին. բազրկյաններ ժողվան, հ'իրար վրա, ասին»:

– Աստված սիրող էս մարդին մե ազ խարճլըդ տա:

Ամենը իր կողմով տվին, էղավ մի տոպրակ ոսկի» (Նույն տեղում, 267), որը Արևելյան կողմի թագավորի որդին կարող էր ստանալ միայն իր կնիքը ուղարկելուց հետո. «Երբ օր ես իմ փեչաղը հ'օղորկի՝ էս ոսկին ըղրկի՛ր, գա» (Նույն տեղում):

Հայ առևտրականներին հաճախ ուղեկցում էին հայ հոգևորականները, որոնք Չինաստան էին գնում քարոզչության նպատակով¹:

XVII դարում հայ վաճառականները Մետաքսի ճանապարհի արևմտյան հատվածի վրայով շարունակում էին իրենց առևտուրը: 1643թ. գրված մի հիշատակարանում վաճառական Հակոբը մանրամասնորեն նկարագրում է ծովով և ցամաքով կատարած իր ճամփորդությունը և իրացրած քարեհաջող առևտուրը (ՀժՀ XII 1984, 436):

Այցելելով հեռավոր երկրներ և լավ ծանոթ չլինելով տեղացիների բարքերին՝ երբեմն վաճառականների հաղորդած տեղեկությունները տարածվում էին իրարամերժ ու սարսափազդու այլակերպումներով, որոնք վեր էին ածվում հրաշապատում պոեմների: Այս ամենի արձագանքները տեսանելի են նաև հայ դասական գրականության մեջ (Տերյան 1989, 158, Մայաթ–Նովա 1986, 302–311): Քրիստոնյա հայերի համար Արևելքն ուներ սրբազան նշանակություն, որտեղից էլ սպասվում էր Քրիստոսի երկրորդ գալուստը: Այդպիսի մոտեցումը բացատրվում է նաև այն պատկերացումներով, որ դրախտը գտնվում է Արևելքում, իսկ Չինաստանն իր բնական դիրքի շնորհիվ համարվում էր աստվածընտրյալ երկիր, որտեղից բացվում են «դրախտի դռները»²: Հեթում պատմիչի վկայությամբ Չինաստանը գտնվում է հենց դրախտի մոտ (Հեթում պատմիչ 1842, 6–7), ինչը նրան ավելի գրավիչ և բացառիկ է դարձնում հայերի աչքերում:

Նույն պատմիչը հայտնում է, որ «այնքան այլազան և հրաշագեղ բաներ կան այս երկրի մեջ (այսինքն՝ Չինաստանում–Թ.Հ.) և այնքան՝ նորարվեստ, որ հազիվ թե որևէ մեկը համեմատվի նրանց հետ» (Նույն տեղում, 6): Հայաստանում հնագիտական պեղումների արդյունքում հայտնաբերվել են չինական խեցեղեն և հալսնապակի (սելադոն), որի արտադրության մշակույթը առաջացել է

1 Ուշագրավ է, Նիկոլայ Միլեևսկու Սպաֆարիի (1675–1678թթ. գլխավորում էր ռուսական դեսպանությունը դեպի Չինաստան) վկայությունը Չինաստանում խտլացի հայտնի ճանապարհորդ Մարկո Պոլոյի և հայ անվանի հոգևորական, միսիոներ Աստոն Մուլթանիկցու հետ հանդիպման մասին (Աբրահամյան 1967, 326, Մարտիրոսյան 1989, 92):

2 Հասա մինչև Չինումային, / Հասա մինչև ծովը ճերմակ, / Տեսա երկրի ծայրը վերջին / Եվ դրախտի դուռը կրակ (Տերյան 1989, 158): Չինաստանի ծովափնյա առևտրական քաղաք Կանտոնում 1307 թվականից առաջ կառուցվել է հայկական մեծ և գեղեցիկ եկեղեցի՝ հարակից շինություններով, իսկ կանտոնաբնակ չինարեն լեզվի ուսուցիչ Հովհաննես Ղազարյանը անգլերենից չինարեն է թարգմանել Աստվածաշունչը, որը չինագետ գիտնականների վկայությամբ առաջին և լավագույն թարգմանությունն է չինարեն (Աբրահամյան 1967, 329–330):

Չինաստանում, իսկ արդեն 9–10-րդ դարերում Դվինի խեցեգործական արհեստանոցներում վարպետները, վերամշակելով հալսնապակե խեցանոթների որոշ զարդեր, ստեղծում են տեղական նմուշներ՝ հալսնապակյա թասեր, ափսեներ, խոշոր պնակներ, կնուճներ՝ գծադիր և դրոշմված, խորաքանդակ և այլ զարդերով, որոնք ինքնատիպ են և ունեն ժամանակի հայկական արվեստին հատուկ ոճ (Ժամկոչյան 1981, 97–98): Սակայն «Պետերբուրգի Էրմիտաժի Արևելյան արվեստի բաժնի հետազոտող Մ. Կրեչետովայի հեղինակած հոդվածում ներկայացված խեցեղենի նմուշները վերաբերում են արդեն 18-րդ դարի վերջին քառորդին և 19-րդ դարի սկզբին, երբ հայ-չինական առևտրական կապերն այնքան էին զարգացել, որ հայ վաճառականների պատվերով չինացի արհեստավորները պատրաստում էին հայատառ մակագրություններով ճենապակե առարկաներ (Кречерова 1940, 346–350): Ի դեպ «Մասնա ծոեր» էպոսի պատումներից մեկի համաձայն՝ Մասնա ղյուցազնական ծոերը ծնվում են Չինաստանի (Մինամգա–Մինամահավը–չինական թոչուն) թագավորի աղջկանից (Մասնա ծոեր 1979, 445–446): Պատումների մեծ մասում Մասունցի Դավթին սպանում է չինական աչքերով նրա դուստրը՝ ծնված Չմշկիկ Մուլթանից: Նշենք նաև, որ Խանդութի աչքերը համեմատվում են չինական բաժակի հետ՝, իսկ չար աչքի դեմ հմայական աղոթքներում օձի կաթը լցնում են չինական բաժակի մեջ («Կթեցի զկաթ՝ քասա չինին»), (ՀՀԺԱ 2006, 84), ինչը վկայում է Հայաստանում չինական ապրանքների առկայության մասին:

Տուրուբերան–Մուշից գրառված «Սարգիս» (ՀժՀ XII 1984, 47–53), «Ձկան փորո թաս» (Նույն տեղում, 449–454), «Ակոր» (ՀժՀ XIII 1985, 276–281), և Կարճկան–Գոմսից գրառված «Դերվիշներն ու տղան» (ԲԱ, ԲԱ IV, 2467–2516) հեքիաթներում ձկան փորից գտած ոսկե (արծաթե) թասերն այնքան անձեռակերտ են, որ նրանց գեղեցկությունից հերոսներն ուշաթափվում են կամ գինովանում: Այդ չնայած թասերը խորհրդավոր են, ինչպես և նրանց ծագումը: «Սարգիս» հեքիաթում թագավորի աղջիկը կենակցում է թասատեր տղայի հետ՝ թասը ձեռք բերելու համար (ՀժՀ XII 1984, 51): Ցուցանշական է, որ ոսկե թասի գալթակությունը չի դիմանում անգամ թագավորը (ՀժՀ XII 1984, 53, 453, ՀժՀ XIII 1985, 280): «Հաբմանի» (ՀժՀ IV 1963, 15–26) հեքիաթում այնկողմնային աշխարհում հայտնված հերոսի՝ սիրուց վառվող մարմինը փորձում են հանգստացնել կավե, ճենապակե, երկաթե, պողպատե, արծաթե, ոսկե ծխական սկահակների (գյուլյումներ) մեջ լցված ջրով: Վերոնշյալ բոլոր հեքիաթներում կախարդական թասերը հմայական գաղտնիմաստ են պարունակում և առնչվում են ծխաառասպելական հնագույն պատկերացումներին:

Հետաքրքիր է նկատել, որ Հայաստան բառը չինարեն հնչում է «Յա–մեյ–նի–յա», որի հիերոգլիֆները նշանակում են «Ասիայի գեղեցիկ միանձնուհի», իսկ Չինաստանը մշտական անուն չունե: Թագավորական հարստության փոխվելով՝ փոխվում էր նաև երկրի և ժողովրդի անվանումը: Մեր նախնիները Ճեն, Ճենք, Ճենաստան ասելով, հավանաբար, հասկանում էին չինական Խենան նահանգում գոյություն ունեցած Ճեն կոչված թագավորական հարստությունը, իսկ ճենագն ասելով՝ երկրի բնակիչներին, այստեղից էլ՝ ճենապակի, այսինքն՝ չինական ապակի: Չինաստան եվրոպական անվանումը անտիկ շրջանից կապված է «Խան» կայսրությանը նախորդած «Ցին» (մ.թ.ա. 221–206թթ.) թագավորական տան հետ (լատ. Siane, ֆրանս. Chine, անգլ. China):

1 «Թ'ննուր աչքեր կը խարցնես, / Չենու կթխեներ, լգո՛, չենու կթխեներ», «Ենու աչքեր կը նմանի չինու քասայի» (Մասնա ծոեր 1936, 32, 284):

Մ. Խորենացու, Փ. Բուզանդի, Ղևոնդի, Ա. Շիրակացու, Վ. Արևելցու, Կիլիկիայի թագավոր Հեթումի՝ Չինաստանի մասին հաղորդած տեղեկությունների մի մասը վերաբերում է Մամիկոնյանների գաղթականության և նրանց նախարարական տան չինական ծագման հարցին (Խորենացի 1981, 268-269)¹, իսկ մի մասն էլ՝ այդ զարմանահարաշերտի հարստություններին: Մ. Խորենացու վկայությամբ «Նրանց աշխարհն սքանչելի է ամեն տեսակ պտուղների առատությամբ, զարդարված է գեղեցիկ բույսերով, ունի շատ սիրամարգ, արտադրում է առատ բրդում և մետաքս, անչափ շատ կան այնտեղ համուրներ, հրեշներ և էշայծամ կոչվածներ»: Հայկական հեքիաթներում այնքան ցանկալի համարվող Մինամահավը (Մինամարը) ծագում է sin-չին և murg- թուրք բառերից և նշանակում է չինական թուրք, Մինամ թագավորն էլ, բնականաբար, Չինաստանի թագավորն է, իսկ ազգ սինեացվոցը՝ չինացիները:

XVI-XVIII դարերում հայերն այնպիսի դիրք և հեղինակություն ունեին Չինաստանում, որ իրենց ապրանքները տեղափոխում էին հայկական տարբերանշան ունեցող սեփական շոգենավերով, իսկ եվրոպացիները Չինաստան մուտք գործելիս, Ղ. Ալիշանի վկայությամբ, ապահովության համար հագնում էին հայկական տարազ՝ ներկայանալով իբրև հայ (Ալիշան 1893, 467): Ընդհանուր է, XVIII դարի վերջերին Չինաստանում հաստատված անգլիական առևտրական ընկերությունները և մյուս եվրոպացի գաղութարարները հայերի ազդեցությունը համաշխարհային առևտրի մեջ նվազեցնելու նպատակով սկսեցին հալածել չինահայ վաճառականներին, բռնագրավել վերջիններիս նավերը: Վերոհիշյալ հիշողություններն արտահայտվել են նաև հայկական հեքիաթներում (քարավանների վրա հարձակում, ապրանքների բռնագրավում և այլն): Հայկական հեքիաթների հերոսները հաճախ քարավանատերերին ու ջահելներին խրատում են գիշերը ճանապարհի չգնալ: Հեքիաթների շարունակության մեջ մենք տեսնում ենք, որ խրատին չհետևողները պատուհասվում են կամ հեղեղից, կամ ավազակների հարձակումներից (ՀժՀ VII 1979, 136-139; 458-463, ՀժՀ IX 1968, 119-123, ՀժՀ XV 1998, 160-168, ՀԱԲ 1983, 127-128, Գուրունյան 1991, 45-47):

Արաբ աշխարհագրագետ Ալ-Բատահրին վկայում է Հայաստանի մայրաքաղաք Դվինում արտադրվող բրդե հագուստների, գորգերի, բարձերի, բազմոցների, դայթանների և հայկական արտադրության այլ իրերի, ինչպես նաև Դվինում արտադրվող մետաքսյա կտորների և տեղում «քիրմիզ» (որդան կարմիր) կոչված ներկով մահողի ներկման մասին (CMOMITK 1901, 19): «Խոջա Մահմուդ, խոջա Ալի» (ԲԱ ԲԱ IV, 2325-2392) հեքիաթում ջիուղները խոջա Մահմուդի ապրանքի մեջ «յափմա կրմրը» են որոնում, այսինքն՝ կեղծ որդան կարմիր ներկ, որը գտնելու պարագայում, վաճառականին պիտի տուգանեն: Ընդհանուր է, հեքիաթում ջիուղները գրպարտում են վաճառականին, սակայն հեքիաթը փաստում է յուր ժամանակին որդան կարմիրի բարձր պահանջարկի և շուկայում տվյալ ներկի կեղծ ապրանքանմուշների մասին: «Բայց Հայաստանում ամենից ավելի շատ տարածված էր գորգագործությունը, որը պետք է բավարարեր թե՛ տեղական պահանջները և թե՛ արտասահման արտաքին շուկաներ: Արաբ պատմիչների տեղեկությամբ հայերը հարկի դիմաց խալիֆայությանը տալիս էին նաև գորգեր» (Աբրահամյան 1946, 82): «Միմոն կուպեցին հեքիաթում» (ՀժՀ IV 1963, 319-329) Մտամբուլի թագավորի որդին

իր հոր պալատում մի ամիս շարունակ հյուրընկալում է Միմոն կուպեցի տղային և պատասխան հրավերն ընդունում է՝ քայլելով Մտամբուլի պալատից մինչև հարուստ հայ վաճառականի դուռը փռած խալի խալիչայի վրայով: Եվ արևելք, և՛ արևմուտք արտահանվող հայկական գորգերի և դրանց վաճառքի մասին հարուստ տեղեկություններ է հաղորդում Աղամ Մեցը: Հայտնի է, որ հայկական արտադրության գորգերն արտահանվում էին ոչ միայն Արևելք, այլև Արևմուտք: Օմեյյանների խալիֆ ալ-Վալիդ Երկրորդի տանը պատերը և հատակը ծածկված էին հայկական գորգերով: Ալ-Ռաշիդի կինը նստում էր հայկական գորգի վրա, իսկ նրան շրջապատող կանայք հայկական բարձերի վրա (Meu 1973: 369):

Հայաստանում արտադրվող բազմատեսակ նուրբ կտորեղենները վկայում են հում նյութի և ներկի (Փարպեցի 1982, 23) տեղական մեծ պաշարների մասին: Հյուսվածքագործությունը ծաղկում էր ոչ միայն Դվինում և Անիում, այլև Երզնկայում: Հայաստանի և Երզնկայի մասին Մարկո Պոլոն հայտնում է. «Այս մի մեծ երկիր է: Սկսվում է մի քաղաքից, որ կոչվում է Արզինգա (Երզնկա), ուր հյուսում են աշխարհի լավագույն բեռեղենները (buckram): Երկրի ժողովուրդը հայեր են» (Հակոբյան 1932, 48): Հյուսվածքեղենի համար օգտագործում էին բուրդը, բուսական թելերը և շերամի որդի արտադրած մանրաթելը, որով հախրատանում է միջնադարյան առակի թթենին, «զի սաղարթ իւր նիւթ է մետաքսայ» (Գրական հուշարձաններ 1951, 50-51):

Կ. Գանձակեցին նշում է, որ մոնղոլների վարած դաժան հարկային քաղաքականության համաձայն՝ արհեստավորները նույնպես հարկատու էին պետությանը (Գանձակեցի 1982, 260): Խոսքը դարբինների, շապարարների (ծեփարարների) մասին է, որոնք կերպասներ և բրդե կտորեղեններ ներկող արհեստավորներ էին (Աբրահամյան 1946, 75): Իսկ Արաբական տիրապետության տարիներին, հատկապես VII-VIII դարերում Օմեյյանների օրոք մտցված հարկահանության նոր՝ բնամթերքի միջոցով կատարվող կարգը, Հայաստանում ստեղծում է տնտեսական ծանր վիճակ: Շիրակից գրաված «Ծանր հարկեր» (ՀժՀ IV 1963, 441-442) հեքիաթում դերվիշի շոր մտած թագավորի և վեզիրի ծարավը այգեպանը հագեցնում է իր այգում աճող նոսն հյութով: Միայն մեկ նոսն հյութը բավարարում է երկուսին:

«Բը էդ բաղեն ինչքան օրոտ կը քաղե բաղպանճին, - մտածում է թագավորը, - Ես մինչի հիմի հարկեր չեմ դրե ըդունց վրեն» (Նույն տեղում, 441):

Պալատ վերադառնալով՝ թագավորը հարկադրման է ենթարկում նաև այգեպաններին: Երկիրը հայտնվում է ծանր դրության մեջ: Երկու-երեք տարի հետո ծաղկած թագավորն ու վեզիրը դարձյալ այցելում են այգեպանին և ջուր են խնդրում: Այս անգամ այգեպանը մի չորացած նուռ է բերում, քամում է, քամում, բան դուրս չի գալիս: Թագավորը հարցնում է, թե ինչպես եղավ, որ «Երկու-երեք տարի առաջ էկա էս բաղը, ջուր ուզեցի. դու բերեցիր մի նոռով էրկու հոգի կշտացուցիր: Հիմի սաղ բաղեն մեզի ընչի՞ չը կըքար ջուր խմցներ» (Նույն տեղում):

«Էյ, - քսավ, - դերվիշ բաբա, քու հերըդ օրհնըվի, մեր թագավորը էման բանըմ չէրավ, օր բաղը բաղպանճին տիրեր ինամեր, օր շատ բան էղնիր:

«Ինչ էրավ թագավորը, - հարցուց դարվիշը:

«Ինչ պըտի էներ, հարկերը էնքան դրեց, օր չկըցանք տկեն դուս գալինք, բաղին էլ չաշխատանք, գնաց, չորցավ:

Նորեն թագավորը գնաց թախտը, հարկերը բաշխեց, երկիրը խաղաղացավ, հարստացավ» (Նույն տեղում, 442): Ուշագրավ է հեքիաթի հերոսի վերաբերմունքը

¹ Վ. Արևելցի պատմիչը շեշտում է, որ Մամակ և Կոնակ եղբայրները, փախչելով Ճենքակուր արքայից, եկել են հայոց արքա Արտաշեսի մոտ և իրենց քաջության համար ստացել սպարապետի պաշտոնը և կոչվել Մամիկոնյաններ (Աշխարհացոյց Վարդանայ Վարդապետի 1960, 53-54):

անխնա հարկահանության, մաքսային տուրքերի վերաբերյալ, որը, ցավոք, այսօր նույնպես շարունակում է մնալ արդիական:

Ամփոփելով բանահյուսական, մատենագրական, հնագիտական տվյալները և մասնավորապես հայ ժողովրդական հեքիաթներում առկա համապատասխան տեղեկությունները՝ քննվող թեմայի վերաբերյալ, կարող ենք ասել.

1. Հայերը հնուց անտի դրացիական կապեր են ունեցել հարևան ու հեռավոր ազգերի հետ ու ներգրավված ենք եղել արևելքի ու արևմուտքի, հյուսիսի և հարավի պատմամշակութային և առևտրատնտեսական միջազգային կարևոր գործընթացներում:

2. Հայ ժողովրդական հեքիաթներում Արևելքն ընկալվում է իբրև առասպելական շքեղության, ոսկեհոտ զարդերի ու անձեռակերտ գործվածքների հնամշակութային խորհրդանիշ, որտեղից բերվող կախարդական, իրերն ու առարկաները կիրառական նշանակությունից առավել ունեն ծիսաառասպելական իմաստավորում:

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբրահամյան Ա., (1967), *Համատար ուրվագիծ հայ զաղթավայրերի պատմության*, հ. Բ, Երևան, «Սովետական գրող» հրատ.:

Աբրահամյան Վ., (1946), *Արհեստները Հայաստանում IX– XIII դդ.*, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:

Ալիշան Ղ., (1893), *Միսական, Տեղագրություն Միևնաց աշխարհի, Վենետիկի Մխիթարայ վանս, ի ս. Ղազար:*

Աշխարհացոյց Վարդանայ Վարդապետի, (1960), Քննական հրատարակություն Հայկ Պերպերեանի, Բարիգ, «Արաքս» հրատ.:

Գանձակեցի Կ., (1982), *Հայոց Պատմություն*, Աշխարհաբար թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վ. Առաքելյանի, Երևան, «Սովետական գրող» հրատ.:

Գրական հուշարձաններ, (1951), Մ. Գոշ, *Առակներ*, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:

Գուրունյան Հ., (1991), *Համընթաց բանահյուսություն*, Երևան, «Լույս» հրատ.:

Ժամկոչյան Ա., (1981), *Միջնադարյան Հայաստանի հախճապակին 9–14-րդ դարերում. – Հայաստանի հնագիտական հուշարձանները*, թիվ 10, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:

Իբն-ի Բատուտա, (1940), *Օրսար աղբյուրներ հայերի մասին, Արարական աղբյուրներ*, Քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, Երևան, Պետական համալսարանի հրատ.:

Լաստիվերցի Ա., (1971), *Պատմություն, Թարգմանությունը Վ. Գևորգյանի*, Երևան, «Հայաստան» հրատ.:

Կաղանկատուացի Մ., (1983), *Պատմություն Աղուանից աշխարհի*, Քննական բնագիրը և ներածությունը՝ Վ. Առաքելյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:

Հակոբյան Հ., (1932), *Աղբյուրներ Հայաստանի և Աղբյուրկապի պատմության, Ուղեգրություններ*, հ. Ա, (ԺԳ–ԺԶ դար), Երևան, Հրատ. Մելքոնյան ֆոնդի:

Հայ ազգագրություն և բանահյուսություն, (1983) (այսուհետ՝ ՀԱԲ), Ռ. Գրիգորյան հ. 14, (Գեղարքունիք), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:

Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշարակարաններ (1984), (այսուհետ՝ ՀԶՀ), (1641–1660), հ. Գ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:

Հայգինգա Յ., (2007), *Homo Ludens, Մշակույթի խաղային տարրի ասիմիլանս փորձ*, Երևան, «Մարգիս Խաչենց» հրատ.:

Հայ ժողովրդական հեքիաթներ (այսուհետ՝ ՀԺՀ), (1959), հ. I, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:

ՀԺՀ, (1959), հ. II, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:

ՀԺՀ, (1962), հ. III, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:

ՀԺՀ, (1963), հ. IV, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:

ՀԺՀ, (1966), հ. V, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:

ՀԺՀ, (1979), հ. VII, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:

ՀԺՀ, (1977), հ. VIII, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:

ՀԺՀ, (1968), հ. IX, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:

ՀԺՀ, (1984), հ. XII, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:

ՀԺՀ, (1985), հ. XIII, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:

ՀԺՀ, (1998), հ. XV, Երևան, «Ամրոց» հրատ.:

ՀԺՀ, (2009), հ. XVI, Երևան, ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ.:

Հայ ժողովրդի պատմություն, (1971), (այսուհետ՝ ՀԺՊ) հ. I, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:

Հայ հնարական և ժողովրդական աղբյուրներ, (2006), (այսուհետ՝ ՀՀԺԱ) Աշխատասիրությամբ՝ Ս. Հարությունյանի, Երևան, Երևանի համալսարանի հրատ.:

Հայրապետյան Թ.–ի անհատական գործողման նյութեր, (այսուհետ՝ ԱԳՆ) Արցախ, տետր № 1, 2006:

Հեթում պատմիչ, (1842), *Պատմություն թաթարաց, յեղեալ ի յարին օրինակի ի հայ բարբառ*, Ի Վենետիկ, ի տպարանի սրբոյն Ղազարու:

Հերոդոտոս, (1986), *Պատմություն ինը գրքից*, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:

Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվ (այսուհետ՝ ԲԱ):

Մանանդյան Հ., (1940), *Հայաստանի քաղաքները 10–11-րդ դարերում*, Երևան, Արմֆանի հրատ.:

Մարտիրոսյան Հ., (1989), *Հայաստանը Մետաքսի ճանապարհի խաչուղիներում. – Պատմաքաղաքական հանդես*, № 4, էջ 85–94:

Մովսիս Խորենացու Պատմություն Հայոց, (Խորենացի) (1981), Քննական բնագիրը Մ. Արեղյանի և Ս. Հարությունյանի, Երևան, Երևանի համալսարանի հրատ.:

Սալաթ–Նովա. – Հայ դասական քնարերգություն, (1986), հ. 2, Երևան, «Սովետական գրող»:

Սաանա ծուր, (1936), հ. Ա, Երևան, Հայպետհրատ:

Սաանա ծուր, (1979), հ. Գ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:

Սյունիանուսի Միևնաց եպիսկոպոսի Պատմություն տանն Միսական, (Ստեփանոս Սյունեցի), (1861) Մոսկվա, Տպարան Լազարեան Ճեմարանի արևելեան լեզուաց:

Ստեփանոսի Տարոնեցոյ Ասողկան, (1885), (Ստեփանոս Ասողկի), *Պատմություն փեղեկական*, Ս. Պետերբուրգ, տպ. Ի. Ն. Սկորոխոդովի:

Փարպեցի Ղ., (1982), *Հայոց Պատմություն*, Քննական բնագիրը Գ. Տեր–Մկրտչյանի և Ստ. Մալխասյանցի, Երևան, Երևանի համալսարանի հրատ.:

Օրբելի Յ., (1911), *Անոյ տներակները*, Վաղարշապատ, Էլեւորաշարժ տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի:

Мен, Адам (1973). *Мусульманский Ренессанс*. Москва: Наука.

10. Варданян С.Н. (1997). *Тембральная организация в речевом и певческом изглашении*. Тезисы докл. конференции, «Семиотика и преподавание языков», ЕГУ.
11. Долецкая Е.С. (1982). *Риторика лекторской речи*. Автореферат канд. дисс., МГУ.
12. Смирницкий А.И. (1957). *Синтаксис Английского языка*. М.: Литература на иностранном языке.
13. Трубецкой Н.С. (1960). *Основы фонологии*. М.: Изд.-во иностранной литературы.
14. Akhmanova O. and L. Minajeva ed.-s (1973). *An Outline of English Phonetics*. M.: MSU Press.

15. Akhmanova O., Minajeva L. and O. Mindrul (1986). *Philological Phonetics*. M.: MSU Press.
16. Anand, Mulk Raj (1966). *Indian Fairy Tales*. Bombay.
17. Davidov M.V., & G.G. Egorov (1971). *English Phonology*. M.: MSU Press.
18. Egorov G.G., Pavlova S. & A.N. Kosmynin (1976). *A Phonetic Guide to Extracts from Dickens*. Elista.
19. Minajeva L. (1982). *Word in Speech and Writing*. M.: MSU Press.
20. Vardanian S., (1993). *On Speech and Singing*. // *Akhmanova Readings*. Moscow, Lateum-Maal, Issue № 2.
21. Vardanian S., (1996, 2001). *Suprasyntactics of Speech and Singing*. // *Semiotics and Language Teaching. Theoretical Principles and Practical Applications*. Yerevan State University, Armenia, May 20-22, Canada, pp. 215-217.
22. Vassiliev V.V. (1970). *English Phonetics*. M.: Higher School Publishing House.

Svetlana Vardanian

THE EXPRESSIVENESS OF SPEECH IN THE FAIRY TALE GENRE

Summary

The expressiveness of speech is distinguished by a rich variety of intonational, rhythmical, prosodic, paralinguistic and kinesic means which are of great importance for the narrator's art in the fairy tale genre. The study of this genre through prism of different trends of modern phonology will contribute to raise the narrator's art to a higher level of scientific precision. Hence, the present article aims at investigating the fairy tale on the segmental, suprasegmental and suprasyntactic levels. The article mainly dwells upon the peculiarities of intonation, rhythm and timbre of this genre.

1. the intonation of the fairy tale is characterized by simple tones; complex tones are seldom used.
2. the rhythm of the fairy tale is that of prose with its typical rhythmical patterns. The fairy tale is defined by its properly balanced variety of rhythm which endows the narration with some dynamism.
3. the fairy tale is distinguished by the narrative timbre II interpolated by dialogues. The parameters of this timbre are: falling tones of narrative sentences, logical pauses, slowed down tempo and a smooth flow of prolonged vowels.

Արմեն Սարգսյան

ԱՐԵՎԵԼՔԻ ԶՎԱՐՃԱԽՈՍ ԽՈՋԱ ՆԱՍՐԵԴԻՆԸ
ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐՈՒՄ

Արևելքի զվարճախոս Մոլլա Նասրեդինի (Խոջա Նասր-Էդ-Դին, Հոջա Նասրետտին, Մոլլա Մըսրադին) զվարճապատումները բազմաթիվ ժողովուրդների, այդ թվում նաև՝ հայության շրջանում ամենատարածվածներն ու մասսայականություն վայելողն են եղել:

Արդեն մի քանի հարյուրամյակ է՝ շրջանառվում են նրա մասին (կամ նրան վերագրվող) տարատեսակ երգիծական մանրապատումներն ու առակատիպ կառույցները:

1978թ. ԽՍՀՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտը Մոսկվայում «Արևելքի ժողովուրդների հեքիաթները և առակները» մատենաշարի շրջանակներում Դուսերեն հրատարակում է մի ժողովածու (Харитонов, Двадцать три Насредина 1978), որն ընդգրկում էր 23 ժողովուրդների նասրեդինյան 1119 պատում թարգմանված հունարեն, ասորերեն, բուլղարերեն, սերբերեն, մակեդոներեն, խորվաթերեն, արաբերեն, պարսկերեն, տաջիկերեն, թուրքերեն, թուրքմեներեն, ադրբեջաներեն, թաթարերեն, ուզբեկերեն, ույգուրերեն, ղազախերեն, ավարերեն, չեչեներեն, լեզգիերեն, թաթասարաներեն, դարգիներեն, անդիերեն և ռուսուկերեն լեզուներին:

Նասրեդինյան պատումների այդ համահավաքը կազմող Խարիտոնովը առաջաբանում խոսում է նաև եվրոպական տարբեր երկրներում (Բուլղարիա, Ռումինիա, Հարավսլավիա), Միջին և Կենտրոնական Ասիայի, ինչպես նաև արաբական երկրների ժողովուրդների մոտ, անգամ Չինաստանում այդ շարքի զվարճապատումների տարատեսակ դրսևորումների մասին, անդրադառնում նաև հայկական և վրացական բանավեպում Նասրեդինի կերպարի արտացոլմանը՝ մատնանշելով հայերի և վրացիների բանավեպում Արևելքի զվարճախոսին վերագրվող սյուժեների սակավությունը: Չգիտես՝ ինչու և՛ այդ միտքը հաստատելու համար մեջբերում է միայն վրացական մեկ աղբյուր (Грузинский народный юмор, Тбилиси 1967: 14) և գրում, որ իրեն չի հաջողվել այլ հրատարակությունների հասնի լինել (Харитонов 1978: 11):

Ինչ խոսք, ժողովածուն կազմողի համար այն օրերին դժվար չէր լինի հարցում անել նաև Հայաստանի ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ՝ հիմնավոր տեղեկություններն ու անհրաժեշտ նյութերն ստանալու և դրանք օգտագործելու համար:

Իր վերլուծության մեջ Խարիտոնովը այս երկու քրիստոնյա ժողովուրդների նասրեդինյան կերպարը համարում է փոխառած, որի տեղը, ըստ նրա, աստիճանաբար գրավում է մեկ այլ՝ առավել հիմնավոր ազգային արմատներ ունեցող կերպար, ինչպիսին, հայերի դարաբաղցի զվարճախոս Պըլը Պուդին է: Ըստ Խարիտոնովի՝ նասրեդինյան շատ սյուժեներ սկսել են կապվել նմանատիպ ազգային հերոսների հետ (Харитонов 1978: 11):

Մակայն հեղինակն անտեսում էր նաև հակառակ երևույթը, երբ այս կամ այն համազգային կամ լոկալ-տեղային զվարճապատումը կարող էր վերագրվել համընդհանուր ճանաչում ձեռք բերած օտար զվարճախոսին՝ նրան դարձնելով այն ձգողական ուժը, որը դեպի իրեն կարող էր ձգել ու «սեփականացնել» զանազան տարածքներում ծնունդ առած տարբեր կրոնների ու ժողովուրդների մանրապատումները: Դարեր շարունակ այդ նույն գործառույթն են կատարել հույն և ասորի ժողովուրդների առակախոս-զվարճախոսները՝ Եզոպոսը և Խիկար (Ախիկար) Իմաստունը: Այդ գործառույթն է իր վրա վերցրել նաև Արևելքի զվարճախոս Մոլլա (Խոջա) Նասրեդինը:

1986թ. վերոհիշյալ գիրքը՝ 1069 պատումներով (անհետաքրքիր շուրջ 50 նմուշ հանված), Գևորգ Հայրյանի թարգմանությամբ և Արամ Ղանալանյանի առաջաբանով, լույս տեսավ նաև հայերեն՝ որտեղ վաստակաշատ քանազան անդրադառնում է մեր բանավեպում մուտք գործած նասրեդինյան մանրապատումներին: Դրանք «սերվել ու հարազատ են դարձել մեր ժողովուրդին, - գրում է Ղանալանյանը, - ...և արցախցի հռչակավոր Պըլը Պուդու, շիրակցի Պուդ Մուկուչի, լոռեցի Հոբոսի, դափանցի Գինոսի և շատախցի ծեղի կողքին, երբեմն էլ նրանց դերերում մենք հանդիպում ենք Խոջա Նասրեդինին» (Խարիտոնով 1986, 4):

Ինչ 1874թ. Գաբրիել արքեպիսկոպոս Այվազյանն իր «Առակավոր բանք ազգային և օտար» գրքի առաջաբանում գրում էր. «Մեզի կերևի, թե մեր ազգին մեծ մասին բերանը մինչև ցայժմ պտտող հայերեն առակներում ու առածներում գտնե մեկ մասը Խիկարա Իմաստուն հնարածներն են, և Նասրետտին խոճայի անունովը պատմված առակներում և Նոցա բերանը դրված առածներում մեկ մասն ալ մեր Խիկարա Իմաստուն հնարածներն են, ինչպես արդեն հայտնի է, որ չինաց Կոնֆուցիեն, հունաց Եզոպոսին ու Դիոգենեսին, արաբացվող Լոգմանին, տաճկաց Նասրետտինին առակներն ալ իրարու հետ շփոթած են, և մեկում հնարածը մյուսին անունովը կի՛րշվի, ուստի և կարելի չէ համարձակ վճռել, թե այս կամ այն առակն ու առածը Խիկարինն է, թե Եզոպոսին, թե Նասրետտին Խոճային, թե ուրիշ ազգային կամ օտար առակախոսի» (Այվազյան, 1874, Ժ-է): Ի դեպ, Գաբրիել արքեպիսկոպոս Այվազյանը Խիկար Իմաստունին համարում էր Արծրունյաց Սենեքերիմ թագավորի օրոք (մոտ 1000թ.) ապրած անվանի զվարճաբան առակախոս և ժողովրդական իմաստասեր:

Փաստորեն Գաբրիել արքեպիսկոպոս Այվազյանը շուրջ մեկուկես դար առաջ առաջին անգամ հայ իրականության մեջ խոսում է առակների, զվարճապատումների և առածների թափառող սյուժեների առկայության փաստի մասին, հիմնավորում բանավեպի այդ տեսակների՝ մի ժողովրդից մյուսին փոխանցվելու երևույթը:

Այդ նույն խնդրին 30 տարի անց՝ 1904 թվականին անդրադառնում է նաև հայագիտության մեծ երախտավոր երվանդ Լալայանը: Նա հրատարակում է նասրեդինյան առակ-զվարճախոսությունների մի գիրք՝ 228 պատումներով, որոնց զերակշռող մասը հայ ասացողներից Լալայանի գրառածներն են: Ժողովածուում առաջին անգամ ներկայացվում և հիմնավորվում է հայկական միջավայրում նասրեդինյան զվարճապատումների թե թափառող սյուժեների (թարգմանություն, շփման զանազան միջոցներով փոխանցում և այլն), թե տեղայնացած զվարճախոսի շուրջը ստեղծված զուտ հայկական պատումների առկայության տեսակետը, թե ազգային զվարճախոսներից դրանց այլ՝ առավել մասշտաբային՝ օտար զվարճախոսներին անցնելու վարկած (Լալաեան 1904):

«Առականների այս շարքը, – ժողովածուի առաջաբանում գրում է Լալայանը, – սկսում ենք Մուլա – Նասր – էդ – դինին վերագրված առականներով: Ասացինք, որ մեր նպատակն է հայոց ժողովրդական առականներ հավաքել, մինչդեռ սկսում ենք մի մոլլի առականներով: Ճշմարիտ է, մոլլան թուրք է, սակայն նրան վերագրված առականների մեծագույն մասը հայ ժողովրդի ստեղծագործություն է՝ նման այն բազմաթիվ թրքական երգերի, որ ասել են մեր հայ աշուղները կամ ժողովուրդը: Մուլա Նասր – էդ – դինի ահագին ժողովրդականությունը պատճառ է եղել, որ տեղական փոքրիկ առակախոսների՝ հոբոսների, կիկոսների, ծակսահակների, պլուրպուղիների և ուրիշ այսպիսիների առականները նրան են վերագրվել, և, այսպիսով, Մուլա Նասր – էդ – դինը կորցրել է յուր առանձնահատուկ տիպը. նա միաժամանակ ներկայանում է մեզ և իբր հիմար՝ Հոբոսի պես, և իբր խելացի՝ Խիկար Իմաստունի պես, և իբր խորամանկ՝ Ծակ – Սահակի պես, և իբր տխմար՝ Կանտի ծոերի պես. այնպես որ սա միաժամանակ է և Կալինո, և Տարտարեն, և Գորգեն, և Դոն Քիշոտ, և Սանչո – Պանչո, և Կոլոնել Ռամոլլո, և Բարոն դը Մյունշհաուզեն – մի խոսքով, նրա մեջ մարմնացած են այն բոլոր տիպերը, որ զանազան տեղերի ժողովրդական հոգեբանությունը կամ հումորը կամեցել է ստեղծել» (Լալան 1904, Բ – Դ):

Այնուհետև Ե. Լալայանը՝ իբրև ապացույց իր մեկնաբանության, ներկայացնում է իր իսկ գրառած նյութերի գերազանցությունը թուրքական բնագրերի հետ. «Իրենք՝ թուրք հրատարակիչները, նրան միմիայն 145 առակ են վերագրում, մինչդեռ իմ այս պրակի մեջ կրկնապատիկն է գրի առնված, և դեռ որքան կան, որ անծանոթ են ինձ՝ չհաշված բամբասականները, որոնց թիվը հազարից անցնում է» (Նույն տեղում, Դ):

Այս կամ այն զվարճապատումը ստեղծվելուց հետո եթե շրջապատի կողմից ընդունվում է, արծարծած խնդիրներն ու առաջադրած հարցերը և դրանց քննադատությունը, ծիծաղ առաջացնելու ինքնատիպ ձևերն ու միջոցները եթե ընդունվում են հանրության կողմից, ապա հերոսներն առաջին հերթին պետք է ընդհանրացվեն: Նրանք որքան ճանաչված լինեն, այնքան լսարանի համար գրավիչ կարող են լինել: Երբեմն էլ զվարճախոսը զվարճասերներին «կարող էր պարտադրել» որոշակի կանոններ: Այսպես, օրինակ, ըստ Ե. Լալայանի դիտարկման՝ «Այժմ հայ ժողովրդի մեջ տիրում է այն նախապաշարմունքը, որ ով Մուլա Նասր – էդ – դինի մի առակն ասե, անշուշտ յոթը լրացնելու է, իսկ եթե յոթն ասի, յոթն անգամ յոթը՝ քառասուն և ինը լրացնելու է, ապա թե ոչ՝ անիծված կլինի» (Նույն տեղում, Է):

Ի դեպ, այս նախապաշարմունք – գործառնությունը 1950–1960 թվականներին փոխանցվել էր շիրակցի զվարճախոս Պոլոզ Մուկուչին, և նրա անունը տվողը պարտադրված էր Պոլոզ Մուկուչի յոթ անեկդոտ պատմել (կանոնակարգում բացակայում էին յոթն ասելուց հետո շարունակվող գործընթացը և չկատարելու դեպքում անիծված լինելու հանգամանքը):

Սրամիտ խոսքը, ծիծաղով, ծաղրով ասելիքը վերադարձնելու կարողությունը հատուկ է մարդ արարածին՝ անկախ ազգությունից և կրոնական պատկանելությունից: Հետևապես շատ անգամ ոչ թե դժվար, նույնիսկ անհնար է այս կամ այն պատումը տեղայնացնելը, կոնկրետ որևէ ժողովրդին վերագրելը: Նասրեղիյան պատումների այուժեններից շատերն էլ բազմափայլ են: Թերևս հենց դա է պատճառը, որ մի շարք ժողովուրդներ, Հոմերոսի ծննդավայրի պատիվը հենց դա է պատճառը, որ մի շարք ժողովուրդներ, Հոմերոսի ծննդավայրի պատիվը իրենց վերագրող հունական յոթ քաղաքների նման, դարեր շարունակ վիճարկում են Նասրեղիյանի հայրենիքի պատիվն իրենց վերագրելու համար: Այդ վեճին

համառորեն մասնակցում են թե՛ հնագույն ժողովուրդները, թե՛ նորաթուխ ազգային միավորումները: Նույնիսկ մեկ դարը չբոլորած «աղբբեջանցի» հորջորջվող կովկասի թաթարների մեծոքյա «գիտնականները» և սասանյան սեփականացման գործընթացից՝ Նասրեղիյանի համարելով աղբբեջանցի, քանի որ, իբր, 13-րդ դարում այդ անունով աղբբեջանցի գիտնական է եղել՝ Հաջի Նասրեղին Թուսի (Харитонов 1978:6): Ավելացնենք նաև, որ նրանք, սեփականացնելով իրենց հարևանների մշակութային ժառանգությունը, այդ թվում նաև՝ ժողովրդական բանավեստը, հասցրել են Նասրեղիյանի մի քանի ժողովածու հրատարակել:

Ինչ խոսք, Արևելքի զվարճախոսը սիրված է եղել բոլոր ժողովուրդների կողմից, և նրա անունը, անկախ կրոնից ու ազգությունից, շրջանառվել է ամենուրեք:

Ամենին նպատակ չունենալով Նասրեղիյանի հայրենիքը վիճարկողների մեջ մտցնել նաև հայերին՝ փորձենք անդրադառնալ հանրահայտ զվարճախոսի հանդեպ եղած հետաքրքրություններին՝ նաև հայկական միջավայրում, ներկայացնել հայերեն թարգմանությունները, հայկական շրջանակներից գրառումները, դրանց հրատարակությունները, ինչպես նաև տեղայնացված զվարճախոսին ու նրան վերագրված պատումների առանձնահատկությունները:

Հայ իրականության մեջ Խոջա Նասրեղիյանի զվարճապատումների՝ մեզ հայտնի հայերեն առաջին թարգմանությունը կատարվել է 1858 թվականին Զմյուռնիայում (Իզմիր): Այն ֆրանսերենից թարգմանված 32 նմուշ պարունակող մի գրքույկ է՝ «Ծաղրաբանությունը Նասրեղիյանի Խոջայի» վերնագրով: 1910 թվականին Կ. Պոլսում թուրքերենից հայերեն թարգմանած հրատարակվում է «Հոջա Նասրեղիյանի զուարճալիքները» գիրքը՝ շուրջ 350 պատումներով, որը տարիներ անց վերահրատարակվում է Բեյրութում և Բոստոնում:

Երբվանից է Խոջա (Մուլա) Նասրեղիյանի կերպարը շրջանառվել հայոց մեջ, դժվար է ասել, բայց որ Նասրեղիյան պատումների առաջին գրառողներից մեկն էլ մենք՝ հայերս ենք եղել, դա փաստ է, և որ շուրջ 170 տարիների ընթացքում մեզ մոտ հսկայածավալ աշխատանքներ են կատարվել Արևելքի զվարճախոսին վերագրվող անեկդոտ-զվարճապատումների գրառման և հրատարակության ուղղությամբ, դա էլ է անժխտելի փաստ: Հայ իրականության մեջ առաջին անգամ լույս տեսավ 1841 թվականին իր գրառած Նասրեղիյանի Խաչատուր Աբովյանը 1841 թվականին իր գրառած Նասրեղիյանի զվարճապատումների երեք նմուշ չափածոյի է վերածել և ընդգրկել առակ-զվարճախոսությունների ժողովածուում (Աբովյան 1864):

Հետագա տարիներին հրատարակված անեկդոտների զանազան ժողովածուներում ևս տեղ են գտել Մուլա Նասրեղիյանի մանրապատումները: Այսպես, օրինակ, Հովհաննես Նազարյանը 1876 թվականին Բաքվում հրատարակած «Անեկդոտներ» – ի ժողովածուի առաջին հատորում ընդգրկել է Նասրեղիյանի առակ-զվարճապատումների 8 նմուշ, մեկ տարի անց՝ 1877 թվականին Թիֆլիսում հրատարակած երկրորդ հատորում 12 նմուշ, իսկ 1883 թվականին կրկին Թիֆլիսում տպագրած երրորդ հատորում 5 նմուշ:

1892 թվականին շուլավերցի դպիր Մմբատ Շահազիզյանը Թիֆլիսում հրատարակում է «Ծիծաղի տոպրակ» զվարճապատումների ժողովածուն՝ 18 Նասրեղիյանի նմուշներով:

1904 թվականին, ինչպես վերը նշվեց, Երվանդ Լալայանը Թիֆլիսում հրատարակում է «Ժողովրդական առականներ: Ա. Մուլա Նասր-էդ-Դին» գուտ Նասրեղիյանի առակ-զվարճապատումների ժողովածուն, որն ընդգրկում էր 228 նմուշ: Դա, փաստորեն, հայ իրականության մեջ արևելքի զվարճախոսին (և ոչ միայն արևելքի) նվիրված մեծաքանակ նյութերով առաջին ժողովածուն էր, որոնց

պատկանելի մասը հենց իր՝ Լալայանի գրառումներն էին՝ կատարված հիմնականում Բորչալուի գավառի (Գուգարք-Լոռի, Բոլնիս Խաչեն) հայկական բնակավայրերում: Ի դեպ, 1903 թվականին նա կարողացել էր հրատարակել նաև լոռեցի Հոբոսի զվարճապատումների մի փոքրիկ ժողովածու՝ 18 մանրապատումներով և հայ զվարճախոսին նվիրված հակիրճ առաջաբանով:

«Ժողովրդական առակներ: Ա. Մուլա Նասր-Էղ-Դին» գրքի առաջաբանում Լալայանը մեր իրականության մեջ առաջին անգամ փորձ է անում վերլուծել և մեկնաբանել նասրեղինյան պատումների տեղայնացման և տեղական պատումների նասրեղինացման գործընթացը: Նպատակ ունենալով շարունակել և ամրոջացնել հայ զվարճախոսների երգիծական մանրապատումները պրակներով հրատարակելու աշխատանքը՝ Լալայանը իր առջև խնդիր էր դրել հայության միջավայրում շրջանառվող հայ զվարճախոսներին և արևելքի զվարճախոս Նասրեղինին վերագրվող պատումները գրառելիս չսուսափել կրկնություններից, համադրել դրանք, պարզելու համար, «թե ո՞րն է առակի իսկական հեղինակը, կամ վարիանտներից ո՞րն է նախատիպը»:

1913 թվականին Արտեմ Եսայանը Թիֆլիսում հրատարակում է «Միծաղի տկճոր»: Մուլա Նասրեղինի առակներ, ծիծաղաշարժ անեկդոտների և սրախոսությունների ժողովածու» գիրքը, ուր տեղ էր գտել նաև 37 նասրեղինյան զվարճապատում:

ՀՀ ԳԱԱ ՀԱԹ-ի աշխատակից Վերժինե Սվազյանը իր գրառած նասրեղինյան 11 զվարճախոսություններն ընդգրկել է 2000 թվականին հրատարակած «Պոլսահայ բանահյուսությունը» գրքում, իսկ նույն ինստիտուտի աշխատակից Էսթեր Խենյանը՝ 2000 թվականին տպագրված ՀԱԹ-ի 21-րդ հատորում՝ շամշադինյան 7 նմուշով, և 2008 թվականին տպագրված ՀԱԹ-ի 25-րդ հատորում՝ իջևանյան 11 նմուշով:

2009 թվականին հրատարակվում է Հովհաննես Հովսեփյանի կողմից գրի առած Ղարադաղի բանահյուսական նյութերի ժողովածուն, ուր տեղ էր գտել նաև Մուլա Նասրեղինի զվարճապատումներից 19 նմուշ:

Ձեռագիր վիճակում մեծ քանակությամբ նասրեղինյան գրառումներ կան թե՛ ԳԱԱ ՀԱԹ-ի արխիվում, թե՛ Հայաստանի պետական արխիվում, թե՛ գրականության և արվեստի թանգարանում, թե՛ անձնական մի շարք հավաքածուներում:

Հայկական նասրեղինյան գրառումների աշխարհագրությունը ևս ընդգրկում է՝ Պոլիս, Ալաշկերտ, Ղարադաղ, Սալմաստ, Երևան, Թիֆլիս, Բաքու, Շիրակ, Լոռի, Իջևան, Շամշադին, Ջավախք...:

Այսպիսով, առկա նյութերը հավաստում են, որ մեզ մոտ Արևելքի զվարճախոս Նասրեղինը սիրվել և մեծ մասսայականություն է վայելել, իսկ նրան առնչվող մանրապատումները հայերի շրջանում բավականին մեծ քանակ են կազմել՝ ընդգրկելով թե՛ Պատմական Հայաստանի բնակավայրերի մեծ մասը, թե՛ նրանից դուրս գտնվող հայաշատ վայրերը: Շուրջ 170 տարիների ընթացքում դրանք գրառվել և ընդգրկվել են ինչպես տարատեսակ անեկդոտների ժողովածուներում, այնպես էլ գույտ Նասրեղինին նվիրված գրքերում: Հայոց մեջ շրջանառվող նասրեղինյան մանրապատումներից գատ, արևելքի զվարճախոսին են վերագրվել նաև տեղական զվարճախոսների երգիծապատումները, ինչը հաստատում են գրառած նյութերն ու բանահավաք-բանագետների մեկնաբանությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Харитонов С. (1978). *Двадцать три Насредина*. Москва: Наука.
Արովեան Խ. (1864), *Պարսպ վախարի խաղալիք*, Տիֆլիս:
Ալվազեան Գաբրիել արքեպիսկոպոս (1874), *Առակավոր բանք ազգայինը և օրարք*, Կ. Պոլիս:
Եսայան Ա. (1913), *Միծաղի տկճոր: Մուլա Նասրեղինի առակներ, ծիծաղաշարժ անեկդոտների և սրախոսությունների ժողովածու*, Թիֆլիս:
Խենյան Է. (2000), ՀԱԹ - 21 (Շամշադին), Երևան, «Գիտություն»:
Խենյան Է. (2008), ՀԱԹ - 25 (Իջևան), Երևան, «Գիտություն»:
Լալան Ե. (1904), *Ժողովրդական առակներ*, Թիֆլիս:
Խարիտոնով Մ. (1986), *Բաները Նասրեղին*, Երևան, «Հայաստան»:
Հովսեփյան Հ. (2009), *Ղարադաղի հայերը*. Հատոր 2, Բանահյուսություն, Երևան, «Գիտություն»:
Նազարեան Զ. (1876), *Անեկդոտներ*, Ա հատոր՝ Բաքու, Բ հատոր՝ 1877, Թիֆլիս, Գ հատոր՝ 1883, Թիֆլիս:
Շահագիզեան Ս. (1892), *Միծաղի փոսրակ*, Թիֆլիս:
Սվազյան Վ. (2000), *Պոլսահայ բանահյուսությունը*, Երևան:

Armen Sargsyan

THE SATIRICAL FIGURE HODJA NASREDDIN IN ARMENIAN RECORDS

Summary

During 170 years a large corpus of jokes and humorous stories about Hodja Nasreddin has been collected in historical Armenia and regions inhabited by Armenians. Many of these anecdotes have been published in various collections; others appeared in volumes entirely related to Nasreddin. A considerable part of the texts is kept in Armenian archives. The material now available shows Nasreddin was so admired and popular among Armenians that folk stories about him were often believed to have originated in Armenian locations. In some cases jokes actually told by local satirical figures were ascribed to him.

ՆՎԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՉԻՆԱՍՏԱՆԸ ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ

Հրաշապատում հեքիաթի կառուցվածքային կայուն գործառույթներից է հերոսի՝ հեռավոր աշխարհի մեկնելը՝ այնտեղ փորձություններ հաղթահարելու, կախարդական իրեր կամ հարսնացու բերելու նպատակով: Աշխարհը, ուր մեկնում է հերոսը, սովորաբար ընկալվում է որպես կախարդական, գերբնական և ամենայն հրաշքներով լի այնկողմնային մի տարածք, ուր հասնելը քչերին է տրված, իսկ կոնկրետ փորձության հաղթահարումը՝ միայն ընտրյալին՝ հերոսին:

Հայ ժողովրդական հեքիաթներում այդ կախարդական աշխարհը հիմնականում կամ մտնում է անանուն, կամ կոչվում է Մութ աշխարհ, Սև աշխարհ՝ այդպիսով հակադրվելով Լույս աշխարհին: Մակայն մի շարք հեքիաթներում գերբնական աշխարհը անվանվում է արևելյան երկրների անուններով՝ Չինումային, Հնդստան, Արաքստան, Մարա երգիր և այլն: Այս հեռավոր երկրները ընկալվում են որպես ծանոթ աշխարհից դուրս, գերբնական, հրաշքներով լի տարածքներ՝ այդպիսով ասոցիացվելով այնկողմնային, կախարդական աշխարհին: Համապատասխանաբար նույնպիսի գերբնական հատկանիշներով են բնութագրվում այս աշխարհների իրերն ու մարդիկ:

Նշված արևելյան երկրների անվանումները հեքիաթներում չեն գործածվում կոնկրետ աշխարհագրական տարածք մատնանշելու նպատակով: զրանք խոհրդանշական ընկալում ունեն, իրենց կիրառությամբ էլ համարժեք են և հաճախ սյուժեի տարրերակներում փոխարինում են իրար: Այս առումով հատկապես խոսում է այն փաստը, որ Չինաստանի ու Հնդկաստանի հեքիաթային անվանումների՝ Չին Մաչինի և Հնդու Յամանի կողքին տարբերակներից մեկում հանդիպում է Հնդու Մաչին անվանումը (ՀժՀ IX, 1968, 200-201), որը ակնհայտորեն առաջին անվանումների միացությունից է առաջացել և խոսում է դրանց համարժեքության և իմաստային նույնականացման մասին:

Չինաստանի կամ Չին-Մաչինի, Հնդստանի, Արաքստանի համարժեք կիրառության օրինակներ մեզ տալիս են նաև քանակային ալի ժանրերը: Այսպես, հայոց առած-ասացվածքներում ու հանելուկներում այս երկրները հաճախ հիշատակվում են ինչպես ուղղակի հեռավորությունը ակնարկելու նպատակով (*Վանգվոց կաղը մինչև Չինաստան է հասեր* (Մրվանձտյան, 1978, 139), *Խնձորկեցի կաղը Հնդստան է հասել* (Ղանալանյան 1960, 97), այնպես էլ առասպելական, երկնային աշխարհն են խորհրդանշում (*Հնդստան, Արաքստան, // Երկու պարոն էկան նայան. // Վեր կացին, գնացին, // Մանրերը ժողովվեցին*: Հանելուկի լուծումն է՝ երկինք, արեգակ, լուսին և աստղեր (Հարությունյան 1965, 11): Չինաստանի և Հնդկաստանի՝ որպես առասպելական աշխարհների նույնարժեք կիրառության ակնհայտ օրինակ են մեզ տալիս հայոց երկվորյակային առասպելները, ուր Չինաստանից Հայաստան ապաստանած

1 Հնդկաստանի՝ որպես առասպելական, երկնային աշխարհի իմաստավորման մասին ակնարկում է նաև Ս.Հարությունյանը (Հարությունյան 2000, 19):

Մամիկին և Կոնակին առասպելի ավելի ուշ փոփոխակում փոխարինում են Հնդկաստանից եկած Դեմետրն ու Գիսանեն: Ինչպես իրավացիորեն նկատում է Մ. Աբեղյանը. «Երկու դեպքում ևս դա պետք է առնվի ոչ իսկական մտքով: Հնդկաստան ու Չինաստան իբրև արևելյան հեռավոր երկրներ միշտ իրար տեղ դուրս են գալիս թե՛ մեր հեքիաթների և թե՛ խոսք ու զրույցի մեջ» (Աբեղյան 1966, 298):

Այս ամենով հանդերձ պետք է նշել, որ հայ ժողովրդական հեքիաթներում ակնհայտորեն ավելի հաճախակի կիրառությամբ առանձնանում է Չինումային կամ Չին-Մաչին կախարդական աշխարհը: Ի դեպ, հեքիաթներում, ուր վերոհիշյալ արևելյան երկրները հանդես են գալիս միաժամանակ, դրանցից բուն կախարդական աշխարհի խորհրդանիշ է ընկալվում հենց Չինաստանը: Այսպես, թագավորի երեք որդիները մեկնում են հարսնացու որոնելու: Ավագը ամուսնանում է Հնդստանի թագավորի աղջկա հետ, միջնեկն՝ Արաքստանի, իսկ կրտսերը, ում սովորաբար բաժին են հասնում ամենաբարդ և անհաղթահարելի փորձությունները, մեկնում է Չինումային, և միայն այստեղ է սյուժեն հյուսվում հրաշապատում մոտիվներով, այստեղ են հանդես գալիս դե Զամփուլադը ու կախարդական հատկանիշներով օժտված արքայադուստրը (ՀժՀ XIII, 1985, № 2): Հեքիաթի՝ եռակիության սկզբունքի կիրառման դեպքում, որպես կանոն, բոլոր առումներով գերապատվությունը երրորդին է:

Այլ պարագայում թերևս անհարկի կլինեք հեքիաթային կախարդական աշխարհի բնութագիրը կապել կոնկրետ սյուժեների հետ, քանի որ գերբնական, անդրաշխարհային նման տարածքները հայտնվում են բոլոր հրաշապատում հեքիաթներում, սակայն այս դեպքում հարաբերականորեն կայուն մոտիվների առկայությունը թույլ է տալիս խոսել նաև Չին-Մաչին կախարդական երկրի ընկալման յուրահատկությունների մասին կոնկրետ սյուժետային դրսևորումներում: Չինումայինը՝ որպես կախարդական երկիր, հիշատակվում է հատկապես հետևյալ սյուժեներում:

Հերոսին հանձնարարություն է տրվում բերել Չինումայինի թագավորի աղջկան: Որոշ սյուժեներում այդպիսի պահանջ է ներկայացնում վիշապը, որը փաթաթվում է հարսնացուների հետ տուն վերադարձող արքայազների վրանի շուրջ և գերի է վերցնում փոքր եղբոր հարսնացուին: Հերոսը մեծ դժվարությամբ բերում է աղջկան, վիշապը պայթում է, աղջիկ է դառնում (ՀժՀ IV, 1963, № 28), կամ տղա է դառնում. պարզվում է, որ նա Չին թագավորի տղան է (ՀժՀ III, 1962, № 11):

Չին-Մաչինի արքայադուստրը բերելու առաջադրանքը մի խումբ այլ տարբերակներում այն անիրագործելի համարվող հանձնարարություններից է, որոնք տրվում են հերոսին՝ նրան կորստի մատնելու նպատակով: Հանձնարարությունը տալիս են կամ հերոսի մայրն ու նրա սիրելի դուստրը (Խնձորյան 2000, № 11), կամ դավաճան քույրերը, որոնք ժամանակին փոխել էին իրենց կրտսեր քրոջ ոսկեձամ ու ոսկեձկույթ զավակներին և փոխարենը շան լակոտներ գրել: Չինաստանից բերված աղջիկը բացահայտում է քույրերի նենգ արարքը (ՀժՀ X, 1969, № 21):

Սակավաթիվ հեքիաթներում Չինումայինը այնկողմնային աշխարհ է, ուր կինը տեղափոխում է իր մահացած ամուսնու մարմինը (Գուրունյան 1991, 133-144), ուր թոչուն դառնալով թոչում է գորտ-աղջիկը, որի շապիկը այրել էր ամուսինը (ՀժՀ III, 1962, № 20) և այլն:

Ինչպես տեսնում ենք, Չինումայինին վերաբերող սյուժեների մեծ մասում հերոսը մեկնում է այդ երկիր՝ բերելու *Չինումայինի թագավորի աղջկան*:

Չինաստանի արքայադուստրը հեքիաթային չտեսնված, «հուրի-մալաթ» գեղեցկուհիներից է, որի համբավը տարածվել է ամբողջ աշխարհում, որին ճգտել են տիրանալ շատերը, սակայն ոչ մեկի չի հաջողվել, որին տիրելու համար ընտրյալ հերոսը պետք է պայքարի կամ նրա բազմաթիվ երկրպագուների, կամ վիշապի, կամ էլ հենց իր՝ տղամարդու հագուստով ծալոված գեղեցկուհու դեմ: Չինումաչինի արքայադստեր՝ որպես բացառիկ գեղեցկուհու համբավը հեքիաթներից մեկում անգամ պատճառ է դառնում, որ մեկ այլ գեղեցկուհի, վիշապի փոխակերպվելով, հերոսին ուղարկի այդ արքայադստերը բերելու՝ գեղեցկությամբ նրա հետ մրցելու նպատակով: Աղջկան տեսնելուց հետո վիշապը պայթում է, մի գեղեցիկ աղջիկ դառնում և հարցնում հերոսին, թե արդյոք իրենցից որն է ավելի գեղեցիկ: Հերոսը պատասխանում է՝ «Շիտակն օր ըսեմ, դու ռունդ ես (գեղեցիկ)»: Աղջիկն ասում է. «Բոլոր աշխարհը էտոր կը խոսեին, ինձի չէին խոսի, ես էդոր համար էդման սեփրազութն նենեի օր էտոր բեռեի մենք տեսնիմ» (ՀԺՀ IV, 1963, 269):

Չինական արքայադատերը մենք տեսնում ենք նաև «Մասնա ծոեր» էպոսում: Որոշ պատումներում առաջին ճյուղի հերոսուհի սեփրազ-կախարդուհի *Քսսուն* *Ճող Մամը* ներկայացվում է որպես Չինումաչինի թագավորի աղջիկ («Մասնա ծոեր» 1936, պատումներ Է, Ժ, ԺԱ, ԺԲ): Եվ հեքիաթում, և էպոսում Չինաստանի արքայադատերը բնորոշ են այնպիսի հատկանիշներ, որոնք բնութագրական են ընդհանրապես կախարդական երկրի արքայադատերը, հեքիաթային և էպիկական դյուցազնուհիներին: Նա հանդես է գալիս որպես *կախարդուհի՝ սեփրազ*, որն օժտված է ինչ-որ հզոր, գերբնական ունակությամբ: Իր երկրպագուներին քար կամ կենդանի է դարձնում, սպանում կամ մեկ այլ վնաս է հասցնում, և միայն հերոսին է հաջողվում թուլյազերծ անել ու տիրել նրան: Այսպես, էպոսում Չինաստանի արքայադատերը բազմաթիվ արքայազների «սեփր» է արել, մեկին աղվես է դարձրել, մեկին կախարդել է, որ ինչքան ջուր խմի, չհագնա: Նրա «սեփրի» գաղտնիքը յոթ ծովերի կղզու վիշապի բերանի մատանին է, որ կարող է հանել միայն հրեղեն մարդը («Մասնա ծոեր» 1936, 321): Հեքիաթի արքայադատերը ևս, ինչպես մեր էպոսի դյուցազնուհիները, որոշ պատումներում տղամարդու հագուստով մենամարտում է հերոսի դեմ, որը եկել էր տիրանալու իր հոր՝ Չին թագավորի ծիուն (ՀԺՀ XI, 1980, № 18):

Չինաստանի աղջիկն օժտված է նաև արևային հատկանիշներով. նա ոսկե մազեր ունի, հաճախ գտնվում է վիշապի գերության ներքո, կամ նրան փորձում են փախցնել դեերը: Նրան տիրանալու համար տեղի է ունենում վիշապամարտ: Ոսկեմազ արքայադստեր կերպարը ընդհանրապես քնորոշ է կախարդական աշխարհին, ուր գերակշռում է ոսկին ու ոսկեգույներ: Ռուսական հեքիաթներում, օրինակ, այդ ոսկեմազ արքայադստերը կոչվում են *Елена Золотая Коса Непокрытая Краса* (Прото 1986: 285): Եվ էպոսում Չինական արքայադուստր ներկայացվող Քաոսուն Ճուդ Մամի, Ա հեքիաթի չինական գեղեցկուհու դեպքում շեշտվում են ոսկե վարսերը:

Չինական աշխարհի հետ կապված պոտենցիալում հարաբերականորեն կայուն դրսևորում ունեն նաև **Չինաստանի թագավորի** հետ կապված մոտիվները: Մի շարք հեքիաթներում Անտես-Անման գեղեցկուհին հեքիաթի սկզբում չի հիշատակվում որպես Չինաստանի արքայադուստր, սակայն պարզվում է, որ նրան ուզում է կնության առնել Չինաստանի արքայազնը: Այլ հեքիաթներում արդեն հերոսի կինը դարձած գեղեցկուհու ոսկե մազն ընկնում է ծովը, հասնում Չին թագավորին, որը կամենում է տիրել նրան և փախցնում է ջաղու պառավի միջոցով (ՀԺՀ III, 1962, № 27):

Համանման դրվագ է ներկայացված նաև «Սասնա ծռերի» պատումներից մեկում: Դավիթը գնում է Գյուրջխտանի գեղեցկուհուն բերելու, պարզվում է, որան Չին արքան է ուզում ամուսնացնել իր որդու հետ: Մյուսների զարգացման մեջ տեսնում ենք Չին արքայի և Դավթի կռիվը, սա բացառիկ պատում է, ուր Դավիթը մահանում է հենց կռիվ ժամանակ (երդմնադրուժ եղած ու թուլացած Դավթին մարտի դադարի ժամանակ դավադրաբար սպանում է մի պառավ («Սասնա ծռեր», 1936, 377):

Քանարկվող պոեմներին շատ մոտ իրապատում հեքիաթում Չինաստանի թագավորի փոխարեն հանդես է գալիս Չինաստանի ոսկերիչը, իսկ գեղեցկուհին, որի հետևից մեկնել էր հերոսը, ոսկերչի կինն է, որին ամուսինը փակի տակ էր պահում (ՀԺՀ IV, 1963, № 28):

Չինաստանի թագավորն ու ոսկերիչը այս հեքիաթներում հակահերոսի հասկանալիչներն են ի հայտ բերում, ներկայանում են ակնհայտ դիվային գործառույթներով. կամենում են բռնի տիրել, կամ էլ ուղղակի փախցնում են արևային աղջկան: Պատահական չէ նաև, որ հենց ոսկերիչն է աղջկան փակի տակ պահողը. ոսկերիչը ոսկու տիրակալն է, իսկ ոսկին արևի խորհրդանշաններից է (այս մասին մանրամասն տես Ջաքարյան 2004, 45-50):

Այս ամենը հիմք է տալիս հեքիաթային Չինումային սիմվոլիկ տարածքը բնութագրել որպես երկնային, արևային մի երկիր, արևային գեղեցկուհու արևելյան բնակավայր:

Ռուս մեծ բանագետ Վ.Պրոպեր հեքիաթի կախարդական, այնպողմային աշխարհի մասին ուշագրավ դիտարկում է կատարում: Խոսելով այն մասին, որ հերոսի վերջին հանգրվանը արևային երկիրն է, ուր և ոսկեմազ արև աղօթկն է նա նկատում է. «Այն ժողովուրդները, որոնք չեն ունեցել արևի պաշտամունք, նրանց հատուկ չէ կախարդական առարկաների ոսկե գույնը» (Որոտո 1986: 293): Հայ ժողովրդի դիցաբանական աշխարհում արևի պաշտամունքը յուրահատուկ տեղ ունի. այդ է վկայում Միհրի պաշտամունքի լայն տարածումն ու նրա առասպելի հարատևությունը մեր էպոսում: Հեռուաբար բնական է, որ մեր հեքիաթներում արևային աշխարհի նրա հետ կապված՝ ոսկուն ու ոսկեգույնին առնչվող մոտիվները ամենաահաճախադեպն են ու սիրվածը: Միանգամայն օրինաչափ է նաև, որ հայ մարդու համար որպես արևի բնակավայր են ընկալվել հենց արևելյան երկրներն ու հատկապես՝ Զինաստանը:

Չինաստանի՝ որպես հրաշքների, շքեղության և ճոխության աշխարհի հայկական ընկալման մասին է խոսում նաև հայերենում մի շարք բառերի ստուգաբանությունը: Այսպես, մեր լեզվում հաճախակի կիրառվող *շնաշխարհիկ* բառը, որն ամենայն հավանականությամբ ստուգաբանվում է որպես Չինաց աշխարհից բերված և նշանակում է «արտակարգ կերպով լավ՝ գեղեցիկ, անզուգական, աննման» (Աղայան 1976, 1162), ուղղակիորեն նույն՝ հեքիաթային իմաստավորումն է պարունակում: Ըստ երևույթին, նման մտայնություն է ընկած նաև *ճենապակի* բառի ստուգաբանության հիմքում (ճենական-չինական ապակի), թեև այստեղ ստուգաբանությունը գիտական բացատրություն ունի. այդ ապակին առաջինը ստեղծել են Չինաստանում, սակայն բառի ստեղծման և լայն տարածման հարցում, կարծում ենք, մեծ դեր է խաղացել նաև Չինաստանի՝ որպես կախարդական, հրաշքներով լեցուն հեռավոր արևելյան երկրի հայկական ընկալումը:

Չինաստանի՝ նման ընկալման մասին է վկայում նաև Մովսես Խորենացին, որը Մամգոնի հետ կապված դեպքերը շարադրելիս կանգ է առնում նաև Ճենաց

աշխարհի նկարագրության վրա: «Նրանց աշխարհն սքանչելի է ամեն տեսակ պտուղների առատությամբ, զարդարված է գեղեցիկ բույսերով, ունի շատ սիրամարգ, արտադրում է առատ քրքում և մետաքս, այնչափ շատ կան այնտեղ համուրներ, հրեշներ և էշայծյամ կոչվածներ: Այնտեղ, ասում են, ընդհանուրի կերակուր են կազմում փայտանք, պորը և նմանները, որոնք մեզ մոտ պատվական և քչերին մատչելի կերակուրներ են: Իսկ ակնեղենների ու մարգարիտների հաշիվը, ասում են, չգիտեն: Եվ այն զգեստները, որ մեզ մոտ պատվական է և քչերին մատչելի, նրանց մոտ սովորական զգեստ է» (Խորենացի 1981, 271), – գրում է պատմագիրը: Այնուհայտ է, որ պատմահայրը փոխանցում է Չինաստանի մասին ժողովրդական պատկերացումները, այդ է վկայում նաև երկու անգամ կրկնվող «ասում են» բառը:

Խորենացու՝ ձենաց աշխարհի բնութագրումը հարցի մեկ այլ դիտանկյուն է բացահայտում: Ինչպես տեսանք, բազմաթիվ այլ բնորոշումների կողքին Խորենացին Չինաստանը բնութագրում է նաև որպես *սիրամարգաշար* մի երկիր: Մի քանի քաղաք պարսկական փոխառություն է, որ նշանակում է *չինական թռչուն*, ծագել է *sin-չին* և *murg-թռչուն* բառերից (Մալխասեանց 2010, 217): Հայկական բարբառներում այն տարբեր հնչողություն ունի՝ սիրամարք (Ախգ.), սինամարք (Մշ.), սինամահաֆր (Ալշ.), սինամոն խավք (Բշ.) (Աճառյան 1979, 219) և, ինչպես արդեն բազմիցս նկատվել է, դա նույն *Մինամ հավքն* է, որը Ջնրուխտ հավքին և արծվին զուգահեռ մեր ժողովրդական հեքիաթներում հաճախ հանդես է գալիս որպես կենաց ծառի վերնամասի բնակիչ և հերոսին տանում կախարդական, այնպիսի մային աշխարհ: Ուշագրավ է, որ Մինամ հավքը հայոց հանելուկներից մեկում պատկերվում է երկնային Հնդու քաղաքի քառասուն ճյուղերից մեկի վրա:

Մեծ ծառն է Կա Հնդու քաղաք,
Ճողեր թալե քաղաք քաղաք,
Հըմեն ճողին քյառսուն ճրագ,
Էն մեկ ճողին՝ սինամախավք
(Հարությունյան 1965, № 75):

Հանելուկը վերաբերում է երկնքին ու աստղերին: Փաստորեն Հնդու քաղաքն այստեղ առասպելական, երկնային քաղաքի իմաստավորում ունի (Հարությունյան 2000, 19):

Հեքիաթների որոշ պատումներում Մինամ հավքը հերոսին տանում է *Մինամ թագավորի* երկիր (Խաչատրյան 1999, № 3): Եթե Մինամ հավք նշանակում է չինական թռչուն, ուրեմն Մինամ թագավորի երկիրը նույն Չին թագավորի երկիրն է՝ Չինաստանը: Մինամ թագավորի մասին պոեմն դարձյալ գերբնական, հրաշապատում մոտիվներով լի մի հյուսվածք է, որն առկա է հայոց ամենատարբեր հեքիաթներում:

Հեքիաթային նյութը մեզ տալիս է Մինամ թագավորի երկրի և Չինումայինի կապի ևս մեկ ապացույց: Արքայազների վրանի շուրջ փաթաթված վիշապը, որը, ինչպես արդեն նշել ենք, որոշ պատումներում հերոսին ուղարկում է Չինաստանի արքայադստերը բերելու, նույն պոեմի այլ տարբերակներում հերոսին հանձնարարում է իմանալ Մինամ թագավորի գաղտնիքը: Մինամ թագավորի երկիր կարող է տանել միայն հավքը՝ Ջնրուխտ կամ Մինամ, որի ձագերին վիշապից պետք է ազատի հերոսը: Դա մի դժվար ուղևորություն է, որն անգամ հավքն է դժկամությամբ հանձն առնում, և հերոսից պահանջում է ճանապարհի համար

վերցնել 40 ոչխարի դմակ և 40 լիտր գինի: Հեքիաթների շարունակությունը դարձյալ համապատասխանում է. գաղտնիքն իմացած հերոսի վերադառնալուց հետո վիշապը պայթում է և աղջիկ դառնում. պարզվում է՝ նա Մինամ թագավորի քույրն է կամ դուստրը (Գրիգորյան 1983, № 2, 76–81): Մեկ այլ ուշագրավ դիպաշարում տեսնում ենք աղջկա և թռչնի նույնացում: Այստեղ Մի քանի քաղաք Արաբստանի թագավորի կրտսեր դուստրն է, որին փախցրել էր դևը: Աղջիկը աղոթքով «Մի քանի քաղաք–խավ» է դառնում՝ հեքիաթի վերջում նորից վերածվելով աղջկա (ՀԺՀ IX, 1968, Հավելված 1, № 15 (97):

Ծագումնաբանական նշված ընդհանրություններն, իհարկե, հիմք են տալիս ենթադրելու, որ Մինամ թագավորի երկիր կոչված սիմվոլիկ տարածքը նույն Չինումայինն է՝ մեկ այլ անվանումով: Թեև Մինամ հավք և Մինամ թագավորի երկիր անվանումներն արդեն լիովին կորցրել են իրենց նախնական՝ չինական հավք և Չինաստան նշանակությունները և բացարձակ անիրական, առասպելական արժեք են ձեռք բերել, այնուամենայնիվ դրանց ծագումը մեզ դարձյալ ուղղորդում է դեպի Չինաստանի՝ հայերի համար ունեցած հեքիաթային, կախարդական աշխարհի նախնական սիմվոլիկ իմաստավորումը:

Չինումային գերբնական երկիրը իր իմաստավորումը որոշակիորեն պահում է նաև իրապատում խոհախրատական հեքիաթներում, ուր այն արդեն ընկալվում է ոչ թե որպես կախարդական, այլ ազնվության, արդարադատության երազված մի աշխարհ, ուր դատարան չկա, որովհետև գողեր չկան, ուր իշխանավորները արդար վճիռներ են կայացնում, իսկ մարդիկ պարզ են ու մաքուր: «Ես քաղաք էման քաղաք էր, օր ոչ գող կար, ոչ գիշութեն կար, մենակ մեկ քաղաք կը քաշեին թյուրնի վրեն, կերթային կը պառկեին...», – այսպես է բնութագրում բանասացը Չինի–Մաչին քաղաքը, ուր մեկնել էր հերոսը պանդխտության և ծառայության էր մտել ոսկերչի մոտ (ՀԺՀ IV, 1963, № 44):

Ամփոփելով նշենք, որ հայ ժողովրդական հեքիաթներում հիշատակվող հեռավոր արևելյան երկրներից հատկապես Չինաստանն է հանդես գալիս որպես կախարդական աշխարհի խորհրդանշ: Նրա շուրջ հյուսված պոեմները հարաբերականորեն կայուն դրսևորում ունեն, ուր մեծ դերակատարում ունի Չինաստանի արքայադուստրը, որը հանդես է բերում ընդգծված արևային հատկանիշներ: Դիվային հակահերոսի բացասական բնութագիր ունի Չինաստանի թագավորը կամ ոսկերիչը, որը բռնի տիրանում է արևային աղջկան:

Չինաստանի՝ որպես կախարդական աշխարհի խորհրդանշի մեկ այլ դիտանկյուն են ներկայացնում Մինամ հավքի ու Մինամ թագավորի մասին պոեմները, որոնք ստուգաբանվում են որպես չինական հավք և Չին թագավոր, սակայն հեռացած լինելով իրենց նախնական իմաստից, բոլորովին անիրական, այլաբանական իմաստավորում են ձեռք բերել՝ շարունակելով սակայն իրենց մեջ կրել նախնական ընկալման հետքերը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արեղյան Մ. (1966), *Երկեր*, հ. Ա, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն:
2. Աղայան Էդ. (1976), *Արդի հայերենի բացարձակական բառարան*, Եր., «Հայաստան» հրատ.:
3. Աճառյան Հ. (1977), *Հայերեն սովորական բառարան*, հ. 3, Եր., ԵՊՀ հրատ.:
4. Աճառյան Հ. (1979), *Հայերեն սովորական բառարան*, հ. 4, Եր., ԵՊՀ հրատ.:
5. Գրիգորյան Ռ. (1983), *Գեղարքունիք*, ՀԱԲ, հ. 14, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ.:

6. Գուրունյան Հ. (1991), *Համընտհայ բանահյուսություն*, Ե., «Լույս» հրատ.:
7. Զաքարյան Ե. (2004), Ոսկերիչը հայկական հեքիաթներում, *Հայ ժողովրդական մշակույթ, XII հանրապետական գիտաժողովի նյութեր*, Եր., էջ 45-50:
8. Խաչատրյան Ռ. (1999), Թալին, *ՀԱԲ*, հ. 19, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.:
9. Խեմյան Է. (2000), Տավուշ, *ՀԱԲ* հ. 21, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.:
10. Խոբենացի Մ. (1981), *Հայոց պատմություն*, Աշխարհարար թարգմանությունը և մեկնաբանությունները Ստ. Մալխասյանի, Եր., ԵՊՀ հրատ.:
11. Հակոբյան Գ. (1974), *Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը*, Եր., «Հայաստան» հրատ.:
12. ՀԺՀ (1962), հ. 3, կազմ. Ա.Մ. Նազիկյան, Եր., ՀԽՍՀ ԳԱ հրատ.:
13. ՀԺՀ (1963), հ. 4, կազմ. Մ.Ս. Մկրտչյան, Եր., ՀԽՍՀ ԳԱ հրատ.:
14. ՀԺՀ (1973), հ. 6, կազմ. Ա. Մ. Նազիկյան, Վ. Գ. Սվազյան, Եր., ՀԽՍՀ ԳԱ հրատ.:
15. ՀԺՀ (1968), հ. 9, կազմ. Մ.Ս. Մկրտչյան, Եր., ՀԽՍՀ ԳԱ հրատ.:
16. ՀԺՀ (1969), հ. 10, կազմ. Ս. Տարոնցի, Եր., ՀԽՍՀ ԳԱ հրատ.:
17. ՀԺՀ (1980), հ. 11, կազմ. Մ.Ս. Մկրտչյան, Եր., ՀԽՍՀ ԳԱ հրատ.:
18. ՀԺՀ (1985), հ. 13, կազմ. Ա.Ս. Նազիկյան, Եր., ՀԽՍՀ ԳԱ հրատ.:
19. Հարությունյան Ս. (2000), *Հայ առասպելաբանություն*, Բեյրութ, Համազգային Վահե Մեթեան տպարան:
20. Հարությունյան Ս. (1965), *Հայ ժողովրդական հանելուկներ*, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
21. Ղանալանյան Ա. Տ. (1960), *Առածանի*, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
22. Մալխասեանց Ստ. (2010), *Հայերեն բազմաբանական բառարան*, հ. 4, Եր., ԵՊՀ հրատ.:
23. Մրվանձտյան Գ. (1978), *Երկեր*, հ. 1, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
24. «Սասնի ծռեր» (1936), հ. Ա, խմբագրեց պրոֆ. Մ. Արեղյան աշխատակցությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Պետական հրատ.:
25. Пропп В. (1986), *Исторические корни волшебной сказки*, Ленинград, Изд-во ЛГУ.

Nvard Vardanyan

CHINA AS A FABULOUS LAND IN ARMENIAN FAIRY TALES

Summary

In Armenian fairy tales China and its fairy tale toponym *Chinumachin* often appear to symbolize a thrilling, far away land, full of wonders. In such fairy tales the gold-haired 'Chinese' princess is inevitably the Beauty of the World. It is for her sake that the hero struggles with the dragon and the King of China. The China motifs are frequently met in the first branch of *Daredevils of Sassoun*, the Armenian national epic too. Such affinities support our suggestion that in Armenian worldview China is a symbol of a fabulous world, the Eastern dwelling of the Radiant Beauty. *King Sinam's Land* and the *Sinam Bird* are expressions the etymology of which point at the Land of the Chinese King and the Chinese Bird. In a series of Armenian realistic folk tales China is presented as the Ideal Land of justice and honesty.

Натали Арутюнян

О ПРЕЛОМЛЕНИИ ОБРАЗОВ ВОСТОЧНЫХ СКАЗОК И ЛЕГЕНД В ЕВРОПЕЙСКОМ И АРМЯНСКОМ МУЗЫКАЛЬНОМ ТЕАТРЕ

Светлой памяти Георгия Григорьевича
и Ирины Георгиевны Тиграновых

Древние цивилизации, которые географически расположены по большей части к юго-востоку от европейского континента, не могли не привлекать внимание европейских культур как с прагматической, так и с духовной точек зрения. *От ignotum pro magnifico est* – объективные ограничения общения между странами Востока и Запада, и стихийная мифологизация всего того, что случайно становилось известно о восточных странах, привели к тому, что в коллективном бессознательном жителей Европы сформировалось представление о Востоке в целом как о нереальной, волшебной, одним словом, сказочной стране. Но и сегодня, когда благодаря техническим средствам связь между различными странами стала гораздо активнее, эти стереотипы во многом сохранили свою силу, а восточная волшебная сказка, получившая множество воплощений в музыкальном театре, а отсюда – и в кино и мультипликации, не потеряла своего обаяния и привлекательности.

Известно, что ещё в 326 году до н.э. Александр Македонский положил начало эллинизму, ставшим исторически первым серьёзным шагом на пути синтеза культурных достижений различных цивилизаций. Но и после того, как Васко да Гама открыл морской путь в Индию (1499), и путешественники из Португалии, Голландии, Англии, Дании и Франции начали привозить в Европу редкие специи, чай, шёлк, ковры, искусные украшения из дерева, золота, серебра и драгоценных камней, интерес к древним легендам не пропал. Напротив, восточные сказки и легенды стали обрастать новыми подробностями, а сказочные персонажи, благодаря этим предметам роскоши, обретали новую жизнь, сливаясь в воображении европейцев с подлинными жизненными реалиями. Так, с течением времени шло формирование и нового жанра экзотической литературной волшебной сказки. При этом «тоска по слишком нежным странам», – как определил непреодолимую тягу европейцев к восточной экзотике К. Дебюсси, – была весьма неясной. Так, «само название города Голконда стало синонимом невообразимого богатства. Но среди экзотических или «ориентальных» вещей царила полная неразбериха – турки, африканцы, персы, американские индейцы и жители Карибского бассейна – все были из одного и того же воображаемого региона – «Индий», который существовал больше в поэтических фантазиях европейцев, чем на географической карте» (Warren 2006: 97–98).

Совершенно иная картина была в Армении, тесные политические и экономические отношения которой с Ассирией, Индией, Персией, Шумером, Египтом и др. восточными странами сформировались намного ранее, чем отношения с древними

1. Всё неизвестное представляется величественным (лат., Тацит).

Грецией, Римом, Византией и странами Средиземноморья, ставшими колыбелью европейской цивилизации. Армянские купцы, постоянно ездившие по Великому Шёлковому пути из Китая в Европу и обратно, ввозили в Европу не только армянские вина, ковры и ювелирные изделия, но и разнообразные товары, произведённые в других странах. И, поскольку согласно роду своей деятельности они владели многими иностранными языками и разбирались в национальных стилях, то они были восприимчивы и к фольклору тех народов, с которыми им приходилось общаться¹.

Вероятно, именно в силу близкого знакомства с восточными государствами, отношение к сказаниям, сказкам и легендам народов Востока в Армении изначально было более тонким и дифференцированным, нежели в европейских странах. Более того, многие из этих легенд имеют армянские версии, которые активно дополняют известные информацией, связанной с героями армянского происхождения и с отношением армянского народа к определённым историческим лицам и событиям. Среди них – армянская версия распространённой в древнем мире легенды о Семирамиде (ассир. Шаммурамат; греч. Σεμίραμις; арм. Շամիրամ *«Шамирам»*), которая, в отличие от всех других версий этой легенды, сильному и властному женскому характеру ассирийской царицы *противопоставляет* не менее сильный мужской характер. И, хотя армянский царь Ара Прекрасный, по этой версии, гибнет в сражении, навязанном ему оскорблённой гордостью Шамирам, однако он остаётся верным своей родине и своему этическому идеалу.

Обращаясь к операм и балетам, созданным на мотивы восточных сказок и легенд или заимствующих некоторые образы из них, можно заметить, что в жанровом плане они неоднородны. Здесь можно встретить и собственно волшебные-сказочные, и историко-героические, и лирические, и комические оперы и оперетты. Нередко различные жанровые признаки можно встретить в одном произведении. Так, выраженный сатирический характер в опере «Золотой петушок»² сочетается со сказочностью, связанной с образами Звездочёта и Шемаханской царицы. При этом немаловажно, что само искусство обольщения, связанное в воображении композитора с ориентализмом³ и выраженная им в томно-сладострастной музыкальной теме Шемаханской царицы (как и ранее в более целомудренной, но не лишённой чувственной прелести теме Шахерезады⁴), воспринимается как своего рода реальное

1 О роли армян в развитии торговых и культурных отношений между Востоком и Западом свидетельствуют многие источники. Философ Иммануил Кант также обратил к этому вопросу в своей «Антропологии», и, со свойственной ему основательностью, охарактеризовал армян именно с этой, известной европейцам, стороны: «У другого христианского народа, у армян, господствует какой-то торговый дух особого рода, а именно: они занимаются обменом, путешествуя пешком от границ Китая до мыса Корсо на Гвинейском берегу; это указывает на особое происхождение этого разумного и трудолюбивого народа, который по направлению от северо-востока к юго-западу проходит почти весь Старый Свет и умеет найти радушный приём у всех народов, у которых они бывают; это доказывает превосходство их характера (первоначального формирования которого мы уже не в состоянии исследовать) перед легкомысленным и пресмыкающимся характером теперешних греков» (Кант 1966: 573).

2 «Золотой петушок» – последняя опера Н.А. Римского-Корсакова (1908) по одноимённой сказке А.С. Пушкина (либретто В.И. Бельского).

3 В самом общем смысле, ориентализм (от лат. *oriens* – восток) – направление в европейском искусстве, в котором используются тематика, символика и мотивы Востока и Индокитая. Интересен анализ этого понятия Эдвардом Саидом в книге «Ориентализм. Западные концепции Востока» (Saïd 1978), где рассматриваются различные аспекты этого явления.

4 Н.А. Римский-Корсаков «Шахерезада» – симфоническая сюита, соч. 35, впервые была исполнена

чародейство, уводящее не только царя Додона, но и слушателей оперы в волшебный сказочный мир. Заметим, что в тексте самих сказок «1000 и одной ночи» Шахерезада выступает не в качестве обольстительницы, а как образ необыкновенно умной и благородной молодой женщины, которая решилась, рискуя собственной жизнью, спасти других от гнева царя Шахриара. И при том, что её голос звучит как бы «за кадром» – она не является героиней какой-либо из сказок, важно отметить, что это образ свободной женщины¹, которая каждый вечер приходит к обезумевшему от горя правителю не по принуждению, но по доброй воле! И всё же в музыкальном спектакле М. Фокина Шахерезада, становясь действующим лицом, подпадает под балетный стереотип, в котором искусство обольщения – важная составная часть восточного женского образа.

Звучащие в музыкальной сказке «Золотой петушок» слова А.С.Пушкина «Сказка ложь, да в ней намёк – добрым молодцам урок», относятся не только к восточной сказке, но и к музыкальному театру в целом: к какому жанру бы ни относились опера или балет, у каждого из них имеется особый глубокий подтекст, и всем им свойственно общаться со зрителем-слушателем посредством тех или иных аллегорий и метафор. Вот почему даже реальные исторические личности, становясь героями музыкального спектакля, становятся фигурами условно-аллегорическими. Это относится и к тем персонажам, которые, будучи облечены в художественную прозу литературного или драматического произведения, представляются нам совершенно реальными. Таковы, к примеру, король Франциск I и его шут Трибуле из драмы «Король забавляется» Виктора Гюго – столь чётко обрисованы их характеры. Однако, хотя в «Риголетто» Дж. Верди, созданной на основе этой драмы, все имена изменены, многое сокращено и, главное, пафос острого политического памфлета смягчён удивительно проникновенной музыкой, – смысл происходящего не теряется, но парадоксальным образом возрастает до общечеловеческого. И дело не только в специфических особенностях музыкального языка, позволяющего обращаться к самой сути характеров и действия, но и в том, что само формирование европейского музыкального театра – оперы-*seria* и балета, – преимущественно шло под знаком возрождения древнегреческого театра, в котором действовали боги и герои (Конен 1975: 58–60, 114–115, Ливанова 1983: 320–323). В музыкальном театре, и, в особенности, в балете, столь долго сохранялась связь аллегориями, свойственными мифологическому мышлению, что любые литературные или исторические персонажи вновь становятся в нём символическими выражениями абстрактных сил добра, зла, любви, мести, судьбы и возмездия. С другой стороны, подчёркивая сущностно важные черты исторических персонажей и событий, оперные и балетные спектакли восходят к древним народным сказаниям и легендам. Вель народные певцы-сказители, – и среди них такие титаны, как Гомер, – передавая новым поколениям своё понимание истории в традиционной музыкальной форме, лишь обозначали конкретные исторические события, концентрируя внимание на характерах исторических лиц и на их взаимоотношениях между собой. Однако,

под управлением автора 22 октября 1888-го года. А в 1910 году на музыку Римского-Корсакова был поставлен балет «Шахерезада» (Гранд-опера, Париж, хореография М. Фокина, декорации и костюмы Л. Бакста).

1 На староперсидском языке слово *Шахриара* означает «благородного происхождения». Согласно метасюжету сказок «1000 и одной ночи», она – дочь везира, что в условиях восточной деспотии даёт возможность проявить какую-то свободу и независимость суждений.

поскольку и в литературных, и в музыкально-драматических произведениях историческая правда порою чаще, чем в легендах, уступает место художественному вымыслу, то имена реальных исторических персонажей, их значение и роль зачастую весьма условны и могут более свободно переосмысливаться авторами для передачи своих идей¹.

В европейском оперном театре исторические личности, имеющие отношение к Востоку, представлены довольно широко – здесь и персонажи библейских легенд – «Навуходоносор» Дж.Верди², «Юдифь» Ал. Серова³, «Самсон и Далила» К.Сен-Санса⁴, «Саломея» Рихарда Штрауса⁵; и исторические лица и события, известные в основном посредством литературных обработок сочинений античных авторов – «Тигран» Ал. Скарлатти⁶ (1715), «Тамерлан» Генделя (1724) «Митридат, царь Понтийский» Моцарта (1770), «Осада Коринфа» Дж.Россини (1826), «Антоний и Клеопатра» Сэмюэля Барбера⁷ и многие другие. И, несмотря на то, что интерпретация роли в истории известных фигур, а зачастую и их биография трактуется в этих произведениях достаточно произвольно, а музыкальный язык и драматургия в них почти ничем не «выдают» их восточного происхождения, сама ориентальная тематика уже настраивает слушателей на погружение в иной, полный неожиданных открытий, мир. Наименее экзотично при этом воспринимались армянские исторические персонажи, в особенности царь Тигран Великий, который упоминался в «Сравнительных жизнеописаниях» Плутарха (Плутарх 1994) и в XXXVIII книге Филиппических историй римского историка I века Марка Юстина (Justinus 2009). В 1691 году вышел в свет свободный пересказ этих

1 Так, в своей комической опере «Ксеркс» (1738) Г.Ф. Гендель, воспользовавшись именем конкретного исторического персонажа – персидского царя Ксеркса, создаёт образ некоего вздорного правителя, для которого слова «нет» не существует, с целью представить тиранию известного правителя в смешном свете. Таким образом, для понимания конечного смысла появления того или иного персонажа в опере и в балете, важно учитывать не только историко-мифологический подтекст, но и конкретный социально-исторический контекст, в котором создавались и звучали эти произведения. В смешном свете предстают также Селим-паша и Осмин в «Похищении из сераля» В.А.Моцарта (1782) и др. операх на восточные темы.

2 «Набуко», или «Навуходоносор» (итал. Nabucco) — опера Джузеппе Верди на ветхозаветный сюжет, либретто Т. Солера. Премьера - 9 марта 1842 («Ла Скала», Милан), первая постановка окончательной версии - сентябрь 1844-го г. (Театро Сан-Джакомо, о. Корфу).

6 Ձեռ. ընդ. 1677, 1682, 2354, 2398, 4285, 5672, 5683, 5692, 6092, 6185, 6451, 6485, 6961, 7024, 7037, 7076, 7227, 7709, 7993, 8267, 8322, 8367, 8447, 8724, 8963, 8968, 9265, 9438, 10107, 10186, 10275, 10328:

7 Ձեռ. ընդ. 185, 283, 286, 308, 309, 567: Ս. Վ. Լորանտի նշած հոգվածը, էջ 297—309:

8 Ձեռ. ընդ. 2324, 367: Ն. Ա. Գրիգորյան, Զրույց Պենն Բանաբի, «Հանգում» ամսագրում, 1928, № 1—4, էջ 32:

9 Ձեռ. ընդ. 466: Ս. Վ. Ա. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 298:

10 Ն. Ա. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 308:

Այժմ ավելի հանգամանորեն բնենք X դարով թվագրվող հայերեն թարգմանությունների հարցը: Թարգմանության լեզվի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն ավելի շուտ միջին հայերեն է, քան գրաբար, մի փաստ, որ X դարին վերաբերող նման այլ գրական հուշարձանների բացակայության պայմաններում տարակուսանքի առիթ է տալիս: Եթե է, հայտնի է, որ միջին հայերենին բնորոշ բառեր և քերականական ձևեր հանդիպում են IX—X դդ. գրական հուշարձաններում ևս²², սակայն այդ դեպքում խոսքը վերաբերում է լոկալ առանձին-բառերի ու ձևերի: Մինչդեռ նշված թարգմանության լեզուն այնքան հեռու է գրաբարից, որ ն. Ակինյանն այն անվանում է «հնագույն ռամկորեն» և նույնիսկ «Տալոց նահանգի բարբառ»²³:

Սվ իրոք, թարգմանության լեզուն և շարադրանքի ոճը այնքան մոտ են խոսակցականին, որ ակամայից ստիպում են մտածել բանավոր ճանապարհով կատարված լինելու հնարավորության մասին: Սակայն համեմատություններ «Պղնձե քաղաքի հեքիաթի» արաբերեն բնագրի հետ հաստատում է, որ թարգմանությունն իրոք զբաղված ճանապարհով է կատարված:

Այսպես, հայերեն թարգմանության մեջ հանդես եկող Ամիր Մուսա անվանը արաբերեն բնագրում համապատասխանում է *أبو مرسى* Ամիր Մուսա անվանը, որ արաբերենի ոչ այնքան լավ իմացության պատճառով թարգմանելը հիշատակի ընթերցել *موسى* անունը: Նույն պատճառով բառացիորեն է թարգմանված կամ, ավելի հիշատակ, առանց թարգմանության է թողնված փուկա կում²⁴ արտահայտությունը, որին արաբերեն բնագրում համապատասխանում է *كبر ان الفقاغ* «գարեջրի կծեք»²⁵ բառակապակցությունը և այլն:

Համեմատության համար բերենք Պղնձե քաղաքի՝ արաբերեն բնագրից թարգմանված նկարագրությունը, ինչպես նաև Ն. Ակինյանի հրատարակած հայերեն թարգմանության համապատասխան հատվածը.

فبان لهم سواد عظيم وفيه نارين متقابلتي عنى بعد فى ذلك السواد فقال الامير موسى للشيوخ ما هذا السواد العظيم والنارين المتقابلتي قل له الدايئ ابشر ايها الامير فهذه مدينة النحاس فهذه صفتها عندي فى كتاب المطالب ان سورها من الحجارة السود ولها برجين من النحاس الاندلسي الاصفر فيراهما الناظر كأنهما نارين متقابلتي ومن اجل ذلك سميت مدينة النحاس قال فثم يراوا سايرين حتى فصلوا اليها اذا هى عالية حصينة

...և հասան ի մեծ լեռան մի եւ էրեւցաւ քաղաքն սեւագոյն. եւ երկու տեղ էրեւար որպէս խոց:

Ասէ Ամիր Մուսան ընդ Հալեւորն, թէ Այն սեւն ինչ է:

Ասէ Հալեւորն. Պղնձի քաղաքն է. ու գրած ունիմ, որ իւր պարիսպն սեւ քար է եւ երկու պղնձի պուռն ի վերայ գրան կայ, յորմամ արեգակն ցաթէ եւ փայլէ՝ Պղնձի քաղաքն վասն այնոր ասեն:

Եւ սկսան գնալ եւ մատենցան եւ տեսան խիստ գեղեցիկ: Եւ էր բարձրութիւն պարուպին վաթսուս կանկուն, եւ գուռն հիսուն. եւ թվէր թէ միակտոր էր պարիսպն:

²² Ն. Ակինյան. Թեմական քերականություն այնպիսիքար կամ արդի հայերեն լեզվի. Վիեննա, 1866, էջ 142—145, 181:

²³ Ն. Ակինյան. Նշվ. աշխ., էջ 22—24:

²⁴ Նույն տեղում, էջ 22:

²⁵ „Tausend und Eine Nacht“. Arabisch. nach einer Handschrift aus Tunis. Hrsg. von M. Habicht. Bd. VI, Breslau, 1834, S. 350 (այսուհետև՝ Habicht).

شاهقة فى الهوى مبععة علو اسوارها ثمانون ذراعاً ولها خمسة وعشرون باباً ما يفتح كل باب الا بصيلة فما يكون منها باباً الا ضمن داخل المدينة...

Ասէ Ամիր Մուսան. Զեմ տեսնուչ զայս քաղաքիս դուռն: Ասէ Հալեւորն. Գրած ունիմ, որ հիսուն երորդ դուռն է. տըրստով պիտի բանալ²⁶:

Միանգամայն ակնհայտ է, որ արաբերեն բնագրի և հայերեն թարգմանության մեջ բնագրի հատվածները լավագույնս նման են իրար: Կասկածից դուրս է, որ հայ միջնադարյան թարգմանիչը, որի անունը, ցավոք, մեզ չի հասել, ձեռքի տակ ունեցել է «Պղնձե քաղաքի» արաբական վերահիշյալ տարբերակին²⁷ շատ մոտ մի բնագիր:

Նկարագրելով ձևապահը, որտեղ ինքը հայտնաբերել է «Պղնձե քաղաքի» պատմության համառոտ տարբերակը, Ն. Ակինյանը նշում է, որ այն շուրջի-հիշատակարան, վասն զի վերջին թուղթեր ինկած են. այս պատճառով այլ անհայտ են գրչին անունը, գրության տեղն ու տարիները²⁸, Հենվելով այն փաստի վրա, որ ձեռագրի վերնագրում հիշատակվում է Դավիթ Կուրապաղատի անունը, որ թվախճանած է 1000, մարտ 31-ը, Ակինյանը գտնում է, որ թարգմանը, որը թվախճանած է 1000, մարտ 31-ը, Ակինյանը գտնում է, որ թարգմանությունը կատարվել է հավանաբար 950—1000 թթ. Տալոց նահանգում և որ թարգմանիչները «տալոցի ըլլալու են»²⁹:

Առաջին հայացքից ամեն ինչ համոզիչ է թվում, եթե միայն ուշադրություն դարձնենք թարգմանության լեզվին: Ըստ Ն. Ակինյանի, այն իրենից ներկայացնում է Տալոց եզրագրի քաղաքագրությունը³⁰, Պ. Մուրադյանը նույնպես կարծում է, որ դա Տալոց բարբառն է³¹, Ա. Տեր-Ղևոնդյանը գրում է, որ այդ լեզուն ավելի շատ մոտ է միջին հայերենին³²:

Նախքան հետագա գատողություններին անցնելը պիտի է նշել երկու հանձնախմբի հետագա գատողությունները մեզ փաստորեն ծանոթ չէ, այդ պատճառով գամանք. ա) Տալոց բարբառը մեզ փաստորեն ծանոթ է, այդ պատճառով թարգմանության լեզուն կարելի է Տալոց բարբառ համարել միայն ենթադրաբար, և բ) միջին հայերենը որպես գրական լեզու հաստատվել է XIII դարում՝ այս փաստը հավաստելու են գալիս բազմաթիվ թվագրված գրական հուշարձաններ:

Այսպիսով, որպեսզի հակասությունները վերանան, պետք է ենթադրել, որ կամ միջին հայերենն է XIII դարից շատ ավելի առաջ աստիճանից իջել, կամ էլ Ն. Ակինյանի հայտնաբերած թարգմանությունն արված է ոչ թե X դարում, այլ ավելի ուշ, և որ ձեռագրի վերահիշյալ տիտղոսաթերթը, որտեղ հիշատակվում է Դավիթ Կուրապաղատի անունը, սխալմամբ է ամրացվել հիշյալ ձեռագրին:

Այժմ փորձենք ի մի բերել այն բոլոր տեղեկությունները, որ մեզ հայտնի են Տալոց բարբառի մասին, ինչպես նաև այն փաստերը, որ մեզ ընձեռում է նշված թարգմանության լեզվի հանգամանալից վերլուծությունը:

Տալոց բարբառի գոյության մասին հիշատակում է VIII դարի մատենագիր Ստեփանոս Մյունեցին իր «Քերականության» մեջ (էջ 187)³³, Ուրեմն, X դարում Տալոց բարբառն իրոք գոյություն ունեւր:

²⁶ Ն. Ակինյան. Նշվ. աշխ., էջ 40:

²⁷ Habicht. Bd. VI, S. 343—401.

²⁸ Ն. Ակինյան. Նշվ. աշխ., էջ 22:

²⁹ Նույն տեղում, էջ 23, 24:

³⁰ Նույն տեղում, էջ 22, 23:

³¹ Պ. Մուրադյան. «Պատմություն Պղնձե քաղաքի գրության հայկական և վրացական պատմությունի ու նրանց փոխաբերության շուրջ».— «Բանբեր Մատենադարանի», 26 8, 1982, էջ 258:

³² А. Тер-Гевондян. Указ. соч., с. 265.

136

Մեզ հայտնի են Տայոց բարրաօրի մի քանի առանձնահատկությունները. դրանք վկայված են մի քանի վրացական ձեռագրերում, որոնք թվագրվում են 978—988 թթ. և X դարի 70-ական թթ. և ստեղծված են Տառ-կյարքիթի գավառում Ի. Արուլաձեն, ուսումնասիրելով այդ ձեռագրերում պահպանված հայերեն շիշատակարանները, առանձնացրել է մի շարք հնչյունական և քերականական ձևեր, որոնք բնորոշ չեն X դարի գրական լեզվին՝ դարաբարին, գլխառնականագրությունների լեզուն օժտված է ավելի կենդանի խոսակցական հայերեն լեզվի հատկություններով, քան քն ժամանակի գրական լեզվի Նրանց ջիզումները հայերեն գրական լեզվի քերականական նորմաներից բացահայտում են բարրաօրի որոշ նշաններ թե՛ Անարանության և թե՛ հնչյունաբանության տեսակետից: Քանի որ այդ հիշատակագրությունները գրվել են Տառ-կյարքիթում, հեռավորոր դրանց մեջ նկատվող բարբառային երևույթները կարելի է ընդունել Ժ դարի Տայքի հայերեն լեզվի—բարրաօրի համար իբրև բնորոշ հատկություն³¹:

Ինչպես արդեն նշվել է, թՊՊՆ-ն քաղաքի պատմության X դարով թվադրվող թարգմանության լեզվում նույնպես հանդիպում են բարբառային ձևեր: Վերջիններիս համեմատությունը Խ. Արուստանի հոգվածում քննարկվող բարբառային ձևերի հետ ցույց է տալիս, որ համընկնում են այդ բարբառային երեւոյթների մոտ 50 տոկոսը, ընդ որում այդ համընկնող երևույթները չի կարելի համարել որևէ կոնկրետ բարբառի բնորոշ առանձնահատկություններ, քանի որ դրանք կարելի է գտնել կը ճյուղին պատկանող ցանկացած արևմտա-այս բարբառում:

Այսպիսով, նշված թարգմանության լեզուն Տալոց բարբառն է՝ համարելու փորձը կրում է խիստ պայմանական բնույթ:

Այժմ հանդամանորեն վերլուծենք թարգմանության լեզուն՝ վերջնականապես պարզելու համար, թե արդյոք այն միջին հայերենն է, թե՞ դարարար

ա) Հոգնակիականություն - նիստերի մասնակցությունը կազմված գոյականական
 ձևեր, որոնք բնորոշ են միջին հայերենին, օրինակ՝ խանութի, ասպարհի, աղ-
 ջիկների, քախուլների, զոմի, կէշէնի և այլն:

բ) Բայի անցյալ կատարյալ և ապառնի ժամանակների մի շարք ձևեր, որոնք նույնպես բնորոշ են միջին հայերենին՝ երեկ, երես, լսեց, ասցիր, գնալու ենք, գալու էք և այլն:

դ) Հնարակատար և վաղակատար դերբալների զգնություններ կազմված բա-
յալանի ձևեր, որոնք խորթ են գրաբարին, ինչպես, օրինակ, կարդացիլ հմ, տե-
սել էր, գրած սովիմ, կապած է, շինած էր և այլն:

դ) Տեքստում հանդիպում են թուրքերին բառեր. X դարի գրական հուշարձանի համար այդ փաստն ուղղակի անհավանական է:

Է) Թարգմանություն մեջ հանդիպում է պարոն Բառը (հին ֆրանս. ba-
ron-ից), որը հայերենի մեջ է թափանցել XII—XIII դդ. ոչ շուտ:

դ) Գրին օգտագործել է օ. Լ. Ֆ. տառերը, որոնք, ինչպես հայտնի է, հայոց ալբուրեանին են պվելացվել XII դարում. ահա ևս մի ապացույց, որ ձեռագիրը ստեղծվել է XII դարից ոչ շուտ²²:

Է) Գրադարի համար ամենևին հատկանշական չէ այնպիսի ձևերի գործածությունը, ինչպիսիք են՝ դարձակ, պաշխում, շալկոզ, հիմիկ, խրկնչ, մը-

33 «Եւ, զարեւելալ զգո լիւզիւղի գիտելն զբաղանդակ զբառսն զհեղբանանա, որ պէտ զԿարճայն եւ զՏայիցիքն եւ զԵսափայլնն եւ զՔարթրոց լուսիցիքն եւ զՄարտոցիքն եւ զՄիւսիքն եւ զԱրցախոյնիքն. ալլ մի միայն զՄըշէրիբախաւ եւ զՍտաւոսիկիւն, վառն զի պիտանէր աշուցիքն եւ ի տաղաւորութիւնն. ալլ եւ տաղաւորք ի պատմաւթիւնն, զի մի վրիպութիւն տեղեցիքն զտեղ լիւզուցն» (ան՝ Է. Ա. Եսայ. Ես. Լուսի. լիւզի. պատմութիւն. մաս Բ, Սրեպե, 1851, էջ 128)։

34 ի. Արարչական. X դարի վրացերեն թի ձևադրի էությունը հայերեն հնչյունաբանության հետ համեմատելու նպատակով հայ բարբառագիտության համար.— Երևանի Մոսկովյան համալսարան, Մ 4, 1958, էջ 38—39:

տիպ գնել, ժողով դաշ, շնամխկիւն և այլն, որոնք ընդհանրապէս, շատ սովորա-
ւա՛ն են միջոցն հանձնենի համար:

Բ) Բառերի ուղղագրության մեջ զգացվում է արևմտաճաշերենի խիստ տպեցությունը. այսպես, մայրենի լեզվաբանները խաղաղում են՝ կանկնած, կանգնած, սանալ—սանդալ, ճանկրտ—ճանգրտ, զննել—զննանել, պղնձ—պղինձ և այլն, մի կեղծում, որը նույնպես խորթ է գրարարին և ընդունյ է միջին ճաշերենին և այլն:

Այսպիսով, վերահիշյալ գիտատերի շուսի ներքո մնում է ներակայացնել, որ կամ նշված տեքստն իրենից ներկայացնում է Դավիթ Կուրապաղատի պատվերով չ գարում կատարված թարգմանության՝ հետագայում միջին հայերենի վերածված ապրրեւակը, կամ էլ նշված թարգմանությունն աղավիշ ԱՄ դա-
րից ոչ շուտ, քան տիպադրամիթը, որտեղ հիշվում է Դավիթ Կուրապաղատի
համարժեք տպագրություն է ամրագրվել հետագայում թյուրիմացաբար

«Պղծին քաղաքի պատմության արարերն ընտրել են հայերեն թարգմանության համաժամարությանը պարզվում է, որ դեռևս հիմնականում համընկնում են՝ նայած որոշ տարբերությունների առկայությանը: Այսպես, հայկական տարբերակը սովորաբար ավելի համառոտ է, սեզմ, միջոցառարարների ազդրում հանախ են հանդիպում նրանցություններ և մանրամասն, նրկարաշումը նկարագրություններ: Սլուծեն թե՛ արարական, թե՛ հայկական տարբերակներում համարյա նույն է, չհաշված որոշ զրվազների տարբերությանը, չափամիջ հաստատաներ և մի քանի գործող անձանց անունների որոշ անհամարապատասխանությունը:

Նշված տարբերությունները, ընական է, բացատրվում են այն փոփոխություններով, որ կրել են իրենց բաղադրարարյան գոյության ընթացքում թե՛ աբարական, թե՛ հայկական տարբերականները: Այդպիսի որոշակի զեռ են խաղացել թե՛ կրոնական պատճառները՝ համապատասխանաբար որոշ մահմեդական կամ քրիստոնեական զանախորում հաղորդելով տեքստին և թե՛ այն, որ գրա-լոր տեքստը, հատկապես աշխարհիկ գրականությունից մեզ, չէր գիտվում որպես ինչ-որ անոճոնմունքի բան, այլ այն կարելի էր փոփոխել, կրճատել կամ ընդար-ձակել, գեղեցիկացնել, չբացատրվող ու շլակոմներն մացնել և այլն: Դրա հե-տևանքով թե՛ արաբերեն ընտղիրը, թե՛ հայերեն թարգմանությունը այսօր մեզ են ներկայանում բազմաթիվ տարբերակներով:

АРАБСКАЯ И АРМЯНСКАЯ ВЕРСИИ
«СКАЗАНИЯ О МЕДНОМ ГОРОДЕ»

А. Н. МКРТЧЯН

Резюме

«Сказание о Медном городе» принадлежит к числу тех удивительно жизне-
стойких письменных памятников, которые, будучи широко распространены в сред-
невековой Армении, продолжали оставаться в центре внимания армянского читателя
вплоть до XX века. Долгое время оба армянских перевода «Сказания», датруемые
X и XIII веками, связывались с арабским оригиналом «Тысячи и одной ночи». Од-
нако вновь обнаруженные факты заставляют пересмотреть это мнение. Изучение
арийской версии «Сказки о Медном городе» показывает, что несколько веков (с
IX в.) она бытовала в самостоятельных списках и сборниках назидательного ха-
рактера и была включена в свод «Тысячи и одной ночи» лишь в XV—XVI вв. По-
этому древние переводы относятся к более раннему времени (не позднее

35 Ն. ԱճԱԽԵՆԵՐ ձեռագրերը թվադրում է XIV դարագր: Տե՛ս Ն. Ա. Կ. Է., «Ն. Երզն. աշխ., էջ 27»:

XIII в.) и, как правило, тоже представлены отдельными списками либо входят в сборники нравоучительных сочинений, то совершенно очевидно, что армянские переводы сделаны еще до включения «Сказки о Медном городе» в свод «Тысячи и одной ночи».

До сих пор ряд исследователей вслед за Н. Акиняном считали, что «Сказание о Медном городе» впервые было переведено на армянский язык в X в., основываясь на том, что в заглавии рукописи, обнаруженной Н. Акиняном, упоминается Давид Куропалат; язык перевода, изобилующий диалектизмами, считался «диалектом области Танк». Однако детальное изучение языка перевода показало, что упомянутая рукопись создана не ранее XII в., так как: а) язык перевода представляет собой скорее среднеармянский язык, чем грабар, между тем среднеармянский язык стал употребляться в качестве литературного не ранее XII—XIII вв., — это доказывается множеством датированных памятников; б) в тексте встречаются буквы « и ֆ, которые, как известно, были добавлены к армянскому алфавиту в XII в., а также слово «բար» (заимствовано из старофранц. *baron* не ранее XII в.) и турецкие слова; в) таисский диалект науке практически неизвестен: те его особенности, на которые обратил внимание исследователей И. Абуладзе, совпадают с диалектными особенностями перевода только частично (примерно на 50%). причем создания нельзя считать признаками какого-либо конкретного диалекта, они присущи всем западноармянским диалектам ветви «ԳԷ».

Таким образом, нужно либо предположить, что перевод, обнаруженный Н. Акиняном, был сделан не в X в., а позже, к заглавный лист с упоминанием Давида Куропалата был присоединен к рукописи случайно, либо считать, что до нас дошло переложение на среднеармянский язык перевода X в., действительно выполненного по заказу Давида Куропалата.

ARABIAN AND ARMENIAN VERSIONS OF "THE TALE OF THE CITY OF BRASS"

Summary

For a long time the two Armenian translations of the *Tale of the City of Brass* dating from the 10th and 13th centuries were thought to belong to the original text of *One Thousand and One Tales*. Newly found data, however, make us change this opinion. The study of the Arabic text of the *Tale of the City of Brass* shows that for a few centuries (beginning the 9th) the tale could be found both independently and in collections of moral tales, and was included into *One Thousand and One Tales* only in the 15-16th centuries. As the Armenian translations date to an earlier period it is obvious that these renderings were done before the tale became part of the *Arabian Nights*. According to the general opinion the *Tale* was first translated into Armenian in the 10th c. This opinion was based on the fact that name of King David Kuropalates was included into the manuscript title. The language analysis of this translation, however, shows the manuscript was created not earlier than the 12th century. The language is Middle Armenian, which got the status of literary language only in the 12-13th centuries (witness several letters added to the Armenian alphabet only in the 12th c., the word *paron* which is a 12th c borrowing from Old French and a number of Turkish words). Thus, we can either suggest that the text of the *Tale of the City of Brass* was translated later than the 10th c. and the name of King David Kuropalates was added to the manuscript later, or we deal with a later Middle Armenian adaptation of a 10th century translation.

* Հոդվածն առաջին անգամ հրատարակվել է *Պարսկա-բանասիրական հանդեսում*, (1986), №2, էջ 130-138: Վերահրատարակվում է հանդեսի խմբագրության թույլտվությամբ:

[illegible]

Բազմաթիվ են Մաշտոցի անվ. Մատենադարանում և արտասահմանյան հայ գրապահոցներում գտնվող ռղեմե քաղաքի պատմության և ձեռագրերը, և բոլոր ընդօրինակումները շարունակվել են մինչև XX դարը: XVIII դարից սկսած, ընդօրինակումներին զուգահեռ, սկիզբ է առնում և լայն ծավալ առա-նում նրա տպագրության գործը՝ հատկապես Կ. Պոլսում, էջմիածնում, Սաղ-րաստում: Ընդհանուր առմամբ հայտնի է Պատմության XVIII—XIX դարերում կատարված շուրջ երկու տասնյակ հրատարակություն: Սրանցից զատ, տար-րեր ժամանակներում, քաղվածաբար հրատարակվել են նաև Պղեմե քաղաքի պատմության կաթաները (ընդմիջող երգեր)՝

Պղնձն քաղաքի պատմության հետ առնչվող շատ հարցեր թեև վաղուց էն արժանացել մասնագետների ուշադրությանը, բայց մինչև օրս էլ չարունակում են տարակարծությունների տեղիք տալ:

Ուշադրության կենտրոնում է եղել Հատկապես թարգմանության ժամանակի հարցը, որին առաջին անգամ անդրադարձել է Ղեկնղ Հոգնանյանն իր «Նշտազոտություն» նախնայաց ռամկորենի վրա ուսումնասիրության մեջ:

Հենդելով Վիեննայի Մխիթարյան մատենադարանի № 88 ձեռագրում առկա հիշատակարանի հաղորդած տվյալների վրա, բանասերը եզրակացնում է որ Պատմությունը թարգմանվել է 1222 թ. Առաքել Անեցու կամ Երրակվանեցու կողմից Դ. Հովնաթյանի հետևությունքով մի շարք բանասերներ (Ն. Անդրիկյան, Հ. Տաշյան, Հ. Քյուրտյան) Պղնձե քաղաքի հավանական կամ հաստատ թարգմանիչ են հայտարարում նույն Առաքել Անեցուն²։ Թարգմանության հարցին անդրադառնալով, բանասեր Ն. Անիկյանը այն մոտավորապես նույն ժամանակների գործ է համարել, թեպետ ոչ Առաքել Անեցու ձեռքով կատարված, թարգմանությունը հին է, հավանորեն 1250—1350 շրջանին. երբ ժաղկեցան Ֆրիկ և Հովհաննես և Կոստանդին ծրզնկացի և թարգմանվեցան Ֆարմանի Ամմանի, Փահլուլ թագավորի, Աղբառ թագավորի և Արդլ Ծաֆարի և Շնմիլայի պատմությունները

Հայազնունների մի այլ խումբ, առանց անդրադառնալու նախորդ բանասեր-
ների բերած փաստաթղթերին, Պղնձն ջնադարի պղծ առումը թան թարգմանի է

1 Գ. Հ ա զ ա ե փ չ ա ե, Գրեգորիա Ազնաւստցի, ռԱՍԻԱՅԱՆ, 1919, էջ 13: Ա. Տ ա պ ա ե չ ա ե, Հ ա չ է չ Բ, Փ ա ր ի զ, 1912, էջ 86, Ե. Ա չ է չ Ե չ ա ե, Գրեգորիա Ա չ ա թ ա չ է ա Ազնաւստցի, Վրէժեա, 1958, էջ 112:

Ք. Շ. Ղ. Հ. ա գ Ե ա Ե, Հեռագրատնից հախեհաց ամկնորհի գրայ, Վրեհեա, 1897,
էջ 332.

3 Ն. Անդրիկյան, Ազգային զինվորին, «Բազմազգի», 1906, էջ 285: Հ. Տաշյան, Ժողովրդական պայքար, Վրաստան, էջ 348: Հ. Աբախյան, Հայոց անկախության պայքար, Գ. Նրեյն, 1946, էջ 372: Հ. Փյունյան, Պատմական-գիտական հետազոտություններ, «Հայաստան», 1955, № 10, էջ:

[illegible]

Համարում XVI գարի տաղերգու Գրիգորին Աղթամարացուն՝ նման հայտարարությանը դեռևս 1882 թ. հանդես էր եկել Արիստակես վարդ. Տնկանցըն, Հեռազայում, 1912 թ. Շավարշ վարդ. Սահակյանը, ի հաստատումն վերջինիս, հրապարակ է հանում Պատմության ձևողոր օրինակներից մեկում առկա միայն հիշատակարան, ուր Գր. Աղթամարցին հիշատակվում է իբրև Պզնն քաղաքի լյուսածոզու։ Այդ հիման վրա էլ նա Գր. Աղթամարցուն է վերագրում թարգմանության և բոլոր կապաների հորինման գործը, զրանով իսկ թարգմանության ժամանակը նույն բերելով դեպի XVI դար։ Շավարշ Սահակյանը ուղղակի հրում է. «...մենք կրկանը Գրիգորին կաթ. Աղթամարցին հանչնալ իբրև թարգմանի։ ԵՊզնն քաղաքին և հեղինակ անոր կապաներուն...»։

Պղնձնե քաղաքի նախնական թաղամասերի հարցը լուծելու համար շրջադարձային էշանակությամբ ունեցավ 1958 թ. Ն. Ակիբյանի կողմից հայտնաբերված և շէնքոն ամօրայայում հրապարակված Պղնձնե քաղաքի պատմության հնագույն թարգմանության մինչ այդ անհայտ ընդօրինակությունը։ Պարզվում է, որ Առաքել Անեցու թարգմանությունից շուրջ 3 դար առաջ, դեռևս X դարում, Տայոց դավառում քի խնդրոյ կամ ի հանդիս հայազգի Դավիթ Կուրապաղատի, թարգմանվել է և Պղնձնե քաղաքի պատմությունը։ Նրա պատկերով թարգմանվել են մի շարք այլ գրույցներ, այդ թվում՝ Մանեկան և աղբյակ, Յարման մանուկի պատմությունները, որոնք զետեղվել են Օջոռց եւ խաւար սուաքի թագաւորացն եւ իշխանացն, զոր թարգմանեցին Դաւիթ Կուրապաղատին ի հաւ յնդու ի տաճիկ լեզվէ վերնազորի ներքո՞։

Նորահայտ այդ թարգմանությունը ստիպեց նրա հրատարակչին, ապա նաև շատերին վերանայել նախկինում պաշտպանած իրենց տեսակետները Պղնծե քաղաքի պատմության՝ Հայ իրականություն ներթափանցելու նախնական ժամանակի մասին։ Եթե նախկինում բանասերների մեծ մասը, անձանոթ լինելով ն. Ալիսյանի մատենանշած ձեռագրին և վնասվողով սոսկ Ղ. Հովհաննյանի հրապարակած տվյալները, Պղնծե քաղաքի պատմության հայկական առաջին թարգմանությունը համարում էր 1222 թ. Առաքել Անեցու կատարածը, ապա այժմ երբ փաստերի լույսի տակ ընդունվում է հիշյալ թվականից չուրջ երկու դար առաջ կատարված մեկ այլ թարգմանության գոյությունը, Բյուրիմացությունից խոստովանելու նպատակով իր «Գրիգորիա Ա կաթողիկոս Բյուրիմացությունից խոստովանելու նպատակով իր «Գրիգորիա Ա կաթողիկոս Բյուրիմացությունից խոստովանելու նպատակով իր «Գրիգորիա Ա կաթողիկոս

Նորագույն ուսումնասիրություններում առաջին թարգմանության ժամանակն արդեն տարակուսանքներ չի հարուցում: Իրրև Պչեմն քաղաքի նահանգական թարգմանություն վկայակոչվում է Ն. Ակնյանի հրապարակած X դարի թարգմանությունը, որին 1222 թ. հաջորդել է երկրորդ թարգմանությունը. հաստատված Առաքել Անեցու ձեռքով:

5. *U. a. h. u. m. k. h. u. q. m. p. q.* 5 b. *h. u. m. g.* 2 m. *h. p. q.* 1932, 48

6. Եւ զարդ ծ. զարդ. Սաշա խաչ, Գրիգորիա Կաթողիկոս Աղբաւարցի 4

Հին քաղաքին թաքցանեցիւնք, համարք, 1912, № 40, էջ 200:

7 Ն. Ա գ ի ն ա Ն, Առաջը Պզենե բարձրի, հՀանգնե առաքելուս,

Յ. Ն. Ավետիսյան, Գրեգորիս Ավագորդիկոս Աղթամարի, էջ 246,
Յ. Մ. Ավետիսյան, Գրեգորիս Աղթամարցի, Երևան, 1963, էջ 324.

ՊՊԵՆԻ ՔԱՂԱՔԻ ՔԱՐԳՄԱՆՈՒՄԻՆԻ ԻՆԱՊԵՐԻ և ԿԱՖԻԱՆԵՐԻ ՀԵՍՏ ԱՌՆԻՎՈՂ ԶԱՄ ՀԱՐՑԵՐ ԲԱՆԱՍԻՐՈՒՄԻՆԻ ՄԵՆ ԿԱՎՈՐԵՆ ԵՆ XVI դարի տաղերգու Գրիգորիս Աղ-թամարցու անվան հետ:

ՊՊԵՆԻ ՔԱՂԱՔԻ արարական բնագիրը, ընդհանուր առմամբ գրչության նման, ունեցել է ողբերի ձևով ասված խրատական կաֆաներ, որոնք ժառանգել են արժանապատիվ հիմնական պաղատարների լուսաբանմանը: Հայ թարգմանիչները, բնականաբար, պետք է թարգմանեին և այդ կաֆաները կամ զրանց մի մասը: Հետագայում պահանջ է զգացվել Պատմությունը թարգմանել բանաստեղծական նորանոր երգվող ընդմիջարկություններով (կաֆաներով): Այսպիսով, բնագրային կաֆաների կողքին, աստիճանաբար, տեղ են գտնում մեծ թիվ կազմող բոլորովին նոր բառակերպություններ: Եվ եթե Պատմության ամենահին ընդօրինակությունն ունի շուրջ 24 կաֆա, ապա որոշ ձեռագրերում զրանց թիվը հասնում է 80-ի: Դարերի ընթացքում կատարված աստիճանական այս ներմուծումները ստեղծել են այնպիսի հարաբերակցություն ՊՊԵՆԻ ՔԱՂԱՔԻ օրինակների միջև, որը հնարավոր է դարձնում ըստ կաֆաների առկայության տարբերել այդ երկի երեք խմբագրություն՝ նախնական, նախազգրիգորիսյան և զգրիգորիսյան:

Նախնական խմբագրություն. Սա, ինչպես նշվեց, կատարված է X դարում, ժամանակի խոսակցական լեզվով՝ զգուշորիկ զավառաբարբառով...», ունի 24 կաֆա, որոնց մի մասը թարգմանական է: Դրանից առաջինը սկսվում է Քենաց ժամանակ սոցա, իսկ վերջինը՝ Քևազ տամ հազար բերան տողով: Այս կաֆաները շուրջն հեղինակային պատկանելությունն են, հաճախ անմշակ են, երբեմն՝ թերի և աղնատ: Բայց բուն բնագիրը (արձակ մասը) մյուս օրինակների համեմատությամբ համառոտ է: Այս խմբագրության միակ օրինակը Ն. Ակիսյանի հրապարակած՝ Դավիթ Կուրապաղատի պատվերով կատարված թարգմանությունն է:

2. Նախազգրիգորիսյան խմբագրություն. Այս խմբագրության կաֆաները ևս սովորաբար սկսվում են Քենաց ժամանակ սոցա և ավարտվում Քևազ տամ հազար բերան կաֆայով: Նախնական խմբագրության պարունակած կաֆաներից զատ ունեն հավելյալ նոր կաֆաներ: Կաֆաների ընդհանուր թիվը հավասար է 50-ի: Այստեղ ևս բացակայում են նշումներ հեղինակների մասին: Նախազգրիգորիսյան խմբագրության պատկանող ձեռագրերը Մաշտոցի անվ. Մատենադարանում հետևյալներն են՝ №№ 1677, 1682, 6451, 7076, 7227, 7709, 8287, 8963, 9428, 10107, 10166:

3. Գրիգորիսյան խմբագրություն. Գր. Աղթամարցին նշանակալի աշխատանք է կատարել բնագրային կաֆաների մշակման և իր կողմից ստեղծված կաֆաներ ներմուծելու ուղղությամբ: Կաֆաների թիվն է 65—75, որոնք ունեն հաստատուն, ուրույն դասավորություն: Այստեղ, սովորաբար, առաջինը Քևազ զրուց, Մուսկ...» սկզբնատողով կաֆան է, որին հաջորդում են նախորդ խմբագրություններում բացակայող որոշ տներ: Մնացած հավելյալ կաֆաները ցրված են ողբ շարադրանքի մեջ որոշակի կարգով, սակայն այնպես, որ նորից ավարտվեն Քևազ տամ հազար բերան...» կաֆայով: Փոքր թիվ չեն կազմում «Գրիգորիս» տները կրող կաֆաները: Գրիգորիսյան խմբագրության են պատկանում Մատենադարանի №№ 2354, 3622, 6092, 6185, 6485, 6961, 8332, 8387, 8447, 8698, 8724, 9265, 10275 ձեռագրերը:

Այսպիսի պայմաններում նախ անհրաժեշտ է դառնում առանձնացնել բուն բնագրային կաֆաները հետագա ներմուծումներից, ապա միայն անդադառնալ այն հեղինակների հորինած առանձին կաֆաներին կամ նրանց խմբերին: Որոշակի դժվարությունների հետ է կապված թեմական ողբերի տարբերակումը: Դեռևս չի գտնված այն հնագույն խմբագրությունը, որից կատարված է զրույցի հայերեն թարգմանությունը X դարում: Ավելին, ՊՊԵՆԻ ՔԱՂԱՔԻ ՀԱՅԵՐԵՆ մնացած բոլոր օրինակներն անգամ՝ ամփոփված հետագա դարերի զրույցներում և տպագրի ժողովածուներում, թեև մոտենում, սակայն լիովին չեն նույնանում զրույցի լատինացու ռեգիստրական խմբագրությանը (ստեղծված անհամեմատ ուշ՝ XVI—XVII դդ. և Արաբերեն ձեռագրերի առանձին օրինակների իրարից տարբերվում են նաև կաֆաների բնույթով, դասավորության եղանակով ու քանակով):

X դարում Հայերեն թարգմանված ՊՊԵՆԻ ՔԱՂԱՔԻ պատմությունը պետք է ավելի նախնական վիճակ ներկայացնելու Պատմության եզրպատկան խմբագրության արարներն¹⁰ և ուսաներն¹¹ օրինակների հետ հայերեն օրինակների հանդիպողությամբ պարզվում է, որ վերջիններս ավելի սկզբն են, սխեմատիկ (և բնագիրը, և կաֆաները): Ամենայն հավանականությամբ, արարական օրինակներում ներմուծումները կատարվել են աստիճանաբար, հետագա խմբագրությունների ընթացքում: Իսկ հայերեն տարբերակը ավելի վաղ վիճակ ներկայացնելով, գերե է մնացել այդ կերպարանափոխություններից:

Միջնադարի Հայ թարգմանիչները ևս կաֆաների հարցում բավական հեռացել են բնագրից: Անտարակուսելի է, որ վերջիններս, ելնելով հայոց լեզվի տաղաչափական առանձնահատկություններից, որոշ խմբագրությամբ են ներկայացրել կաֆաները: Ակնբախ է, որ խմբագրման զործ տարվել է մի ուղղությամբ. ուղղությունը հիմնականում սկսված է եղել զղջման, ապաշխարանքի և հոգևոր կյանքի փառաբանման վրա, որով և նկատելիորեն ստվերի տակ է թողնվել բնագրի երգերի համեմատաբար աշխույժ ոգին: Բազմազանապես հայագետ Արշակ Զուպանյանը իրավացիորեն նկատում է, որ Քենայ թարգմանիչը ընդհանուր իմաստն առնելով իր ուղածին պես շարադրած է (ավելի պարզուկ և ավելի համառոտ)¹², նման վերաբերմունք է եղել և զրույցի արձակ մասերի նկատմամբ: Հավանաբար այս հանգամանքն էլ նկատի առնելով, Զուպանյանը իր կազմած ՔՀայ էջերն ժողովածուի մեջ հրապարակած ՊՊԵՆԻ ՔԱՂԱՔԻ 10 կաֆաները (հանված Փարիզի Աղգայի մատենադարանի № 308 ձեռագրից) բնութագրում է իրեն հայկական բանաստեղծություն՝ «օտար գործի մը հետևողությամբ զրված»¹³, Որոշակի դեր է խաղացել բնագրում եղած մուսուլմանական կրոնի հետ կապվող պատկերացումները հայկականով փոխարինելու երևույթը:

Այս բոլորով հանդերձ, այդ ուղղությամբ տարված բանասիրական պրպրությունները հնարավորություն են բնծնում ընդհանուր պատկերացում ունենալ

¹⁰ Tausend und Eine Nacht, Arabisch, nach einer Handschrift aus Tunis, Hrgg. von Dr. Maximilian Habicht, Breslau, 1834.

¹¹ „Тысяча и одна ночь“, Госиздат, 1959.

¹² Ա. Զուպանյան, Հայ էջեր, էջ 6.

¹³ Եսլն անգում.

թարգմանական կաֆաների մասին¹⁴։ Զծաղալվելու համար նշենք միայն, որ Ն. Ակինյանի «Հանգեալ ամսօրյայում» հրատարակած օրինակը համեմատաբար ճիշտ է ներկայացնում բնագրային կաֆաների ընդհանուր պատկերը։

Բնութիւնը պարզում է, որ Պղնձե քաղաքի պատմության հայկական օրինակներում ընդգրկված կաֆաներից առնվազն հետևյալ տասը իրենց հիմքում ունեն արաբական համանման երգեր.

- | | |
|----------------------------|---------------------------------|
| 1. Մանէ, որ յայս անդո զայ | 6. Իս Լի մեծ քաղաք |
| 2. Մանէ բաժանէ զմեզ | 7. Արաքիւն աւառանց |
| 3. Քանի՜ Աղամայ արդի | 8. Մեռած, քէ ցաղար եմ |
| 4. Հաշվէ, քէ Էանի քաւի | 9. Ձիւր զանն ու կռուող կայր ինձ |
| 5. Ենն ինն ման և ոչ կառացի | 10. Ո՛ր եմ քաղաքի երկրի |

Բնագրային կաֆաների հետ ունեցած առնչությամբ վերահիշյալ երգերը համասարած են. նրանց մի մասը հարազատ թարգմանություն է, մյուսներում առկա են փոփոխություններ, մնացածներն էլ փոխադրություն են հիշեցնում։

Հարազատ թարգմանված կաֆաներում հիմնականում նշատրեն վերադարձված է լինում համապատասխան երգի բովանդակությունը՝ Ահա մի հատված այդ կաֆաներից.

Нет пользы от ранков, которых я набирал, Ни друг, ни соседи мне тогда не помогут— К другому перед зарей вернется она опять. Насильник когда придет к тебе и могильник.	Եւ ո՛չ բազում եննիլ աղնեցի ինձ, Ո՛չ ազգականք իմ աղնեցի ինձ, Ի ամենայն մեծաբեկն քառն քո Եւկազ և փառք միւս:
--	--

Ընկ որում, նույնն է նաև մեջբերված կաֆաների տեղադրումը արևակ բնագրում. նույնական են նրանց նախորդող և հաջորդող հատվածները։

Երբևէ հայերեն օրինակի և արևակ ինքնուրույն կաֆաների համադրությունը տալիս է բնագրի մեկ կաֆայի համարժեքը.

Коль вспомните меня через много лет вы, Превратности когда друг друга сменят. То я—Шеддада сын, людей владыка, И всей земли со всякою страною... Я был велик, царей их унижал я, И жители земли меня боялись.	1. Անշ զմեռած անուն իմ, Որ այլ ոչ բնու յիշուի քաւի. Քաղաքի՜ արքի Պաղատայ: Քաղաքի արքի Պաղատայ: 2. Ես մեծ քաղաքի կի, Ջորաւար, Էգոր և արի.
--	---

¹⁴ Մենք հիմնականում չենք հիշում նեք Պղնձե քաղաքի Ն. Ակինյանի հրատարակած օրինակի, «7001 գրքերի արաբերեն հրատարակության» (Tausend und Eine Nacht, Arabisch, nach einer Handschrift aus Tunis, Hsrg., von M. Habicht, Breslau, 1834), չեք հիշում նաև ընդհանուր առմամբ նույնացող ուսմանը («Тысяча и одна ночь», М., 1959) հրատարակության և Մատենադարանի համադաստախան ձեռագրերի վրա։ Հրացուցի աղբյուր է 1902 թ. Պետերբուրգում լույս տեսած «Тысяча и одна ночь» ձեռագրում (ըստ Մարգարյանի ֆրանսերեն թարգմանության)։

Այս և հաջորդ համեմատելի կաֆաները վերցնում ենք զրույցի ուսմանը թարգմանության 1939 թ. հրատարակությունից, քանի որ վերջինիս արաբերեն նախորդինը չու է հայկականի։ Հոգվածը լեզուարենով և պատկերով աշտուղ լինը մեջբերում զրույցի 1939 թ. Բրեսլայում քաղաքում հրատարակված արաբերեն բնագրի համապատասխան կաֆաները, որոնք ընդհանուր առմամբ նույնատիպ են վերահիշյալ ուսմանը կաֆաներին։

Я владею деньгами, числа которых сосчитать нельзя, Копил я их на случай перемены, И мне думалось, будто выкуплю всем богатством я Мои дух и жизни срок назначу новым. Все отверг господь, и спсю лишь волю исполнил он, И теперь один я, лишен друзей и братьев.	Հասո զանն ու դուռնայ ունի, Որ շունք մարդ ի վերայ եղի. Չեղիս իմ անտես արի Պ, զբէլից լանն բրկի. Չամէնէն այժմ այլոց բողի. Ինկ զգաւանես առի ու զնացի: Իսկ զգաւանես առի ու զնացի: Իսկ զգաւանես առի ու զնացի:
--	--

Այս և այլ օրինակների հիման վրա հնարավոր է ենթադրել, որ թարգմանությանը զուգահեռ, լատենսկով հայկական հայրեն-կաֆաների քառյակային-ուիսյակային բնույթը, հայ թարգմանիչները բնագրի երկարաշունչ կաֆաները մասնատել են զոգարիկ երգերի և տեղագրերի պատ-զատ, երբևէն էլ բնագրի տարբեր մասերում։

Ահա մի ուրիշ օրինակ.

Где были дворы и то, Что в мире построили?— Покинули то они, Что строили на земле, В могиле они лежат Затогом же дело их, И теперь они в земле, Бесславно погибшие...	Ո՛ր Լե քաղաքի երկրի, Որ առաջ զանվանէ յիշեցի: Ու կամ Լանի Բաղաթ ու բերդի յերկր չիւնցի. Եւ մանն ի վերայ երկի, Նայ ամենը դառնակ զնացի. Իրենանց անիմուն զաննէն Լուկ իրենանց ենա փող մի շառի:
--	---

Նկատելիք, որ թարգմանությունը հաճախ կատարված է փոփոխություններով։ Նման կաֆաների գրաված տեղերը և ընդհանուր ոգին նույնը լինելով, նմանությունը մոտավոր է լինում։ Այս խմատով էլ այդ կաֆաները հեռավոր տարբերակներ կամ ազատ վերաշարադրումներ են հիշեցնում։ Ահավասիկ մի օրինակ.

Как часто я медлил, как часто метался, Как много я разных людей перевидал! Как много я слышал певца в своей жизни! Как много запретов, как много приказов Я дал и как много дворцов неприступных Подверг я осаде, потом обыскал, И много певца я оттуда похитил, Но только глуше, я предал перешел Пытаясь добиться того, что не вечно...	Հաշվէ, քէ ՔԱՆԻ քաւի Ցայս անու կեանես վայելցի. Ու կամ քէ ՔԱՆԻ Բաղաթ ու բերդի յայլոց խնցի: Հիմկ եւ խաւար մտաւ Ու որդունէն այլ զան ի մեզ. Ինչե՛ր ունի պաշխուն տալու, Որ այս կեանես զրկեցի:
---	--

Թվարկված 10 կաֆաներից զատ, Պղնձե քաղաքի առանձին ընդօրինակություններում առկա են «Ո՛ր», Աղամա որդիք սկզբնատողով կաֆաներ, որոնք իրենց տեղագրումով և բովանդակությամբ համապատասխանում են արաբերեն բնագրի որոշ արձակ դարձվածներին։ X դարի թարգմանության մեջ այդպիսի կաֆաներ երկուսն են, որոնք, ինչպես վկայում են փաստերը, հետագայում համարվել են համահնչուն այլ կաֆաներով։

Փաստերը զույգ են տալիս, որ Պղնձե քաղաքի պատմության համար կաֆաներ են հորինել Միլիրաբը (XIII դ.), Հովսեփ Աղրամադյանը (XVI դ.), Գրիգորի Աղրամադյանը (XVI դ.), Ջաֆար Գևուկյանը (XVI դ.) և ուրիշներ։

Միլիրաբի իրեն կաֆաների հեղինակ մինչև օրս անծանոթ է մնացել բանասիրությանը։ Ելնելով որոշ փաստերից, հնարավոր է ենթադրել, որ նորա-

Հայտ այս բանաստեղծի անունով ավանդված կաֆաները ժամանակագրական առումով Պղնձե քաղաքի պատմության առաջին հայտնի հեղինակ ունեցող կաֆաներից հետագույն են:

Ո՞վ է Մխիթարը: Բանասիրությանը հայտնի քաղմաթիվ նույնանուն անհատներից և ոչ մեկին Պղնձե քաղաքի կաֆաների հետ ուղղակիորեն առնչող մատենագիտական հիմքեր առայժմ չեն հայտնաբերված: Այնուամենայնիվ, որոշ կցկտուր տեղեկություններ հուշում են XIII դարում ապրած, Պղնձե քաղաքի պատմության թարգմանիչ Առաքել արքային կապող մեծագույն կամ Շիրակավանեցու գործակից Մխիթար Չելկանց Շիրակավանեցու անունը: Հայտնի է միայն, որ Առաքել Շիրակավանեցին թարգմանություններ կատարելիս օգտվել է Մխիթար Չելկանցի աջակցությունից¹⁶:

Անիկն մերձակա Բաղնայր գյուղի վանքի 1223 թ. արձանագրություններից մեկում Մխիթարը հիշատակվում է իրեն որդի Եղիշկանց Անտեսացուն և հայր Վահրամի¹⁷:

Մխիթարի կաֆաները հանդիպում են Մաշտոցի անվ. Մատենադարանի միայն մեկ՝ N 6185 ձեռագրում (XVII դար, դրիչ՝ Հովհաննես Ավերակցի): Վերջինս Պղնձե քաղաքի գրիգորիսյան խմբագրությանը պատկանող օրինակներից է, իսկ նրանում եղած կաֆաներն էլ հայտնի են Պատմության այլ ձեռագրերից: Նորություն են կազմում սոսկ Մխիթարի «Ասաց Ամիրմուսէն զկախայս ի Մխիթարէ», «եւ ասաց զողբս ի Մխիթարէ» և նման նշումներ ունեցող թվով հինգ կաֆաները, որոնց սկզբնատողներն են.

1. Քաղա՛ զեղեցիկ յնեա՛
2. Էնց զարմանալի շնոսա՛ծ
3. Բազմալ բազումի զխոյ
4. Զարմա՛ն է զոր՛ն առաջին
5. Գեո՛ք Աղամա՛ս որդի:

Նթե կաֆա հորինող հեղինակներին արևելյան այս գունազոյ գրույցի մեջ հրապուրել և բանաստեղծական ներշնչանքի աղբյուր է հանդիսացել աշխարհի ունայնության, վայելքների անցողիկության և աստվածային ամենակարողության խիստ միջնադարյան մտայնությունը, ապա Մխիթարը տալիս է քաղաքի, արքայական գահույթի, առասպելական կենդանու երևակայական նկարագիրը: Ակնառու է Աղեքսանդրի առասպելական պատմության համապատասխան դրվագների երբեմն բառացի նմանությունների հասնող ազդեցությունը Մխիթարի կաֆաների վրա:

Ժամանակագրական առումով Մխիթարին հաջորդած մյուս հեղինակը Հովսեփ Աղթամարցին է: Այս բանաստեղծի մասին մեզ հայտնի փաստերը կցկտուր են:

Գ. Հովսեփյանը, մասնաինչ անելով Պղնձե քաղաքի պատմություն ներմուծած նրա մի կաֆան, գրում է. «Գրիգորիս Աղթամարցին ճոխացրել է կաֆաներով (Պղնձե քաղաքի պատմությունը—Լ. Ս.), ավելի ևս խտացնելով Պղնձե քաղաքի մեջ արտահայտված մտքերը. այդ գործում նրան աջակից է հանդիսացել և Հովսեփի Աղթամարցին. գոնե ՍԸ կաֆան նշանակված է սորա անունով...»¹⁸: Մեկ այլ տեղ, վկայակոչելով Էջմիածնի N 388 (այժմ՝ Մաշտոցի

16 Լ. Ա. Ե. և Ն. Հայոց անձնանունների բառարան, Գ, էջ 372.

17 Ղ. Ա. ի չ ա ն, Շիրակ, Վանանիկ, 1881, էջ 121.

18 Գ. Հ. և Վ. և Ն. Գրիգորիս Աղթամարցի, էջ 16.

անվ. Մատենադարանի N 3622) ձեռագրի նշումները, դարձյալ կրկնում է. «Մի որդի նշանակված է Հովսեփի Աղթամարցու անունով»¹⁹:

Այսքանով սպառվում են կոնկրետ տեղեկությունները կաֆաների ասպարեզում Հովսեփի Աղթամարցու կատարած աշխատանքի մասին: Հետագայում միայն Ն. Ակիսյանը, օգտվելով մի այլ աղբյուրից (Վիեննա, N 977 ձեռ.), բավարարվում է Գ. Հովսեփյանի նկատած կաֆայի թուղթիկ հիշատակումով²⁰: Խոսքը Գրիգորի Աղամայ որդի, զամեն է՛ր կատես հետ մեղաօք... ութատող կաֆայի մասին է, որը Պղնձե քաղաքի մի շարք օրինակներում (N 10275, 3622, 6185, Վիեննայի N 977 և այլն) կրում է Հովսեփի Աղթամարցու անունը: Անկասկած, այս վերագրումը պետք է հավաստի համարել, բանի որ հակառակ ցուցումներ հայտնի չեն:

Այժմ անցնենք Պղնձե քաղաքի պատմության համար Գր. Աղթամարցու հորինած կաֆաներին:

Գր. Աղթամարցու գրչին վերագրված կաֆաներ են հրատարակել տարբեր բանասերներ, որոնք վստահություն են ցուցաբերել իրենց հայտնի մեկ ձեռագրի վկայությունների նկատմամբ: Այդ խմաստով ուշագրավ են ՚Ե. Հովսեփյանի մտորումները: Նա նկատում է, որ իր արամեագրության տակ գտնվող ձեռագրում թվով 34 կաֆաները, որոնք ներկայացվում են ՚Եր. Աղթամարցու անունով, ասված են հերոսների կողմից, օրինակ՝ «Ի բնառնոյ ալեւորին», «Եւ ասաց Ամիրմուսէն, զողբս ի Գրիգորիսէն» և այլն, ի հակադրություն մնացած ողբերի, որոնք բերու պատմության մասն են կազմում՝ գրված արձանների կամ գերեզմանների վրա: Անհեղինակ կաֆաներից, սակայն, Հովսեփյանը առանձնացնում է վերոհիշյալ 34-ի հետ որոշ ընդհանրություններ դրսևորող նույնատիպ 9 կաֆա, որոնց՝ ձեռագրերում անհեղինակ լինելը, ըստ հրատարակչի, չի խանգարում դրանք Գր. Աղթամարցունը համարել: Այսպիսով, ըստ ՚Ե. Հովսեփյանի, ստացվում է 43 կաֆա, այսինքն այնքան, որքան Աղթամարցին իրեն է վերագրում ձեռագրի հիշատակարանում:

Որքան էլ հավանական են թվում այս դատողությունները, որոշ հանգամանքներ, սակայն, կասկածի տակ են առնում այդ հաշիվները: Նախ, չպետք է մոռանալ, որ այդ 9 կաֆաների մի մասը արդեն առկա է Պատմության X դարի թարգմանության մեջ, որին ծանոթ չի հղել բանասերը: Այնուհետև փաստերին հակասում է բանասերի այն պնդումը, թե բանական (բնագրային) ողբերը բացառապես արձանների և տապանաքարերի վրայի եղածներն են: Ինչպես երևում է, բնական ողբերի շարքում չի բացառված նաև տարբեր հերոսների կողմից ասված որոշ կաֆաների գոյությունը: Օրինակ.

—Окружавшие его слышали... и стал говорить такие стихи:

—Что до меня, мне Сулейман не страшен.

Ведь обо всех делах осведомлен я...

Այս հատվածը սուտերեն է թարգմանվել արաբերեն բնագրից:

Այնուհետև Գ. Հովսեփյանը ձեռագրի մնացած 28 կաֆաները դասում է բնագրային հրգիծի շարքը: Այդ կարծիքը ևս առայժմ մնում է անարակունի:

19 Նույն տեղում, էջ 17.

20 Ն. Ա. և Ն. և Ն. Գրիգորիս կաթողիկոս Աղթամարի, էջ 19.

21 Այս կաֆան լշտիթել Մխիթարի 3-րդ, եւսի սկզբածքն ունեցող կաֆայի հետ:

որովհետև մեզ հայտնի արարական երկու բնագրերում եղած կաֆաների թիվը կազմում է 14: Հատ երևույթին, այստեղ անտեսվել է հայ ալլ հեղինակների կաֆաների գոյությունը հետազոտությունը:

Գր. Աղթամարցու կաֆաների հարցը հրապարակումը պատկանում է Ն. Ակիբյանին, որն օգտվել է Վիեննայի Մխիթարյան մատենադարանի № 977 գրչագրից (ԺՁ դ.): Բանասերը Գրիգորիսի վաստակը տեսնում է Պղնձն քաղաքի ռենդերի մեջ աղավաղած, պակասավոր կաֆաներում թիվը աճեցնելու մեղքը²²: Ընդ որում, նշված ձեռագրում Գրիգորիսին վերագրված 45 կաֆաներից 18-ը նա համարում է տաղերգուի կողմից մշակված բնական ողբեր: Հետևաբար, մեռած է ենթադրել, որ մնացած 27 կաֆաները ղեկավար են իրեն բուն գրիգորիսյան կաֆաներ: Ն. Ակիբյանն այնուհետև մեկ-երկու կոնկրետ բնագրերով մատենագրության է անում միջնադարյան բանաստեղծների, հատկապես Մկրտիչ Նաղաշի բանաստեղծությունների վրա Պղնձն քաղաքի որոշ կաֆաների աղծոցները:

Բանասիրական գիտությունների թեկնածու Մ. Ավդալբեգյանը իր «Գրիգորիս Աղթամարցիս մենագրության ծանոթագրություններում հասույթ բաժին է հատկացրել Պղնձն քաղաքի ձեռագրերի թնութայինը (տե՛ս նշված աշխատության 323—327 էջերը): Հեղինակին հատկապես հետաքրքրել է Պղնձն քաղաքի պատմության կաֆաների հորինման գործում Գր. Աղթամարցու կատարած աշխատանքի հարցը, որի մասին նա եզրակացնում է, «մշտնջան Մատենադարանի մեր ձեռքի տակ եղած ձեռագրերը կասկածելի են դարձնում նաև այդ կաֆաների» Աղթամարցու սեփական ստեղծագործություն լինելու հանգամանքը:

Պղնձն քաղաքի պատմության կաֆաների հորինման գործում Գր. Աղթամարցու վաստակը ներկայացնելու իմաստով բացառիկ դեր ունի Մատենացի անվ. Մատենադարանի № 5622 ձեռագիրը, որն ամփոփում է տաղերգուի արժեքավոր հիշատակարանը և կաֆաները: Զեռագիրն ընդօրինակված է 1700 թ., Գրիգոր քահանայի ձեռքով քի ձեռքով, Մոկաց թաղից²³: Ուշագրավ է ձեռագրի հիշատակարանը, ուր որոշակիորեն ասվում է, որ տաղերգուն բնագրի թեմական ողբերի թիվը ավելացրել է իր իսկ հորինած և՛ (43) կաֆայով:

Չոսանոց Պատմությունը Պղնձն քաղաքի	Բառասուն երեք սառ ու բույսայ
Չաքոտիկյան Գրիգորիս	Ոստանոց ողբ կա ի սմայ:
Յիշեցիլ յաստան ողբմիս	Յանվանտեղ գրեալ ի սայ:
Ըղեղնիկ մեղս գեթիս	Մաղցող ձեռ յանայանայ...24:

Այս վկայությունը հաստատված է նաև ձեռագրի նույնանուն գրի՛ Գրիգոր քահանայի հիշատակարանում. «Ո՛վ եղբարք, յորժամ ընթեռնուք զպատմութիւնս և զուարճանայք, յայնժամ զիմաստուն կաթողիկոսն զաէր Գրիգորիսն յիշեցէք և աստուած ողորմի ասացէք նմայ, զի շատ աշխատեցաւ ի հետ սորայ և և՛ որ ողբ յիւրմէն ասնայ ի սայ, թող զայն, որ ղերկու վանկըն և զմեկն ինքն էր արարել ի բնական ողբերն, զի պակաս էր ընդ նմին...»²⁵:

²² Ն. Ակիբյան, Գրիգորիս Ա կաթողիկոս Աղթամարի, էջ 88:

²³ Մատենացի անվ. Մատենադարան, ձեռ. № 5622, Թ. 221 ր:

²⁴ Նույն անգում, Թ. 64 ր:

²⁵ Նույն անգում, Թ. 55ր: Հայտնի են նույն հիշատակարանները պարունակող Պղնձն քաղաքի եւ երկու արիւնակի Մոսկովի գրված է 1624 թ. (տե՛ս «Տառար», 1912, № 40, էջ 595), երկրորդը՝ 1628 թ. (տե՛ս Մատենացի անվ. Մատենադարան, ձեռ. № 10329, Թ. 113ր):

Կարելի է բերել ուրիշ փաստեր ևս, որոնք ավելի հավանական են դարձնում միջնադարյան թարգմանական գրությունների հետ նշանավոր տաղերգուի նմանօրինակ կապերը: Նվ իրոք, հայտնի է, որ Գրիգորիս Աղթամարցին գործոն մասնակցություն է ունեցել նաև Ալեքսանդր Մակեդոնացու հանրահայտ պատմությունը կաֆաներով հարստացնելու գործին: Իբրև այդ իրողությունը հավաստող անտարկելի փաստարկներ կարելի է հիշել 1526 և 1536 թթ. բառաստեղծի անմիջական մասնակցությամբ ստեղծված Ալեքսանդրի պատմության երկու ձեռագրերում եղած ինքնագիր կաֆաները²⁶:

Ն. 5622 ձեռագրում կաֆաների թիվն է 72, որոնք բոլորն էլ համարակալված են հայկական այբուբենի տառերով, ընդ որում, 34 կաֆայի դիմաց՝ լուսանցներում կա «Գրիգորիս» նշումը:

Պետք է նշել, որ № 5622 ձեռագիրը հիմնականում (մասնակի խոտորումներով) հետևում է մի որոշակի սկզբունքի: Այդ ձեռագրում Գրիգորիսի անունով են նշանակված հիմնականում այն կաֆաները, որոնք լիակա՛նապես գրիգորիսյան օրինակներում: Սրանք Գր. Աղթամարցու այն կաֆաներն են, որոնք հետագայում որոշ հաջորդականությամբ ավելացվել են արդեն եղած կաֆաներին:

Հասկանալի է, Գր. Աղթամարցին ինքը կամ նրան ժամանակակից որևէ գրիչ է գրիգորիսյան նորաստեղծ կաֆաները, հին կաֆաներից զատելու նպատակով, ներկայացրել հեղինակի անվան նշումով:

Այստեղից պարզ երևում է, որ 1857 թ. տպագրության հիմքում ընկած ձեռագիր օրինակում չեն եղել այն կաֆաները, որոնք կան № 5622 ձեռագրում և կրում են «Գրիգորիս» նշումը: Կնշանակի վերջիններս, իրոք, առանձին ծագում ունեն՝ կապված Գր. Աղթամարցու անվան հետ: Գր. Աղթամարցու հորինած կաֆաների սկզբնատողերն են.

- | | |
|--------------------------------|-------------------------------|
| 1. Ասեմ ինչ գրուց, մոսե՛ | 13. Այս կեանքս ի խաղ յերակ |
| 2. Յոյս ունիմ ես առ աստուած | 14. Գազան, զուր յալմէ եկե՛ |
| 3. Աղաւեմ զինչ, տեղծող | 15. Մի՛ երկնիւր, ո՛վ արեայ |
| 4. Մեռ կեանքն է զեռաց հման | 16. Ո՛վ անհեղինկ աստուած |
| 5. Զառայ ի Բաղամէ իշուհի | 17. Է՛, զարմանալովս աստուած |
| 6. Երբ քիւրն կնեաց լըցոք | 18. Այս անցատեղան աշխարհս |
| 7. Մեռու ետնաբարե Աղամ | 19. Փակի մի իւրառ տամ ինչ |
| 8. Այ իմ զեղեցիկ արեայ | 20. Անթիւ եւ բազում մարդիկ |
| 9. Մարգ, ու յիշէ՛ յոյզ լիւնի | 21. Մեռե՛, զուր քաղում լացիւր |
| 10. Ձիւն ու Աղամայ օրիւկ | 22. Մեռն ոչ բազառու կասէ |
| 11. Իմ զո՛ւր, իմ երեւի՛լս ամէն | 23. Այս երեւի՛լս բարեւ |
| 12. Մեռ ծարց ու աղաւթ յոյզ | |

Համապատասխան որոշ վկայություններ են պահպանվել նաև Ն.Ն. 10329, 10275, 6185 և այլ ձեռագրերում, որոնք բոլորն էլ պատկանում են գրիգորիսյան խմբագրությանը: № 5622 ձեռագրի նշումները հիմնականում համընկնում են նույն խմբագրությանը պատկանող Վիեննայի Մխիթարյան մատենադարանի № 977 ձեռագրի տվյալներին²⁷:

Սրանցից զատ, № 5622 ձեռագրում հանդիպում ենք Գրիգորիսին վերագրված մի քանի կաֆաների, որոնք միևնույն ժամանակ առկա են և նախագրի-

²⁶ Այդ մասին տե՛ս մեր հոդվածը ՀՍՍՀ ԳԱ «Լուսին» (Հաս. դիտ.), 1988, № 8, էջ 85:

²⁷ Ն. Ակիբյան, Գրիգորիս Ա կաթողիկոս Աղթամարի, էջ 112:

գործիսյան խմբագրությունն օրինակներում՝ առանց հեղինակի անվան։ Ո՞րն է այս երևույթի բացատրությունը։ Թերևս հենց այստեղ պետք է որոնել Աղթամարցու կողմից բնական ողբերի պակասող տողերի և վանկերի հավելման փաստը, որի մասին ձեռագրի հիշատակարանում ակնարկում է հիշյալ Գրիգոր քահանան։ Ողբերկու վանկերն և զմէկն ինքն էր արարեր ի բնական ողբերն, զի պակաս էր։ Ըստ այսմ, Գր. Աղթամարցին հենց այս վերջին խմբի կաթանների մեջ է, որ պիտի էլատարած լինի լրացումները։ Նման ենթագրությունը ավելի բան հավանական է դառնում, երբ դիմում ենք ուղղակի թյոյ կաթաններին։ Ներանցից մեկը, որը մի շարք ձեռագրերում (№ 10275, 5622, 6183, Վիեննայի № 977) Գրիգորիսի անունով է, աղծատումներով առկա է անգամ X դարի օրինակում։ Ահա ի դ. օրինակում եղած այդ կաթան և նրա դիմաց՝ նույնի Գր. Աղթամարցու անվամբ հայտնի տարբերակը.

Պղնձեքի զովաւէ եւ քաղաքական,
շինել յկաւ ժաղ զայս ոչ ոսկի նման.
Դաւ վայ շինեալաց տօւ,
որ յվայեցաւ զիեմ միաբան.
Գեաջաւ և տեղիս բազաւ,
մեր ամեն ոսկեւ ձաղաքան:

(«Հանգեա ամսօրյա», 1300,
Ն 1—4, էջ 43):

Այս գրուին զեղեցիկ, աղօտ,
զովեկի. մեծ, աւալալեւ.
Չկաւ լինել այլ բաւ զայս,
զի այս շինեալաւ է անմաւ.
Այ վայ զօւ սոցա տօւ,
որ չեղաւ նա մեզ բնակաւ.
Գրեալաւ և աստ բազաւ,
զանցաւ շինեալաւ ամենայն:

(Պատմութիւն Պղնձե Բաղաւի,
Տիգրան, 1857, էջ 33):

Այստեղ էլ, սակայն, զգացվում է լրացուցիչ փաստերի անհրաժեշտություն։

Հնարավոր է մեկ այլ ենթագրություն ևս. քանի որ Պղնձե քաղաքի մեղ հասած ձեռագրերը հիմնականում ընդօրինակված են XVII—XVIII դդ., ապա բացառված չէ, որ հետագայում նախագործորիսյան որոշ օրինակների մեջ փոխանցված լինեին և գրիգորիսյան մի քանի կաթաններ։

Բնեվոզ հարցի առնչությամբ գոյություն ունի մասնակի տարակուսանք հարուցող մի հանգամանք, որը կարող է որոշ դեպքերում շփոթությունների տեղիք տալ։ Խոսքը վերաբերում է Վիեննայի Մխիթարյան մատենադարանի № 54 ձեռագրին՝ ընդօրինակված Տրապիզոնում, 1657 թ., Ամիրոսի Իրզեկացու կողմից²⁶։ Այդ ձեռագրի հետ մեր ունեցած ծանոթությունը սահմանափակվում է Տաշյանի հաղորդած տեղեկություններով։ Ըստ հիշատակագրի հավաստման (թ. 6բ), ձեռագրում ամփոփված Պղնձե քաղաքի պատմությունը, ինչպես և մի երազահան օր յարապ լեզվի ի հայոց բառա է թարգմանել Առաքել Անեցիին կամ Շիրակվանեցին 1222 թ., «ժանդակությամբ Մխիթար Զեչկանցիի Մեղ հայտնի է նաև ձեռագրի առաջին կաթան»՝ «Ասեմ բեզ դրուց, Մուսէա, Հենվելով այս փաստի վրա և ինկելով նույն կաթայով սկսվող մի շարք ձեռագրերի ծանոթությունից, հնարավոր է վերջինս ևս դասել գրիգորիսյան խմբագրության ձեռագրերի շարքը։ Առաջին հայացքից կարծես ստացվում է հակասություն»՝ XIII դարի թարգմանության մեջ առկա են կաթաններ, որոնք մի շարք այլ աղբյուրներից հայտնի են XVI դարում ապրած Գր. Աղթամարցու անունով։

Շիրակվանեցու հիշատակարանի առկայությունը լպետք է կասկածի տակ դնի այդ ձեռագրում ևս Աղթամարցու հորինած որոշ կաթանների ներթափանց-

2. Տաշյան, Յուզախ ձեռագրաց..., էջ 256.

ման հնարավորությունը։ Անկասկած, XIII դարի հիշատակարանը պահպանած այս ձեռագիրը հարստացել է հետագայի տարրեր հեղինակների՝ այդ թվում և Գր. Աղթամարցու կաթաններով։ Նույն եղանակով էլ Աղեքսանդրի պատմության մեջ տեղ գտած ամենատարբեր հեղինակների զանազան կաթաններ երկար ժամանակ վերագրվել են Խ. Պեշտոնցուն, նրա մի հիշատակարան-կաթայի հիման վրա, ուր ասվում է.

Առ ձեզ պաշատաւ ընկելմ,
Ընրեցողք, գրաց ի լման,
Ըզնչառեցիս մուրա,
Ատաւէ յիշման զիս աւժան,
Որ տաւաւոր ամէն,
Ասացի, զիեւ ի սմայ, որ կան...²⁹

— Իշատակարանը գրվել է XIV դարում, իսկ Պատմությունը շարունակել է կաթաններ ներառել նույնիսկ XVI—XVII դարերում։

Ինչպես երևում է, պարպտումներն առայժմ ուղղագծում են Պղնձե քաղաքի պատմության բնագրի մեջ կաթանների ներհյուսման գործում Գր. Աղթամարցու կատարած աշխատանքի միայն որոշ կողմերը։ Մակայն այսքանն էլ որոշակի հիմք է տալիս պնդելու, թե տաղերգուի գրչից ելած կաթաններ ավելի են, քան ներկա հոդվածում հիշատակվածները։

Պղնձե քաղաքի որոշ կաթաններ կապվում են Զաքարիա Գնունյանց բանաստեղծի անվան հետ։ Նկատենք, որ նախկինում (Ն. Ակիբյան, Գ. Հովսեփյան և այլք) Զաքարիան իբրև կաթագիր հիշատակվել է լույս Աղեքսանդր Մակեդոնացու պատմության կապակցությամբ։ Պարզվում է, սակայն, որ Պղնձե քաղաքի պատմության որոշ կաթաններ ևս հուշում են Զաքարիա Գնունյանցի անունը։ Հետաքրքիր է, որ մեզ հայտնի ձեռագրերում Զաքարիայի կաթանները ոչ թե ջրված են րուն բնագրում, այլ ուրիշ կաթանների հետ կցված են Պղնձե քաղաքի պատմության վերջից՝ իբրև հավելված, առանց հեղինակի անվան հիշատակության։ Եվ քանի որ որոշ հիմքեր կան ենթադրելու, որ Զաքարիայի կաթանները Պղնձե քաղաքի պատմություն մուտք են գործել միջնորդաբար՝ Աղեքսանդր Մակեդոնացու պատմության միջոցով, ապա այս հարցին մենք նպատակահարմար ենք դառնում անդրադառնալ մեկ այլ անգամ՝ Աղեքսանդր Մակեդոնացու պատմության Դեռ Զաքարիայի առնչությունները քննելու կապակցությամբ։

Պղնձե քաղաքի պատմության հայերեն թարգմանությունը, այսպիսով, իր բաղադարյան գոյության ընթացքում աստիճանաբար համալրվելով նորանոր կաթաններով, ընդհանուր առմամբ պարունակում է մոտ 100 կաթան։ Այդ կաթանները տեղեկացնում են երկու առանձին խմբավորում. 1. բնագրից եկող կաթաններ (բնական ողբեր), որոնց թիվը նախնական տվյալներով հասնում է 10-ի և 2. հայ հեղինակների ստեղծած կաթաններ։ Դատելով այս հոդվածում հրապարակված փաստերից, երկրորդ խմբավորման կաթաններից հայտնի են դառնում Մխիթարի (XIII դ.) 5 կաթան, Հովսեփ Աղթամարցու (XVI դ.) 3 կաթան և Գրիգորիս Աղթամարցու (XVI դ.) 23 կաթան։ Բնական է, որ Պատմության մնացած կաթանները ստեղծվել են ոչ միայն այս, այլև ուրիշ հեղինակների կողմից, որոնց անունները, սակայն, չեն պահպանվել։

26 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 3587, Բ. 26ա.

Hasmik Simonyan
ON THE VERSES OF "THE TALE OF THE CITY OF BRASS"
Summary

The Mashtots Matenadaran and repositories of Armenian manuscripts outside Armenia host numerous manuscripts of *The Tale of the City of Brass*. The hand reproduction of the tale text in Armenian continued up to the 20th c. In the 18th century the process of active publication of the *Tale* began in Constantinople and Echmiatsin. Around twenty publications dating from the 18-19th centuries have survived. Collections of verses from the *Tale of the City of Brass* were published too. In the course of centuries the Armenian rendering of the *The Tale of the City of Brass* has been enriched with around 100 rhymes (Arab. *qafiya*). The corpus of these texts can be divided into 1. Verses rendered from the original text of the laments and 2. Verses of Armenian authorship composed by *Mkhitar* (12th c), *Hovsep Aghtamartsi* (16th c), *Grigoris Aghtamartsi* (16th c.) and poets whose names have not reached us.

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴԻՎԱԾՆԵՐ
RESEARCH ARTICLES

Jack Haney

ON SOME VERY LONG RUSSIAN FOLKTALES

Без присказки сказка, Что без полозьев салазки. С горы по льду Нет им ходу, А по гладкому пути Нечего их и за собой везти.	Without a pretale the tale Is like a sled without runners, Down the hill over the ice There's no track for it, And over the smooth way There's nothing to carry behind.
---	--

The twentieth century apparently saw the birth and death of an exceptional sort of folktale in Russia, the "Long, Long Tale", known in Russian as the *долгая сказка*.¹ Or rather should one say, known to a few Russians as the *долгая сказка*. Most of them insist that a tale should be not too *длинная* and never *долгая*. But as will be made clear, *долгая сказка* is precisely the term used by the tellers of these tales and that is the term that will be used here. But for the English reader there is a problem: how to distinguish between the two Russian words for which we apparently make no common distinction. "Long" and "Lengthy" are used almost interchangeably for both time and space. The proposed solution involves the manner in which the tales were commonly told.

But first to the question of provenance. As far as I can ascertain at the present time, these very long folktales were recorded only over a limited time, from ca. 1930 to ca. 1976. There are none in the classical collection of N. E. Onchukov (*Серебряные сказки*), nor in the Karelian tales selected by M. K. Azadovskii (*Русские сказки в Карелии. Старые записки*). Not surprisingly, the brothers Sokolov did not collect any of them in the Belozersk region either. Nor did Karnaukhova. As far as I have been able to discern, they have been published in but three scholarly editions:

1. *Сказки М.М. Корзуева*, ed. A.N. Nechaev, Petrozavodsk, 1939.
2. *Русские народные сказки Карельского Поморья*, A.P. Razumova and T.I. Sen'kina, Petrozavodsk, 1974.
3. *Русские народные сказки Пудожского Края*, A.P. Razumova and T.I. Sen'kina, Petrozavodsk, 1982.

LL – *The Book of Leinster*, formerly *Lebar na Núachongbála* (see Best, Bergin & O'Brien 1954)

LU – *Lebor na hUidre*, *The Book of the Dun Cow* (see Best & Bergin 1992)

MBh. – *Mahābhārata* (see Van Buitenen 1973)

Mvs. – *Mahāvamsa* (see Geiger 1958)

¹⁹ In original: "Е.М. Мелетинский с категорией мотива связал термин «архетипический мотив» – микросюжет с определенной предикатно-актантной структурой и более или менее самостоятельными глубинными смыслами, в конечном счете восходящими к архаическим мифотворческим комплексам".

NFC – UCD Delargy Centre for Irish Folklore and the National Folklore Collection (formerly known as Irish Folklore Collection), University College Dublin

ŚB – *Śatapatha Brāhmaṇa* (see Weber 1964, Eggeling 1889)

References

- AFANAS'YEV, A. N., 1985: 'The Frog Princess', in: *Russian Folk Fairy-tales of A.N. Afanas'yev*, Moscow: Nauka (In Russian: 'Царевна-лягушка: [Сказка] № 269' // Народные русские сказки А. Н. Афанасьева. М.: Наука), Vol. 2, 264–7.
- ALEXANDROVA, N., (= SAMOZVANTSEVA N.), 1989: 'Formation of Ideas on History in the Indian Buddhist tradition', in: Vertogradova, V., ed., *Buddhism: Its History and Culture*. Moscow: Oriental Publishers (published in Russian: Самозванцева, Н., 'Формирование представлений об истории в буддийской традиции Индии'. Буддизм. История и культура. Москва: «Восточная литература», 1989), 152–168.
- ALEXANDROVA, N., 2008: *The Path and the Text. The Chinese Pilgrims in India*, Moscow: Oriental Publishers (In Russian: Н. В. Александрова, 2008, Путь и текст. Китайские паломники в Индии. Москва: «Восточная литература»).
- ANSON, V. P., 1966: 'Fairy-tale "The Frog Princess"', in: id., *Folklore as the Art of the Word* (In Russian: 'Волшебная сказка «Царевна-лягушка». Фольклор как искусство слова) Moscow: Nauka, 19–49.
- ANTON, H. H., 1982: 'Pseudo-Cyprian *De duodecim abusivis saeculi* und sein Einfluss auf den Kontinent, insbesondere auf die karolingischen Fürstenspiegel', in: Löwe, H., ed., *Ireland and Europe in Early Middle Ages; Die Iren und Europa im früheren Mittelalter*, Stuttgart, vol. II, 568–617.
- BAUMGARTNER, E., 1987: *Tristan et Iseut: De la légende aux récits en vers*, Paris: Presses Universitaires de France.
- BEECH, J., ET AL., EDS., 2007: *Scottish Life and Society: Oral Literature and Performance Culture*, Edinburgh.
- BEST, R. I., & O. BERGIN, EDS., 1992: *Lebor na hUidre. The Book of the Dun Cow*, Dublin: RIA (3rd repr.; 1st ed. 1929).
- BEST, R. I., BERGIN, O. & M. A. O'BRIEN, EDS., 1954: *The Book of Leinster, formerly Lebar na Núachongbála*, vol. 1, Dublin: DIAS.
- BREEN, A., 2002: 'De XII Abusiis: Text and Transmission', in: Ní Cháthain, P. & M. Richter, eds., *Ireland and Europe in Early Middle Ages: Text and Transmission; Irland und Europa im früheren Mittelalter: Texte und Überlieferung*, Dublin: Four Courts, 78–94.

- BULATOV, M. A., ED., 2002: 'Frog Princess' (In Russian: 'Царевна-лягушка'), in: *Big Book of Russian Fairy Tales*, Moscow: Rosman, 279–292 (1st ed., in Russian: *Сборник русских народных сказок, песенок, загадок и скороговорок*. М.-Л.: Детская литература, 1941).
- CAREY, J., 2007: *Ireland and the Grail*, Celtic Studies Publications Series 11, Aberystwyth: Celtic Studies Publications.
- CARNEY, J., 1955: *Studies in Irish Literature and History*, Dublin: DIAS.
- DUMÉZIL, G., 1971: *Mythe et épopée. Types épiques indo-européens: un héros, un sorcier, un roi*, Paris: Mouton.
- EGGELING, J., 1885: *The Śatapatha Brāhmaṇa according to the Text of the Mādhyandina School*, 5 vols., *Sacred Books of the East* 12, 26, 41, 43, 44, Delhi: Motilal Banarsidass (repr. 1963).
- FIGUERE, S., 1967: 'Les origines orientales de la Légende du Graal: évolution des thèmes dans le cadre des cultures et des cults', *Cahiers de Civilisation Médiévale Xe-XIIIe siècles*, Université de Poitiers, April–June, 207–19.
- FOMIN, M., 2010: 'And His Cloak Covered the Whole Island – Stories of Religious Conversion in Pāli and Medieval Irish Narrative Traditions', in: Fomin, M., Mac Mathúna, S. and V. Vertogradova, eds., *Sacred Topology of Early Ireland and Ancient India: Religious Paradigm Shift*, Journal of Indo-European Studies Monograph Series 57, 195–239: 209–15.
- GEIGER, W., ED., 1958 (1908): *The Mahāvamsa*, London: Pāli Text Society.
- IVANOV, VYACH. VS., 2004 (1985): 'Echoes of Motifs of the Medieval Celtic Literatures in Later Traditions', *Selected Works in Semiotics*, Moscow: Languages of Slavonic Cultures (In Russian: 'Отзвуки мотивов средневековых кельтских литератур в позднейших традициях', *Избранные труды по семиотике и истории культуры*. М.: Языки славянской культуры; первая публикация: *Западноевропейская средневековая словесность*. М.: МГУ, 1985, 41–3), 453–5.
- KALYGUINE, V. P., 1986: *The Language of the Archaic Irish Poetry*, Moscow: Nauka Publishers (In Russian: *Язык древнейшей ирландской поэзии*. Москва: Наука), 2nd ed. (2003) Moscow: URSS. Transl. into French: Victor Kalyguine, *La langue de la poésie irlandaise archaïque*. Hamburg: Helmut Buske Verlag, 1993.
- KANGLE, R. P., ED., 1969: *The Kāutilya Arthaśāstra*, University of Bombay Studies, Sanskrit, Prakrit and Pāli, no. 1, Part I (Edition), Bombay.
- KANGLE, R. P., ED., 1972: *The Kātiliya Arthaśāstra*, Part II (The Translation), Bombay.
- KLIČH, E., 1903: 'Teksty białoruskie z pow. Nowogrodzkiego', in: *Materialy i prace komisji językowej*, Krakow.
- KOREPOVA, K. E., 1980: 'The Plot of "The Frog Princess" in the Eastern Slavic Folklore Tradition', in: *Aspects of the Folklore Plot and Composition*, Gorky:

- Gorky University Press (In Russian: 'Сюжет «Царевна-лягушка» в восточнославянской сказочной традиции'. // Вопросы сюжета и композиции. Горький: Горьковский ГУ).
- LOOMIS, R. S., 1963: *The Development of Arthurian Romance*, New York: Harper & Row.
- LOTMAN, YU., 2000: 'Inside the Thinking Worlds. Part 2. Symbolical Spaces', in: *The Semiosphere*, St. Petersburg: Iskusstvo-SPb. (In Russian: Ю.М. Лотман, *Внутри мыслящих миров*. Часть вторая. Символические пространства // *Семносфера*. Санкт-Петербург, 'Искусство-СПб').
- LYSAGHT, P., Ó CATHAÍN, S., & Ó HOGAÍN, D., EDS., 1999: *Islanders and Water-Dwellers, Proceedings of the Celtic-Nordic-Baltic Folklore symposium held at University College Dublin, 16–19 June, 1996*, Dublin: DBA Publications.
- MAC MATHÚNA, S., 1994: 'The Structure and Transmission of Early Irish Voyage Literature', in: Tristram, H. L. C., ed., *Text und Zeittiefe, ScriptOralia* 58, Tübingen: Niemeyer, 313–57.
- MAC MATHÚNA, S., 1996: 'Motif and Episodic Clustering in Early Irish Voyage Literature', in: Tristram, H. L. C., ed., *(Re)Oralisierung, ScriptOralia* 84, Tübingen: Niemeyer, 247–62.
- MAC MATHÚNA, S., 2000: 'Contributions to a Study of the Voyages of St. Brendan and St. Malo', in: Wooding, J. M., ed., *The Otherworld Voyage in Early Irish Literature*, Dublin: Four Courts, 157–74.
- MAC MATHÚNA, S., 2006: 'The Irish Life of Saint Brendan: Textual History, Structure and Date', in: Burgess, G. S. & C. Strijbosch, eds., *The Brendan Legend: Texts and Versions*, Leiden, Boston: Brill, 117–158.
- MARX, J., 1965: *Novelles recherches sur la littérature arthurienne*, Paris: Klincksieck.
- MEENS, R., 1998: 'Politics, Mirrors of Princes and the Bible: Sins, Kings and the Well-being of the Realm', *Early Medieval Europe* 7, no. 3, 345–57.
- MEID, W., 1974: 'Dichtkunst, Rechtspflege und Medizin im alten Irland: Zur Struktur der altirischen Gesellschaft', in: *Antiquitates Indogermanica: Studien zur Indogermanischen Altertumskunde und zur Sprach- und Kulturgeschichte der indogermanischen Völker: Gedenkschrift Hermann Güntert zur 25. Wiederkehr seines Todestages am 23. 1973. April. Hrsg. von M. Mayrhofer, W. Meid, B. Schlerath, R. Schmitt*, Innsbrucker Beiträge zur Sprachwissenschaft 12, Innsbruck: Institut für Sprachen und Literaturen der Universität.
- MELETINSKY, E. M., 1976: *Poetics of the Myth* (In Russian: Мелетинский Е. М. *Поэтика мифа*), Moscow: Oriental Publishers.
- NAZIROV, R. G., 1982: 'Resurrection from bones in myths and fairy-tales', in: *Folklore of the nations of the Russian Federation*, Ufa (In Russian: 'Возрождение из костей в мифах и сказках'. // *Фольклор народов РСФСР: Сборник статей*. Уфа), 28–35.

- NEKLYUDOV, S. YU., 2004: 'Motif & Text', in: Tolstaya, S., ed., 2004. *Language of Culture: Semantics and Grammar*, Moscow: Indrik (In Russian: 'Мотив и текст', *Язык культуры: семантика и грамматика. К 80-летию со дня рождения академика Никиты Ильича Толстого (1923–1996)*). Отв. ред. С.М. Толстая. М.: Индик, 236–247.
- NEVELOV, E. M., 1997: 'The Tale about Piotr and Fevroniya and the 'Frog Princess'', in: *Ryabinin Readings-95. Proceedings of the International Conference*, Petrozavodsk (In Russian: 'Повесть о Петре и Февронии и «Царевна-Лягушка»', *Материалы международной научной конференции «Рябининские чтения-1995». Сборник научных докладов, Петрозаводск*).
- NIKIFOROV, A., 1934: 'Important Stylistic Devices in the Text of the Northern Russian Fairy Tale' (In Russian: 'Важнейшие стилистические линии в тексте северной русской сказки'), *Slavia* 13, no. 1, 36–58.
- Ó CRUALAOICH, G., 2004: *The Book of the Cailleach. Stories of the Wise-Woman Healer*, Cork: Cork University Press, 12–37.
- Ó FIANNACHTA, P., 1985: 'Betha Choluimb Chille', *Léachtaí Cholm Cille* 16, 11–33.
- Ó HÓGAIN, D., 1985: *The Hero in Irish Folk History*, Dublin: Gill & Macmillan.
- O'KEEFE, J. G., 1913: *Bulle Shuibhne. The Frenzy of Suibhne being The Adventures of Suibhne Geilt. A Middle-Irish Romance. Irish Text Society Main Series 12*, London: Irish Text Society.
- O'KEEFE, J. G., 1931: *Bulle Shuibhne, Medieval and Modern Irish Series 1*, Dublin: DIAS.
- O'KELLEHER, A., & SCHOEPFERLE, G., eds., 1994 (1918): *Betha Colaim Chille. Life of Columcille. Compiled by Maghnas Ó Domhnaill in 1532*, Dublin: DIAS (repr. of the University of Illinois ed.).
- OLMSTED, G., 'The Gundestrup version of *Táin Bó Cúailnge*', *Antiquity* 50, no. 198, 95–103.
- Ó SUILLEABHAIN, S., 1951–2: 'Naomh. 85. Colm Cille i dToraigh', *Béaloidéas* 21, 196–198.
- PADEL, O. J., 1981: 'The Cornish Background of the Tristan Stories', *Cambridge Medieval Celtic Studies* 1, 53–81.
- PROPP, V., 1967: *Folklore and Reality* (In Russian: *Фольклор и действительность*, М.), Moscow: Nauka.
- PROPP, V., 1968: *Morphology of the Folktale*, 2nd ed., transl. L. Scott, rev. L. A. Wagner, Austin & London: University of Texas Press.
- PROPP, V., 1984: *Russian Fairy-tale*, Leningrad: Nauka.
- RAU, W., 1957: *Staat und Gesellschaft im alten Indien nach den Brāhmāna-Texten dargestellt*, Wiesbaden: Harrassowitz.

- ROMANOV, V. N., 1978: 'The Notions 'King' and 'Kingdom' in Ancient Indian Political Theory' (In Russian: 'Древнеиндийские представления о царе и царстве'), *Vestnik Drevnej Istorii* 4, 26–33.
- ROMANOV, V. N., 1987: 'Observations on the Nature of the *Mahābhārata*', in: Vertogradova, V. V., ed., *India: Text, Culture*, Moscow: Oriental Publishers (In Russian: 'Наблюдения над природой Махабхараты', *Индия: Текст, Культура*, под ред. В. В. Вертоградовой, М., 'Восточная литература'), 88–104.
- SMITH, B. L., 1972: 'The Ideal Social Order as Portrayed in the Chronicles of Ceylon', in: Smith, B. L., Reynolds F. & G. Obeyesekere, eds., *The Two Wheels of Dhamma: Essays on the Theravada Tradition in India and Ceylon*, Chambersburg, PA: American Academy of Religion, 31–57.
- STOKES, W., 1904: ED. & TRANS., 'Esnada Tige Buchet: The Songs of Buchet's House', *Revue Celtique* 25, 18–38, 225–27.
- STRUBOSCH, C., 2000: *The Seafaring Saint. Sources and Analogues of the Twelfth-Century Voyage of Saint Brendan*, Dublin: Four Courts.
- SZÖVÉRFY, J., 1956–7: 'Manus O'Donell and Irish Folk Tradition', *Éigse* 8, 108–132.
- THIERMAN, D. H., 1989: *Stories from Tory Island*, Dublin: Country House.
- THOMPSON, S., 1932–6: *Motif Index of Folk Literature: a Classification of Narrative Elements in Folk-Tales, Ballads, Myths, Fables, Mediaeval Romances, Exempla, Fabliaux, Jest-books, and Local Legends*, Bloomington: Indiana University Press.
- TOPOROV, V. N., 1995: 'On Early Indian Charm Tradition', in: Sveshnikova, A., *Minor Forms of Folklore*, Moscow: Oriental Publishers (In Russian, 'О древнеиндийской заговорной традиции', *Малые формы фольклора. Сборник статей памяти Г.Л. Пермякова*. Сост. А.Н. Свешникова. М.: Восточная литература), 8–104.
- VAN BUITENEN, J. A. B., ED. & TRANS., 1973: *The Mahābhārata*, vol. 1. (*Adi-parva: The Book of the Beginning*), Chicago & London: The University of Chicago Press.
- VERTOGRADOVA, V. V., 1975: 'Architecture', in: Gerasimov, A.V., ed., *The Culture of the Early India*, Moscow: Oriental Publishers (In Russian: 'Архитектура', *Культура древней Индии*, Москва, 'Восточная литература'), 293–314.
- WATKINS, C., 1995: *How to Kill a Dragon: Aspects of Indo-European Poetics*, Oxford: Oxford University Press.
- WEBER, A., ED., 1964: *The Śatapatha-Brāhmaṇa in the Mādhyandina-Śakhā with Extracts from the Commentaries of Sāyana, Harisvāmin and Dvivedaganga*, *The Chowkhamba Sanskrit Series*, 96, Varanasi: Chowkhamba Sanskrit Series Office (repr. of 1924 Leipzig Brockhaus edition).

Zhukova, L., ed., 2002: *Frog Princess* (In Russian: Царевна-лягушка, М.: Белый город), Moscow.

Մաքսիմ ֆոմին
ՀՈՂԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ԴԻՊԼՈՄԱՏԻ ԻՌԱՆԴԱԿԱՆ
ԵՎ ՌՈՒՍԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
Ամփոփում

Բանագետներին քաջ հայտնի է, որ պատմականորեն միմյանց հետ առնչություն չունեցած ժողովուրդները կարող են ունենալ շատ նման պատմություններ: Նշված ընդհանրությունների համարժեք մեկնության համար անհրաժեշտ է ճիշտ ընկալել վերջիններիս բնույթը: Հողվածում փորձ է արվում ապացուցել, որ տարբեր մշակույթներից սերված և առերևույթ միմյանց հակադրվող երեք տարարնույթ սյուժեներ՝ Քոլումբիյի պատմությունը Իռլանդիայի Թորի կղզում, Բուդդայինը Շրի Լանկայում և ռուսական գորտ-արքայադստեր հեքիաթը ծագում են նույն՝ թագավորության նախատիպ ներկայացնող հողերի ձեռք բերման համընդհանուր դիպաշարից: Երեք սյուժեներն էլ կարող են դիտվել որպես թագավորության փոխաբերական դրսևորում բանահյուսական ավանդությունների համատեքստում: Քոլումբիյը հայտնվում է հեթանոսներով բնակեցված Թորի կղզում՝ մի քանի վանականների ուղեկցությամբ: Տեղացիներից սուրբը խնդրում է փոքրիկ հողակտոր, որ եկեղեցի կառուցի, սակայն մերժվում է: Ի վերջո խնդրում է իր թիկնոցի չափ հողակտոր. թիկնոցը, մեծանալով, ծածկում է ողջ կղզին: Շատ նման մի ավանդություն է մեզ հասել լանկյան դիցաբանությունից. Բուդդան, հայտնվելով Շրի Լանկա կղզում, բնակիչներին խնդրում է թույլ տան իր թիկնոցը փռել ու նստել վրան: Թիկնոցը, մեծանալով, ծածկում է ամբողջ Շրի Լանկան: Ռուսական հեքիաթում հողի ձեռք բերման ու թագավորության փոխաբերական դրսևորման համարժեքներից է գորտ արքայադստեր գործած գորգը, որի վրա ողջ թագավորությունն է՝ քաղաքներով, գետերով:

* Հողվածն առաջին անգամ հրատարակվել է *Celts and Slavs in Central and Southeastern Europe: Studia Celto Slavica III*, (Zagreb 2010) հողվածների ժողովածուում: Վերահրատարակվում է խմբագրական խորհրդի թույլտվությամբ:

Լուսինե Հայրիյան

ԱՆԴԵՐՍԵՆԻ ՀԵՔԻԱՔՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆԻ ՀԵՏԱՔՐԲՐՈՒԹՅԱՆ ԴԻՏԱԿԵՏՈՒՄ

19-րդ դարի ութսունական թվականների սկզբից Աղայանը շրջադարձ է կատարում դեպի ստեղծագործական նոր ասպարեզ՝ հեքիաթագրություն: Գրողի տաղանդը հեքիաթագրության բնագավառում զարգանում է՝ հենվելով բանահյուսական հեքիաթի ժանրային առանձնահատկությունների և համաշխարհային փորձի ճանաչման սկզբունքների վրա:

Աղայանի հեքիաթները եղել և մնում են հետազոտական դիտակետում, մինչդեռ նրա և համաշխարհային մեծ ճանաչում գտած հեքիաթագիրների ստեղծագործական առնչությունները, աղերսները, ազդեցությունները շարունակում են քիչ ուսումնասիրված մնալ:

Դեռևս Աղայանի ժամանակակիցները կոչում են գրողին «հայոց Անդերսեն» պատվանունով՝ համեմատելով վերջինիս դանիացի հանրահռչակ Հանս Բրիստիան Անդերսենի հետ (1805-1875) (Լեո 1989, 314):

Գրողների մեծ ճանաչումը, որը ձեռք է բերվել հեքիաթի ժանրում ստեղծագործելու մղման արդյունքում, նրանց առավել ցայտուն ընդհանրությունն է: Հենց այս ոլորտում բացահայտվեց նրանց գրական մեծ տաղանդը: Աղայանի՝ հայ հեքիաթագրությանը մատուցած ծառայությունն առավել դիպուկ է որակել Թումանյանը. «Բայց ով է մրցել նրա հետ, երբ նա «Անահիտ» է պատմել կամ «Գյուլնազ տատի հեքիաթը» և գրույց է արել երեխաների հետ կախարդական աշխարհներից» (Ղազարոս Աղայանը ժամանակակիցների հուշերում 1967, 76):

Նույնքան անգերազանցելի է եղել «հեքիաթների անմահ ստեղծողի» (Աղայան 1962, 448) Անդերսենի տաղանդը եվրոպական գրականության մեջ:

Հոգեհարազատության զգացումով ներշնչված՝ Աղայանը կատարում է ռուսական «Родник» ամսագրի 1890թ. հուլիս-օգոստոսյան միացյալ համարում տպագրված Ե. Ա. Սիստեայի «Հեքիաթների անմահ ստեղծողը» կենսագրական ակնարկի թարգմանությունը, որը լուսնծայվում է «Աղբյուրի» 1890թ. վերջին հինգ համարներում (№ 8-9, 294-315, № 10, 348-361, № 11, 400-411 և № 12, 451-458): Կցելով նյութին որոշակի միջամտություններ՝ Աղայանն արտահայտում է իր անկեղծ հիացմունքն Անդերսենի ստեղծագործության՝ մասնավորապես հեքիաթների վերաբերյալ և դրանով բացատրում Անդերսենի կենսագրությամբ հետաքրքրված լինելու հանգամանքը. «Գիտենալ Անդերսենի հեքիաթները և չփափագիլ գիտենալու, թե ինչպիսի մարդ է Անդերսենը՝ անկարելի է» (Աղայան 1962, 450): Նույն հիացմունքով, սակայն, Աղայանը չի խոսում անդերսենյան հեքիաթների հայերեն թարգմանությունների վերաբերյալ, վերջինիս չի գոհացնում դրանց թարգմանական որակը. «...ծանոթանալով հռչակավոր բանասերի կյանքին, այն մարդուն, որի հեքիաթները թարգմանված են բոլոր եվրոպական լեզուներով, կան և հայերեն թարգմանություններ, թեև ոչ այնքան հաջող», - գրում է Աղայանը

(Աղայան 1962, 449): 19-րդ դարի 80-90-ական թվ.-ին և 20-րդ դարասկզբին, Անդերսենը հայտնվել էր հայ հրատարակիչների և թարգմանիչների ուշադրության կենտրոնում. 1882թ.-ին Տ. Նազարյանի հրատարակչությունը Թիֆլիսում լուսնծայում է Անդերսենի «Սոխակ» և «Խոզարած» հեքիաթները՝ գրքույկին կցելով փոքրիկ նախաբան և ակնկալելով թարգմանական լեզվի վերաբերյալ անաչառ քննադատություն. «...թարգմանության լեզուի մասին կը յուսանք որ մամուլը անաչառ դատողությամբ տայ» (Անդերսեն 1882, 3): «Աղբյուր» ամսագրի 1890թ.-ի 1-ին համարում տպագրվում է Անդերսենի «Աղջիկն ու լուցկիները» հեքիաթը Ալ. Ծատուրյանի թարգմանությամբ: 1904թ. Թիֆլիսում հրատարակվում են «Անդերսենի հեքիաթները»՝ 9 հեքիաթ հեղինակի կենսագրական մանրամասներով, Տ. Զավենի ֆրանսերենից-հայերեն թարգմանությամբ և այլն):

Անդրադարձն Անդերսենի կենսագրությանը և ակնարկի լուսնծայումը «Աղբյուրի» էջերում պայմանավորված էր նաև ամսագրի հիմնական սկզբունքներից մեկով. այն է՝ «երեխաներին կրթել մեծ մարդկանց օրինակով»: Այս հիմնարար սկզբունքի մասին ասվում է «Աղբյուրի» 1884թ. 3-րդ համարի հավելվածում (Հակոբյան 1959, 68):

Աղայանը կատարում է Անդերսենի կենսագրական ակնարկի թարգմանությունը՝ տեսնելով դանիացի հեքիաթագիրն «մեծ մարդկանց» բույլում կարևորելով գրողի տաղանդն ու ստեղծագործությունների արժեքավորությունը:

Իրենց գաղափարական-ստեղծագործական նկարագրով և մասնավորապես իբրև հեքիաթագիրներ, Հ. Բ. Անդերսենն ու Ղ. Աղայանն ունեն բազմաթիվ ընդհանրություններ, որոնք տեսանելի են գրողների ստեղծագործական ճակատագրերում, ընտրված ուղիներում և նույնիսկ վերջիններիս ստեղծագործությունների վերաբերյալ կատարված գրաքննական գնահատականներում, ինչը ժամանակին նկատել է Աղայանը, ցավով նշելով ակնարկում «ինասեր և նորատյաց» քննադատների անզիջում գնահատականների մասին, որոնք անարդարացի էին գտնվել Անդերսենի և նրա ստեղծագործությունների նկատմամբ: Վերջինս հարկ է համարում «միջանկյալ և բնագրից դուրս մի ծանոթություն տալ», որում պարզաբանում է «կյանք, պարզություն, անմեղություն, բնականություն» մեթոդը հնասեր նորատյացների քննաքննությունները, այսպիսով, զուգահեռ տանելով Անդերսենի քննադատների և իր ժամանակակից քննաքննների միջև: Աղայանի արդարացի կարծիքով «ինչքան էլ լավ գրես, եթե աշխարհիկ է պահպանած չես հին բանաստեղծելու ձևը, ճարտասանության կանոնները, նրանք (հնասերները, իմը՝ Լ. Հ.) կմերժեն: Նրանց համար կյանք, պարզություն, անմեղություն, բնականություն չկա, - ավելացնում է Աղայանը, - այլ միայն արվեստ է այն էլ շատ անգամ ճոռոմաբանության և արվեստականության միայն արվեստ է այն էլ շատ անգամ ճոռոմաբանության և արվեստականության միայն արվեստ է» (Աղայան 1962, 473): Նման անարդարության հանդիպել էր նաև հայ հեքիաթագիրը, Աղայանի ստեղծագործությունն անարդարացի դատելու միտումին հակված էին նույնիսկ ուշ շրջանի որոշ գրաքննադատներ: Խոսում օրինակ է Մխիթարյան միաբանության գրագետներից հայր Միմենոն Երեմյանի անդրադարձը Աղայանի երգերին ու հեքիաթներին: Վերջինս, Վենետիկում տպագրված «Ազգային դեմքեր» գրքում, խոսում է հայ գրականության մեջ կատարված բանահյուսական մշակումների, նաև Աղայանի երգերի ու հեքիաթների մասին, ըստ արժանվույն չգնահատելով դրանց պարզ, ժողովրդական բառ ու բանով համեմված լեզուն: Նրա կարծիքով Աղայանն ուղղակի «շպարել է իր գրվածքները նախշուն բառերով, ճոխացրել իր գրությունները առասպելներով, և կարգ մը անքննադատ դասակարգերուն համար նշանավոր գրագետ մը համարվել» (Երեմյան 1920, 39):

Գրողներին ուղղված նմանօրինակ մեղադրանքները ժողովրդական պատկերավոր լեզվից և հեքիաթի ձևակադապարային հնարավորություններից հրաժարվելու պատճառ չհանդիսացան: Երկուսն էլ համոզված էին, որ նման սկզբունքներով գրված հեքիաթները հետաքրքիր կլինեն թե՛ մեծերին, թե՛ փոքրերին:

«Իմ կյանքի հեքիաթում» Անդերսենը խոստովանում է. «Առաջին հրատարակության մեջ ներառված էին մանկությունից ինձ հայտնի հեքիաթները. Մոզեուսի օրինակով՝ ես պարզապես վերաշարադրելի էի դրանք՝ պահպանելով, ըստ իս, ամենահարմար և բնական միևնույն լեզուն և ոճը: Գիտակցելով, որ գիտակ ըննադատները խարազանելու են ինձ հենց այդ լեզվի համար՝ վերնագրեցի հեքիաթներս՝ «Հեքիաթներ երեխաների համար», ընթերցողներին ցանկալի տեսակետին հանգեցնելու նպատակով, սակայն ես մշտապես նկատի եմ ունեցել, որ գրում եմ դրանք ոչ միայն երեխաների, այլ նաև մեծահասակների համար» (Важдаев, 1957, 67–68., <http://www.sky-artcom/Гренбек>):

Մանկական գրականության մեծ նվիրյալ Ադայանը նույնպես «Մի կիսապատասխան «Մուրճ» ամսագրին» հոդվածում խորհուրդ է տալիս իր հեքիաթները կարդալ ոչ միայն փոքրերին, այլև՝ մեծերին (Ադայան 1963, 214), որոնք հեքիաթագրի գրչի տակ վերածվում էին իրական աշխարհի ճշգրիտ պատկերման, և այն վերափոխելու լավագույն միջոցների:

«Նախնականին մոտենալու» (Ադայան 1963, 213) ադայանական մղումը ճիշտ չէր ընկալվում, ժամանակի որոշ գրական ըննադատների և մանկավարժների կողմից: Ադայանի հեքիաթները նույնիսկ կործանարար էին համարում «անմեղ երեխաների քնքուշ խելքի և երևակայության» համար (Ղազարյան 1890, 422):

Ադայանը կարողանում է հիմնավոր և ծանրակշիռ փաստարկներով հակադարձել ըննադատներին. վերջինս գտնում էր, որ հեքիաթների անկրկնելի աշխարհը երեխայի երևակայությունը զարգացնելու անփոխարինելի միջոց է. «Եթե ես գիտենայի, թե որպիսի հեքիաթների լսելով է զարգացել Շեքսպիրի, Մերվանտեսի, Գյոթեի, Շիլլերի, Կոլումբի և սրանց նմանների երևակայությունը, ես նույն հեքիաթները կտայի և իմ ընթերցող սիրելի մանուկներին, թեկուզ նրանց լսած հեքիաթները լինեին ավելի ևս ահուդի և զարհուրելի» (Ադայան 1963, 214):

Ժամանակին նման մեղադրանքներ ուղղվել են նաև Անդերսենին, որոնց հեքիաթագիրը անդրադարձել է «Փոքրիկ Իդայի ծաղիկները» (1835) և «Օլե-Լուկոյե» (1841) հեքիաթներում. երիտասարդ ուսանողին և Օլե-Լուկոյեին վերոհիշյալ հեքիաթներում մեղադրում են երեխաների գլուխները հիմարություններով լցնելու և երևակայությունն աղավաղելու մեջ. Անդերսենն իր հերոս Օլե-Լուկոյեի շուրթերով, հակադարձում է վաղ ըննադատներին (Անդերսեն 1980, 188):

Ժամանակի և տարածության հեռավորությունը չի խանգարում նմանություններ նկատել նույնիսկ գրողներին դեպ ժողովրդական բանահյուսության գանձարանն ու հեքիաթի ժանրաձևն ուղղորդող հանգամանքների միջև:

Հեքիաթին դիմելու Ադայանի կողմնորոշումը պայմանավորված էր դարձյալական կրթության ժողովրդականացման պահանջով, ինչպես նաև որոշակի քաղաքական հանգամանքներով՝ ութսունական թվականների սկզբից ծայր առած գրաքննական խստություններով, ազատ մտքի ու խոսքի հետապնդումներով, իրականությունն ազատորեն ներկայացնելու, կնճռոտ հարցերի վերքաշման արգելքով: (Հակոբջանյան 2007, 366):

Հեքիաթներին դիմելը՝ ազատ արտահայտվելու միջոց է եղել նաև Անդերսենի համար: Գրողը համոզված էր, որ իսկական արվեստը պետք է անքակտելիորեն կապված լինի կյանքին. «Յուրաքանչյուր առարկա պետք է անվանել իր անունով և եթե դա վախեցնում է իրական կյանքում, ուրեմն անհրաժեշտ է իրագործել թեկուզ հեքիաթում» (Важдаев 1957, 93):

Անդերսենը հեքիաթի միջոցով տեսակետ էր հայտնում ժամանակի նշանակալի իրադարձությունների, հիմնախնդիրների և հասարակական զարգացման վերաբերյալ, փառաբանում մարդկային հանճարի վիթխարի ուժը. «Փառքի փշոտ ճանապարհը» (1855) հեքիաթում համաշխարհային պատմության՝ «կախարդական լապտերի», օգնությամբ ներկայացնում է «մտքի նահատակներին», որոնց փառքի ուղին փշոտ էր ու դժվարանցանելի՝ Արիստոֆանես, Սոկրատես, Հոմերոս, Ֆիրդուսի, Տիկտ Բրագե, Կոլումբոս, Գալիլեյ, ահա՛ մեծ պոետների, մտածողների, ճշմարտության մարտիկների վեր խոյացող անունները, որոնց վարքն ու գործը ներկայացնում է հեքիաթագիրը: Նրանց շարքը լրացնում է Քրիսթերն 2-րդը, որին Անդերսենն անվանում է «ժողովրդի սիրելին, գյուղացիների և քաղաքացիների բարեկամը» (Важдаев 1957, 95–97):

Նույն սկզբունքը կիրառում էր Ադայանը ժողովրդական հեքիաթների որոշ մշակումներում. վերջինս ժամանակի հասարակական խնդիրներին, քաղաքական կացությանն անդրադառնում էր հակադրելով հեքիաթային իրականությունն ու ներկան՝ հեքիաթներին ազգային-պատմական գունավորումով հաղորդելու միջոցով:

Ադայանը ստեղծում է պատմաաշխարհագրական ստույգ միջավայր՝ մեծ համակրանքով և ակնածանքով հիշատակում Ադվանից աշխարհի թագավոր Վաչագան Բարեպաշտին, ժամանակի Ադվանից կաթողիկոս Շուփադիշային, ազգային խորհրդանիշ դարձած Մեսրոպ Մաշտոցին և այլոց (Հակոբջանյան 200, 370–372):

Գրողն իր հեքիաթներում նշում է նաև աշխարհագրական բազմաթիվ տեղանուններ (Պարսկաստան, Մասիս սար, Կուր, Հնդկաստան, Հացիկ, Ադվանից աշխարհ, Պարտավ, Գանձակ, Շուշի, Թաթևառ, Թիֆլիս, Սպահան, Խորասան, Հաշտարխան)՝ այսպիսով ստեղծելով աշխարհագրական ստույգ միջավայր:

Մի շարք հեքիաթներում աշխարհագրական տեղանունների մատնանշման, աշխարհագրական ստույգ միջավայրի կերտման անհրաժեշտությունը տեսել է նաև Անդերսենը: «Երջանկության կրկնակոշիկներ» (1838) հեքիաթում դանիացի հեքիաթագիրը շեղվելով հեքիաթի ձևակադապարային առանձնահատկություններից ներկայացնում է ընթերցողին Կոպենհագենը՝ էստերզագե փողոցն ու Թագավորական հրապարակից քիչ հեռու գտնվող առանձնատները: «Արագիկներ» (1839) հեքիաթում գրողը պատմում է Եգիպտոսի, Աֆրիկայի և նույնիսկ բուրգերի ու աֆրիկյան բնակլիմայական առանձնահատկությունների մասին (Տրայե 1987, 65–66, 77):

Անդերսենի մի շարք հեքիաթներում («Թագավորի նոր զգեստը» (1837), «Երջանկության կրկնակոշիկներ», «Այգեպանն ու տերերը» (1872) և այլն) սուր են դրված դասակարգային մենաշնորհների, արտոնությունների խնդիրները, որի համար վերջինս ննթարկվում է դատափետման: «Դաննորա» հանդեսը մեղադրում է գրողին արքայական տոհմիկ ծագումով և պատվելի մարդկանց նկատմամբ ցուցաբերած անարգանքի մեջ՝ խորհուրդ տալով նրան օրինակ վերցնել ֆրանսիական նմուշներից կամ առհասարակ չստեղծագործել այդ ժանրում (Տրայե 1987, 78):

Իր հեքիաթներում Աղայանը նույնպես երբեք չէր հիմնում է անմիջական քննադատություն. «Հոգևորականությունն այն ժամանակ մի ձրիակեր դասակարգ չէր, – գրում է Աղայանը «Անահիտ» հեքիաթում: Բոլոր վանքերը մի–մի գործարան էին, ուր պատրաստում էին ազնիվ մագաղաթ, գրում էին, կազմում էին և բացի սրանից իրանց բոլոր հագուստներն ու կարասիքը իրանց ձեռքովն էին պատրաստում» (Աղայան 1992, 118):

Հասարակական կյանքի կազմակերպման գործում Աղայանը կարևորում էր յուրաքանչյուրի մասնակցությունը՝ փայլուն գիտակցելով, սակայն, որ հասարակության շերտավորման պարագայում, առավել մեծ պատասխանատվություն պետք է ցուցաբերի վերնախավը և այն մարդիկ, ովքեր իշխանություն ունեն՝ «հոգևոր և մարմնավոր կառավարությունը» (Աղայան 1963, 189):

Գրողը, մասնավորապես, «Անահիտ» հեքիաթի տիրույթն օգտագործում է առաջնորդների, հոգևորականների, վերնախավի այնպիսի մոդելներ կերտելու համար, որոնք պետք է օրինակի նշանակություն, արժեք ստանային:

Եվ Աղեքսենը, և Աղայանը կերտել են հերոսներ, որոնց բարոյական որակները չափվում են աշխատանքի նկատմամբ ունեցած վերաբերմունքով. աշխատանքի և աշխատասիրության օրինակներ են նաև բարձրաշխարհիկ, ազնվագարմ ծագումով որոշ կերպարներ, որոնք իրենց դիրքին անհարիր չեն համարում բանալ քաղաքի դարպասները ամպրոպային, անձրևոտ եղանակին («Արքայադուստրը սիսեռի հատիկի վրա», 1835), վարել տնտեսությունը («Ջրահարսը», 1837), անկոտրում աշխատել եղբայրների փրկության համար («Վայրի կարապետը», 1838) կամ ձեռք բերելով դիպակագործի հմտություններ, ազատվել մահվան ճիգաններից («Անահիտ», 1881):

Մեծանուն հեքիաթագիրները համեմուն են հեքիաթները կենցաղային մանրամասներով, բնության նկարագրություններով, ծանոթ աշխարհագրական տեղանունների ու ազգային հատկանիշների կիրառությամբ, որոնք ավելի հարագատ և ազգային են դարձնում ստեղծագործությունները՝ վերջիններս հեռացնելով հեքիաթի ժանրային ավանդույթներից և նկարագրական վերացականությունից. դանիացի հեղինակը հեքիաթներ արարելիս ոգեշնչվել է հայրենի բնության անսպառ գեղեցկությունից, որի գրկում էլ, իր իսկ խոստովանությամբ, գրել է հեքիաթների մեծ մասը. «...այն խաղաղ լճափներին, անտառների խորքում, կանաչ մարգագետիններում, որտեղ թփերի միջից թռչում և թռչկոտում էր փափանք, որտեղ հաստատ քայլերով զրոսնում էր արագիլը ...» (Бажаев 1957, 106–107):

Բնաշխարհի չքնաղ նկարագրություններով առանձնանում են նաև Աղայանի հեքիաթները: Բնության կենսարար լիցքերն են ստանում Պախրատուրը («Աստառի մանուկը»), Եղեգնուհին («Եղեգնուհի»), Արսենը («Ասլան–Բալա»), Այծատուրը («Այծատուր»), Արևամանուկն («Արևամանուկ») ու Վաչագանը («Անահիտ»): Աղայանը բնության մեջ տեսնում էր այն ներդաշնակությունը, որը ցանկանում էր հաստատված տեսնել նաև հասարակական կյանքում, թերևս սրանով է պայմանավորված բնության ներդաշնակությունը ճաշակած հերոսների առատությունը Աղայանի հեքիաթներում:

Աղայանի և Աղեքսենի հեքիաթները աչքի են ընկնում նաև կանացի ուժեղ կերպարներով, որոնց պասիվ դեր չի հատկացված. կինը և Աղեքսենի, և Աղայանի հեքիաթներում սկզբունքային է, կամային, մտավոր, բարոյական, ֆիզիկական որակներով չի գիջում տղամարդկանց՝ որոշ դեպքերում նույնիսկ գերազանցելով նրանց: Հեքիաթագիրները կերտել են կին կերպարներ, որոնք մեկուսացված չեն

ընտանիքում և անմասն չեն հասարակական կյանքից, ունեն ինքնուրույն որոշումներ կայացնելու, ինքնուրույն գործելու, սիրելի աշխատանքով զբաղվելու և ինքնահաստատման ազատությունը, ընտանիքին, հասարակությանը օգտակար լինելու բարձր առաքինությունը:

Գրական հեքիաթը, լինելով սինթետիկ ժանրաձև, ամփոփում է և ժողովրդական բանահյուսությանը բնորոշ գծեր, և գրական տարբեր ժանրերի տարրեր, որպես հեղինակային ստեղծագործություն, ունի բանահյուսական ժանրից տարբերվող մի շարք կառուցվածքային տարբերակիչ առանձնահատկություններ և կրում է գրողի գաղափարական, պոետիկական շեշտը, ինչն էլ թույլ է տալիս ժանրը դասել գրական մյուս ժանրաձևերի թվին, սակայն երբեք չհեռացնելով այն բուն ակունքից՝ բանահյուսությունից: Գրական հեքիաթի վերոնշյալ առանձնահատկությունները, ժանրային տարրորոշիչները, բնորոշ են նաև Աղայանի հեքիաթներին, քանի որ, ժողովրդական հեքիաթները գրական մշակման ենթարկելով, հեքիաթագիրը ստեղծել է գրական հեքիաթի նմուշներ, որոնք կառուցվածքային, կերպարային տարրերով ենթարկվել են գրողի կամքին, սակայն որոշ մշակումներում հեքիաթագիրն աշխատել է հարազատ մնալ քնագրին: Ինչպես նկատում է Լեոն, Աղայանը «վարվում է այդ նյութերի հետ թե իբրև ստեղծագործող և թե իբրև վերարտադրող, վերամշակող» (Լեո 1989, 310):

Կարծում ենք, Աղայանը հեքիաթագրության ոլորտում առաջնորդվել է նույն սկզբունքով, որը կիրառում էր նաև մանկավարժական աշխատությունների ստեղծման ընթացքում: Մանկավարժը դրանք գրում էր՝ ժամանակի առաջավոր մանկավարժության (Դ. Ուշինսկի, Դ. Պիսարև, Լ. Տոլստոյ, Ի. Պաուստև, Վ. Վոդովոզով և այլն) սկզբունքները իր և հայ նախորդների մանկավարժական փորձով խտացնելով (Գյուլնազարյան 1961, 45):

Նույն սկզբունքը Աղայանը կիրառում է ժողովրդական հեքիաթները գեղարվեստորեն մշակելիս. հետևելով հայ գրականության ավանդույթներին և համաշխարհային փորձին՝ գրողը բանահյուսական հեքիաթը ներմուծում է հայ նոր գրականություն, որպես գրական մի նոր ժանր. «Աղայանը գալիս է Աբովյանի տրադիցիաներից և անմիջական նախորդն է Հ. Թումանյանի», – նկատում է Դ. Դեմիրճյանը (Դեմիրճյան 1941, 47):

Անհրաժեշտություն է ծագում հաստատելու, որ Աղայանն ուշադիր է եղել գրական հեքիաթի ավանդույթների նկատմամբ, ինչը փաստում են Աղայանի՝ Աղեքսենի կենսագրական ակնարկին կցված միջամտություններն ու երկու ստեղծագործողների հեքիաթների համեմատական ուսումնասիրությունը:

Այսպիսով՝ Աղայանի հետաքրքրությունը Աղեքսենի հեքիաթների և անձի նկատմամբ, ինչպես նաև գաղափարական–ստեղծագործական ընդհանրությունները թույլ են տալիս համարել դրանք ազդեցության արդյունք՝ հաշվի առնելով համաշխարհային հեքիաթագրության մեջ Աղեքսենի հեքիաթների խորը հետքը: Ստեղծագործական ընդհանրությունները պայմանավորված են նաև բանահյուսության և ժողովրդական մտածողության հանդեպ գրողների տածած մեծ համակրանքով և դեմոկրատական գիծը պահպանելու հետևողականությամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աղայան Դ. (1962), *Երկերի ժողովածու*, հ.2, Երևան, Հայպետհրատ:
Աղայան Դ. (1963), *Երկերի ժողովածու*, հ.3, Երևան, Հայպետհրատ:

- Աղայան Ղ. (1992), *Հեքիաթներ*, Երևան:
 Աղերսեն Հ. Բ. (1882), *Սոխակ*, Թիֆլիս:
 Աղերսեն Հ. Բ. (1980), *Հեքիաթներ և գրույցներ*, Երևան:
 Գյուլնազարյան Խ. (1961), *Անկարկներ հայ մանկական գրականության պարմության*,
 Երևան:
 Դեմիրճյան Դ. (1941), Ղազարոս Աղայանի լեզուն // «Սովետական գրականություն»,
 համար 3, Երևան:
 Երեմյան Ս. (1920), *Ազգային դերեր*, Ա-շարք, 2-րդ տպագրություն, Վենետիկ:
 Լեո (1989), *Երկերի ժողովածու*, հ.9, Երևան, Խորհրդային գրող:
 Հակոբյան Մ. (1959), «Աղբյուր» ամսագիրը (Ընդհանուր ակնարկ) // *Հայկական*
ՍՍՏ Գիտությունների ակադեմիայի տեղեկագիր. հասարակական գիտություններ, N 2,
 Երևան:
 Հակոբջանյան Ա. (2007), *Ղազարոս Աղայան*, Ստեփանակերտ:
 Ղազարոս Աղայանի ժամանակակիցների հուշերում (1967), Երևան:
 Ղազարյան Ե. (1890), Մանկական ընթերցանություն // «Սուրճ», համար 3,
 Թիֆլիս:
 Брауде Л. (1987), *Ханс Кристиан Андерсен*. Ленинград.
 Вайдаев В. (1957), *Ганс Христиан Андерсен*. Москва.
 Гренбек, Бо. Г. Х. Андерсен. Жизнь. Творчество. Личность. <http://www.sky-art.com>.

Lusine Hayriyan

ANDERSEN'S TALES AND THEIR ARMENIAN RENDERINGS AS SEEN BY GHAZAROS AGHAYAN

Summary

At the beginning of the 1880s Ghazaros Aghayan commenced a new literary activity – writing fairy tales. Aghayan's talent in this new sphere leaned both on Armenian folklore traditions and on international experience. In his translation of Sisoyeva's essay *The Immortal Writer of Fairy Tales* the writer expresses his understanding of the fairy tale as a genre and his own interpretation of Andersen's tales. Aghayan also comments upon various Armenian translations of Andersen's major works. In this brief article we aim at revealing common features shared by the Armenian and Danish writers. Like many other talented men of letters Aghayan was deeply influenced by Andersen's art of fairy tale writing. The major commonality these authors shared was the deep love they had for the lore of their native lands.

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ NEW PUBLICATIONS

- Հարությունյան Ս.Բ. (2010), *Բանագիտական ակնարկներ*, Երևան, ՀՀ ԳԱԱ
 Գիտություն հրատ.:
 Սարգսյան Ա. Շ. (2010), *Պարույր Սևակը և ժողովրդական բանահյուսությունը*,
 Երևան, ՀՀ ԳԱԱ Գիտություն հրատ.:
 Меликян, Гоар (2011). *Образ сказителя в фольклорном и литературном тексте*.
 Ереван: Запгак-97.
 Bealoideas (2010). Iris an Chumainn le Bealoideas Eireann. The Journal of the Folklore
 of Ireland Society. N 78.
 Bealoideas (2011). Iris an Chumainn le Bealoideas Eireann. The Journal of the Folklore of
 Ireland Society. N 79.
 Enzyklopädie des Märchens Handwörterbuch zur historischen und vergleichenden
 Erzählforschung (2010). Band 13. Suchen – Verführung.
 Bottigheimer, Ruth B. (2012). *Fairy Tales Framed: Early Forewords, Afterwords, and*
Critical Words. State University of New York Press.
